*Լրամշակված նախագիծ*
*Երկրորդ ընթերցում*
*Կ-927-26.09.2024-ՊԻ-011*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** 2016 թվականի մայիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 4-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «թեկնածուի (կուսակցության)» բառերը և կետադրական նշանը փոխարինել «թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի)» բառերով և կետադրական նշաններով,

2) լրացնել նոր՝ 2-րդ մաս.

«2. Ոչ ոք չի կարող հարկադրանքի որևէ եղանակով ընտրողից բացահայտել, թե ինչպես է ընտրողը մտադիր քվեարկելու կամ ինչպես է քվեարկել:»:

**Հոդված 2**. Օրենսգրքի 8-րդ հոդվածի՝

1) 5-րդ մասի առաջին և երկրորդ պարբերությունների «5 օրվա» թիվը և բառը փոխարինել «10 օրվա» թվով և բառով,

2) 5-րդ մասի չորրորդ պարբերությունը «ներկայացման կարգը» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև հայտարարագրում ներառված՝ հրապարակման ոչ ենթական տվյալների ցանկը» կետադրական նշաններով և  բառերով,

3) 6-րդ մասը «համացանցային կայքում» բառերից հետո լրացնել «՝ բաց տվյալների ձևաչափով» կետադրական նշանով և բառերով,

4) 7-րդ մասի առաջին և երկրորդ նախադասությունները «ըստ գտնվելու վայրի ընտրողների» բառերից հետո լրացնել «, նախընտրած վայրի ընտրողների» կետադրական նշաններով և  բառերով,

5) 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ․

«8. Ընտրողները սույն օրենսգրքով սահմանված կարգով տեղեկացվում են ընտրական հանձնաժողովների կազմերի, գտնվելու վայրերի, աշխատաժամերի, ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունների վերաբերյալ դիմումներ տալու ժամկետների, թեկնածուների առաջադրման և գրանցման ժամկետների, քվեարկության օրվա, տեղի, ժամանակի, քվեարկության և ընտրությունների արդյունքների մասին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրություն նշանակելու վերաբերյալ հրամանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում ընտրություն նշանակվելու վերջնաժամկետի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում հրապարակում է ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում՝ նաև այն համայնքների ցանկը, որտեղ անցկացվելու են ընտրությունները:

Սույն մասում սահմանված ժամկետներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հանրային տեսալսողական հեռարձակողի և հանրային լսողական հեռարձակողի եթերով հրապարակում է տեղեկատվություն՝ ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունների վերաբերյալ դիմումներ ներկայացնելու ժամկետների, թեկնածուների առաջադրման և գրանցման ժամկետների, ինչպես նաև քվեարկության օրվա և ժամանակի մասին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հանրային տեսալսողական հեռարձակողի և հանրային լսողական հեռարձակողի եթերով ընտրողների համար հրապարակում է նաև տեղեկատվություն իրենց ընտրական տեղամասի համարի և տեղամասային կենտրոնի հասցեի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու միջոցի և ձևի վերաբերյալ:»,

6) 9-րդ մասի երկրորդ պարբերության «հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության ուղիղ եթերով» բառերը փոխարինել «հանրային տեսալսողական հեռարձակողի և հանրային լսողական հեռարձակողի ուղիղ եթերով» բառերով,

7) 11-րդ մասի առաջին նախադասության վերջում «հանձնարարությամբ» բառից հետո լրացնել «, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչները՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի գրավոր հանձնարարությամբ» կետադրական նշանները և բառերը,

8) 11.1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«11.1. Ազգային ժողովի ընտրությունների, ինչպես նաև համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների ժամանակ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով անցկացված մրցույթի արդյունքում ընտրված մասնագիտացված կազմակերպությունն իրականացնում է ընտրական տեղամասերից քվեարկության ընթացքի, քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նիստերի տեսանկարահանում և միաժամանակյա համացանցային հեռարձակում՝ ուղիղ ժամանակային ռեժիմում՝ հատուկ ստեղծված կայքի (կայքերի) միջոցով: Հեռարձակման ժամանակ տեսագրության վրա պետք է տեսանելի լինեն իրական ժամանակը և տեղամասային կենտրոնի համարը, իսկ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նիստերի դեպքում իրական ժամանակը և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի համարը:

Տեսանկարահանումը պետք է իրականացվի անշարժ տեսախցիկների միջոցով: Տեսախցիկների տեսադաշտում պետք է լինեն քվեատուփը, ընտրողների գրանցման, քվեարկության ծրարների ու քվեաթերթիկների հատկացման և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացները: Տեսանկարահանումը և համացանցային հեռարձակումը պետք է իրականացվեն սույն օրենսգրքով սահմանված՝ քվեարկության գաղտնիության սկզբունքի պահպանմամբ:

Սահմանված կարգով ընտրված մասնագիտացված կազմակերպության կողմից նաև տեսաձայնագրվում և հեռարձակվում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների՝ արդյունքների ամփոփման նիստերը և վերահաշվարկը: Հեռարձակման ժամանակ տեսագրության վրա պետք է տեսանելի լինեն իրական ժամանակը և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի համարը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մասնագիտացված կազմակերպության հետ կնքում է համապատասխան պայմանագիր, որով սահմանվում են նաև սույն մասով նախատեսված կարգով ընտրական տեղամասերից քվեարկության ընթացքի, քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նիստերի և վերահաշվարկի տեսանկարահանման (տեսաձայնագրման) և միաժամանակյա համացանցային հեռարձակման կարգն ու պայմանները, ինչպես նաև տեղամասերի ցանկը:

Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողը և ընտրական հանձնաժողովները պարտավոր են աջակցել մասնագիտացված կազմակերպությանը տեսանկարահանման (տեսաձայնագրման) և համացանցային հեռարձակման գործընթացը կազմակերպելու հարցում, սակայն պատասխանատվություն չեն կրում գործընթացի կազմակերպման և դրա որակի համար:

Մասնագիտացված կազմակերպության կողմից ընտրական տեղամասում և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում իրականացված

տեսանկարահանված (տեսաձայնագրված) նյութերը հասանելի են մնում մասնագիտացված կազմակերպության հատուկ ստեղծած կայքում մինչև ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումը: Կազմակերպության հետ կնքված պայմանագրով կարող է նախատեսվել ավելի երկար ժամկետ: Տեսանկարահանված (տեսաձայնագրված) նյութերի պատճենները գրավոր դիմումի հիման վրա կարող են տրամադրվել ընտրական հանձնաժողովներին, ընտրություններին մասնակցող թեկնածուներին, կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) և դիտորդական առաքելություն իրականացրած կազմակերպություններին՝ ընտրական իրավունքի պաշտպանության շրջանակներում՝ պատճենահանման ինքնարժեքի վճարման պայմանով: Դիմումը կարող է ներկայացվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովին՝ մինչև ընտրական հանձնաժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման վիճարկման համար սահմանված ժամկետի ավարտը, իսկ այդ որոշման վիճարկման դեպքում՝ մինչև վերջնական դատական ակտի ընդունումը: Դիմումը պետք է ներառի ընտրության անվանումը և համապատասխանաբար այն ընտրական տեղամասի համարը կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի համարը, որի տեսանկարահանված (տեսաձայնագրված) նյութերից պահանջվում է պատճենը, և դիմումի հետ պետք է ներկայացվի մասնագիտացված կազմակերպության սահմանած պահանջները բավարարող էլեկտրոնային կրիչ:

Տեսանկարահանված (տեսաձայնագրված) նյութերն արխիվացվում և պահպանվում են քվեարկությունից հետո հինգ տարի ժամկետով: Տեսանկարահանված (տեսաձայնագրված) նյութերի արտահանման, իրավասու մարմնին հանձնման և արխիվացման կարգը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:»,

9) 13-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 3**. Օրենսգրքի 8.1-ին հոդվածում՝

1) 2-րդ մասի առաջին նախադասությունից հանել «հասարակական» և «մշտական» բառերը,

2) 2-րդ մասի առաջին նախադասությունը «կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները)» բառերից և կետադրական նշանից հետո լրացնել «, մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուները» կետադրական նշանով և բառերով,

3) 2-րդ մասի երկրորդ նախադասությունից հանել «Մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների» բառերը,

4) 3-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 4**. Օրենսգրքի 9-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել նոր երրորդ նախադասությամբ.

«Ազգային ժողովի հերթական ընտրությունների և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունների դեպքում լիազոր մարմինն ընտրողների ռեգիստրը՝ ըստ տեղամասերի, քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 41 օր և 7 օր առաջ, իսկ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դեպքում՝ 21 օր և 7 օր առաջ էլեկտրոնային եղանակով ներկայացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ հանձնաժողովի համացանցային կայքում որոնման հնարավորությամբ տեղադրելու համար:»:

**Հոդված 5.** Օրենսգրքի 10-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«3. Ազգային ժողովի ընտրությունների դեպքում այլ համայնքի կամ նույն համայնքի այլ բնակավայրի հաշվառում ունեցող ընտրողները, իսկ համամասնական ընտրակարգով անցկացվող՝ համայնքի ավագանու ընտրությունների դեպքում նույն համայնքի այլ բնակավայրի հաշվառում ունեցող ընտրողները քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ՝ մինչև ժամը 14:00-ն, լիազոր մարմնի կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավարին

(սույն հոդվածում այսուհետ միասին՝ լիազոր մարմին) ներկայացնում են դիմում՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ավելացվելու մասին՝ նշելով քվեարկության օրը գտնվելու վայրի հասցեն: Լիազոր մարմինը դիմումը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, ընտրողի տվյալները ժամանակավորապես հանում է ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից և ավելացնում ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում և ծանուցում է դիմողին այդ մասին: Ծանուցման մեջ նշվում է գտնվելու վայրի ընտրական տեղամասի համարը և տեղամասային կենտրոնի հասցեն: Դիմումը կարող է ներկայացվել էլեկտրոնային կամ թղթային եղանակով, էլեկտրոնային դիմումներն ապահովվում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Այլ անձի անունից դիմում ներկայացնելու դեպքում դիմումատուն պարտավոր է ներկայացնել նոտարական վավերացմամբ հաստատված լիազորագիր:»,

2) 3.1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3.1. Ընտրությունների ժամանակ իրենց տեղամասային կենտրոնում քվեարկելու անհնարինության դեպքում տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողները քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ՝ մինչև ժամը 14:00-ն, կարող են լիազոր մարմին դիմում ներկայացնել՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և իրենց նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին՝ նշելով տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձանց համար մատչելի ընտրական տեղամասի համարը: Լիազոր մարմինը դիմումը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, ընտրողի տվյալները ժամանակավորապես հանում է ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից և ավելացնում նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում և ծանուցում է դիմողին այդ մասին: Ծանուցման մեջ նշվում է նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասի համարը և տեղամասային կենտրոնի հասցեն:

Դիմումը կարող է ներկայացվել էլեկտրոնային կամ թղթային եղանակով: Տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձի անունից դիմում ներկայացնելու դեպքում դիմումատուն պարտավոր է ներկայացնել նոտարական վավերացմամբ հաստատված լիազորագիր: Հաշմանդամության հիմքով տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձանց էլեկտրոնային դիմումները կարող են ապահովվել ստորագրության՝ դիմողի համար ընդունելի ցանկացած եղանակով, իսկ տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող այլ անձանց էլեկտրոնային դիմումներն ապահովվում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Հաշմանդամության հիմքով տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձանց էլեկտրոնային թվային ստորագրությամբ չապահոված էլեկտրոնային դիմումներին կից ներկայացվում է նաև անձի հաշմանդամություն ունենալը հաստատող փաստաթուղթը կամ դրա պատճենը:

Տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողների համար մատչելի ընտրական տեղամասերի ցանկը հրապարակում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 40 օր առաջ, Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դեպքում՝ 20 օր առաջ:»,

3) 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«4. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ, ինչպես նաև համամասնական ընտրակարգով անցկացվող՝ համայնքի ավագանու ընտրությունների ժամանակ տվյալ համայնքում ընտրելու իրավունք ունեցող տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները և տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետները կարող են ընդգրկվել այն ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում, որտեղ նշանակված են տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ կամ տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետներ՝ ժամանակավորապես հանվելով ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից: Տեղամասային

ընտրական հանձնաժողովների անդամները և տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետները ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և  ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակներում ընդգրկելու մասին դիմում լիազոր մարմին կարող է ներկայացվել քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ՝ մինչև ժամը 14.00-ն՝ նշելով այն ընտրական տեղամասի համարը, որտեղ նշանակված են տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ կամ տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետներ: Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներին ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակներում ընդգրկելու մասին դիմումը լիազոր մարմին կարող է ներկայացվել նաև նրան նշանակող կուսակցության կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից, իսկ տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետների դեպքում՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից՝ համապատասխանաբար՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի, տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետի դիմումի հիման վրա, որը պետք է ներկայացվի քվեարկության օրվանից առնվազն 14 օր առաջ: Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների և տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետների անունից դիմում կարող են ներկայացնելու նաև այլ անձինք՝ ներկայացնելով նոտարական վավերացմամբ հաստատված լիազորագիր: Սույն մասում նշված դիմումները կարող են ներկայացվել էլեկտրոնային կամ թղթային եղանակով, էլեկտրոնային դիմումներն ապահովվում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Լիազոր մարմինը դիմումը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, ընտրողի տվյալները ժամանակավորապես հանում է ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից և ավելացնում ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում և ծանուցում է դիմողին այդ մասին: Ծանուցման մեջ

նշվում է գտնվելու վայրի ընտրական տեղամասի համարը և տեղամասային կենտրոնի հասցեն:»,

4) 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«5. Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող ընտրողներն Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ քվեարկությանը մասնակցելու համար քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ՝ մինչև ժամը 14:00-ն, լիազոր մարմին ներկայացնում են դիմում՝ ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու մասին՝ նշելով քվեարկության օրը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վայրի հասցեն: Լիազոր մարմինը դիմումը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում ընտրողին ընդգրկում է քվեարկության օրը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում և ծանուցում է դիմողին այդ մասին: Ծանուցման մեջ նշվում է գտնվելու վայրի ընտրական տեղամասի համարը և տեղամասային կենտրոնի հասցեն: Դիմումը կարող է ներկայացվել էլեկտրոնային կամ թղթային եղանակով, էլեկտրոնային դիմումներն ապահովվում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող ընտրողի անունից դիմում ներկայացնելու դեպքում դիմումատուն պարտավոր է ներկայացնել նոտարական վավերացմամբ հաստատված լիազորագիր:»,

5) լրացնել նոր՝ 5.1-ին մաս.

«5.1. Սույն հոդվածի 3-րդ, 3.1-ին, 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված դեպքերում ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից հանվելու և ըստ գտնվելու կամ նախընտրած վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ավելացվելու, ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու վերաբերյալ ծանուցման ձևերը և կարգը, ինչպես նաև ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու, ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու մասին դիմումների ձևը և էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու կարգը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Սույն հոդվածի 3-րդ, 3.1-ին, 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված դեպքերում ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից հանվելու և ըստ գտնվելու կամ նախընտրած վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ավելացվելու, ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու դիմումները մերժելու դեպքում լիազոր մարմինը եռօրյա ժամկետում ծանուցմամբ հայտնում է համապատասխան դիմումը մերժված լինելու մասին:»,

6) 7-րդ մասի առաջին պարբերությունում «7» թիվը փոխարինել «12» թվով,

7) 9-րդ մասում «10 օր և 6 օր առաջ, իսկ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դեպքում՝ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 30 օր, 10 օր և 6» թվերը և բառերը փոխարինել «15 օր և 9 օր առաջ, իսկ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դեպքում՝ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 30 օր, 15 օր և 9» թվերով և բառերով,

8) 11-րդ մասում «10 օր, 5 օր և 3 օր» թվերը և բառերը փոխարինել «15 օր և 5 օր» թվերով և բառերով:

**Հոդված 6.** Օրենսգրքի 11-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «ըստ գտնվելու վայրի ընտրողների» բառերից հետո լրացնել «, նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասում ընդգրկված ընտրողների» կետադրական նշանով և բառերով,

2) 1-ին մասը լրացնել նոր՝ երրորդ նախադասությունով՝

«Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունների ժամանակ տեղամասի ընտրողների ցուցակում համարակալման շարունակականությամբ ըստ առանձին բաժինների ներառվում են նաև ըստ գտնվելու վայրի ընտրողների և նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասում ընդգրկված ընտրողների ցուցակները, իսկ մեծամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ղեկավարի ընտրությունների ժամանակ տեղամասի ընտրողների ցուցակում համարակալման շարունակականությամբ

առանձին բաժնով ներառվում է նաև ըստ նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասում ընդգրկված ընտրողների ցուցակը:»,

3) 4-րդ մասում «1200» թիվը՝ իր բոլոր հոլովաձևերով փոխարինել «1100» թվով:

**Հոդված 7.** Օրենսգրքի 12-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «առաջ, իսկ» բառերից հետո լրացնել «Ազգային ժողովի» բառերով,

2) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրություն նշանակելու վերաբերյալ հրամանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ հնգօրյա ժամկետում լիազոր մարմինը Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրում է տեղեկանք ընտրողների թվի վերաբերյալ՝ ըստ մարզերի և Երևան քաղաքի վարչական շրջանների:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում՝ ընտրություն նշանակելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, լիազոր մարմինը Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրում է տեղեկանք ընտրողների թվի վերաբերյալ՝ ըստ համայնքների, իսկ Երևանի ավագանու ընտրությունների դեպքում՝ ըստ Երևան քաղաքի վարչական շրջանների:

Լիազոր մարմինն ընտրական տեղամասերը կազմավորելուց հետո՝ երկօրյա ժամկետում, ինչպես նաև քվեարկության օրվանից 15 օր և 8 օր առաջ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրում է տեղեկանք ընտրողների թվի վերաբերյալ՝ Ազգային ժողովի ընտրությունների դեպքում՝ ըստ մարզերի (Երևան քաղաքի վարչական շրջանների) և ընտրական տեղամասերի, իսկ Երևանի ավագանու ընտրությունների դեպքում՝ ըստ Երևան քաղաքի վարչական շրջանների և ընտրական տեղամասերի:

Տեղական ինքնակառավարման մարմինների (բացառությամբ Երևանի ավագանու) ընտրությունների ժամանակ լիազոր մարմինը ընտրական

տեղամասերը կազմավորելուց հետո՝ երկօրյա ժամկետում, ինչպես նաև քվեարկության օրվանից 15 օր և 8 օր առաջ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին տրամադրում է տեղեկանք ընտրողների թվի վերաբերյալ՝ ըստ համայնքների և ընտրական տեղամասերի:

Սույն օրենսգրքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ էլեկտրոնային եղանակով կազմված ընտրողների ցուցակները լիազոր մարմինը Կենտրոնական ընտրական հանձնաժողովին է տրամադրում քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 8 օր առաջ:

Լիազոր մարմինը սույն մասում նշված տեղեկանքները ներկայացնում է էլեկտրոնային եղանակով: Նշված տեղեկանքները հրապարակվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:»:

**Հոդված 8.** Օրենսգրքի 13-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Ընտրողների նախնական ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, քվեարկության օրվանից 40 օր առաջ, Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դեպքում՝ 20 օր առաջ, իսկ ընտրողների վերջնական ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, քվեարկության օրվանից 7 օր առաջ տեղադրվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության համացանցային կայքերում՝ ներբեռնելու հնարավորությամբ:»,

2) 3-րդ մասը «առաջ, իսկ» բառերից հետո լրացնել «Ազգային ժողովի» բառերով,

3) 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«7. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրված ցուցակները հրապարակվում են հանձնաժողովի համացանցային կայքում սույն օրենսգրքի 73-րդ հոդվածով

սահմանված կարգով և ժամկետում, որոնք պահպանվում են մինչև քվեարկության արդյունքների ամփոփման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի ավարտը, իսկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը դատական կարգով վիճարկելու դեպքում՝ մինչև դատական ակտի ուժի մեջ մտնելը: Նշված ժամկետների ավարտից հետո ընտրողների ստորագրված ցուցակները կամ դրանցից քաղվածքներ կարող են տրամադրվել բացառապես ընտրական գործընթացներին առնչվող քրեական վարույթի շրջանակներում: Ընտրողների ստորագրված ցուցակների էլեկտրոնային տարբերակը Կենտրոնական ընտրական հանձնաժողովում պահպանվում է քվեարկությունից հետո հինգ տարի ժամկետով: Քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրված ցուցակները պահպանության են հանձնվում Հայաստանի Հանրապետության պետական արխիվ՝ սահմանված կարգով պահպանելու համար:»:

**Հոդված 9**. Օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասում «14» թիվը փոխարինել «12» թվով:

**Հոդված 10**. Օրենսգրքի 16-րդ հոդվածի 3-րդ մասում՝

1) առաջին նախադասությունում «2000» թիվը փոխարինել «2200» թվով,

2) երկրորդ նախադասությունը «10-րդ հոդվածով նախատեսված դեպքերում» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ՝ համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի առաջարկությամբ, եթե ընտրական տեղամասի ընտրողների առավելագույն թվի փոփոխությունն անհրաժեշտ է սույն օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխանող տեղամասային կենտրոնի և քվեարկության սենյակի ընտրության նպատակով» կետադրական նշանով և բառերով:

**Հոդված 11.** Օրենսգրքի 17-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Տեղամասային կենտրոնը պետք է հնարավորին չափ մոտ լինի ընտրական տեղամասում գտնվող բնակելի շենքերին և տներին: Տեղամասային կենտրոնը պետք է ընտրվի այնպես, որ հնարավորինս ապահովվի հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող և տեսողության խնդիր ունեցող անձանց անխոչընդոտ մուտքն ու ելքը և տեղաշարժը տեղամասային կենտրոնում: Տեղամասային կենտրոնում քվեարկության սենյակը պետք է ընտրվի այնպես, որ ապահովվեն քվեարկության բնականոն ընթացքը և հանձնաժողովի բնականոն աշխատանքը: Տեղամասային կենտրոնի գտնվելու վայրը և քվեարկության սենյակը սահմանելու և քվեարկության սենյակի՝ սույն օրենսգրքի 57-րդ հոդվածով սահմանված պահանջներին համապատասխան կահավորման համար պատասխանատու է համայնքի ղեկավարը: Սույն գործառույթը համայնքի ղեկավարի համար սեփական լիազորություն է:»,

2) 5-րդ մասի «տեղաշարժման դժվարություններ և տեսողության խնդիրներ ունեցող» բառերը փոխարինել «հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող և տեսողության խնդիր ունեցող» բառերով և կետադրական նշաններով:

**Հոդված 12**. Օրենսգրքի 18-րդ հոդվածի 2.1-ին մասի երրորդ նախադասությունում «մինչև քվեարկության օրը» բառերը փոխարինել «քվեարկության օրվանից 2 օր առաջ» բառերով:

**Հոդված 13.** Օրենսգրքի 19-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում չորրորդ նախադասությունում «տվյալ համայնքում» բառերը փոխարինել «տվյալ բնակավայրում» բառերով,

2) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Ազգային ժողովի հերթական ընտրությունների քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 70 օր առաջ, իսկ արտահերթ ընտրությունների դեպքում՝ ոչ ուշ, քան

25 օր առաջ, համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ, մարզպետը, Երևանում՝ Երևանի քաղաքապետը Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացնում այն դահլիճների և այլ շինությունների ցանկը, որոնք ընտրություններին մասնակցող կուսակցություններին տրամադրվում են անվճար: Այդ ցանկը տեղադրվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Տեղեկությունները ներկայացվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով:»:

**Հոդված 14.** Օրենսգրքի 20-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «ռադիոյի և հեռուստատեսության» բառերը փոխարինել «տեսալսողական մեդիածառայություն մատուցողների» բառերով,

2) 2-րդ մասի «հանրային ռադիոյից և հանրային հեռուստատեսությունից» բառերը փոխարինել «հանրային հեռարձակողների տեսալսողական հաղորդումներից» բառերով,

3) 3-րդ մասում «հանրային ռադիոն և հանրային հեռուստատեսությունը» բառերն իրենց բոլոր հոլովաձևերով փոխարինել «հանրային հեռարձակողները» բառերով, ինչպես նաև «ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների» բառերը փոխարինել «տեսալսողական մեդիածառայություն մատուցողների» բառերով,

4) 4-րդ մասի առաջին պարբերության «Ազգային ժողովի և 70 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ հանրային ռադիոն և հանրային հեռուստատեսությունը» բառերը փոխարինել «Ազգային ժողովի, Երևանի ավագանու և մարզկենտրոն ընդգրկող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ հանրային տեսալսողական և հանրային լսողական հեռարձակողները» կետադրական նշանով և բառերով,

5) 4-րդ մասի երկրորդ պարբերության «և 70 000-ից ավելի ընտրող ունեցող» բառերը փոխարինել «, Երևանի ավագանու և մարզկենտրոն ընդգրկող» կետադրական նշանով և բառերով,

6) 4-րդ մասի չորրորդ պարբերության «70 000-ից ավելի ընտրող ունեցող» բառերը փոխարինել «Մարզկենտրոն ընդգրկող» բառերով,

7) 4-րդ մասի հինգերորդ պարբերության «Հանրային ռադիոն և հանրային հեռուստաընկերությունը» բառերը փոխարինել «Հանրային տեսալսողական և հանրային լսողական հեռարձակողները» բառերով,

8) 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Ազգային ժողովի ընտրություններ նշանակելու մասին Հանրապետության նախագահի հրամանագիրն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 5 օր հետո, իսկ Երևանի ավագանու և մարզկենտրոն ընդգրկող համայնքների ավագանիների ընտրությունների ժամանակ ոչ ուշ, քան սույն օրենսգրքով սահմանված ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման ժամկետի հաշվարկի սկզբից 5 օր առաջ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը հրապարակում է հանրային տեսալսողական հեռարձակողի և հանրային լսողական հեռարձակողի վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը, որը չի կարող գերազանցել ընտրությունների նշանակմանը նախորդող վերջին վեց ամսվա համար առևտրային գովազդի միջին արժեքի 50 տոկոսը, և որը մինչև նախընտրական քարոզչության ավարտը չի կարող փոփոխվել:»,

9) 6-րդ մասի առաջին պարբերության «հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների» բառերը փոխարինել «տեսալսողական մեդիածառայություն մատուցողների» բառերով,

10) 6-րդ մասի երկրորդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) նախընտրական քարոզչություն իրականացնելու համար եթերաժամ տրամադրող մասնավոր հիմունքներով

հեռարձակում իրականացնող տեսալսողական մեդիածառայություն մատուցողները Ազգային ժողովի ընտրություններ նշանակելու մասին Հանրապետության նախագահի հրամանագիրն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 5 օր հետո, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ոչ ուշ, քան սույն օրենսգրքով սահմանված թեկնածուների առաջադրման, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման ժամկետի հաշվարկի սկզբից 5 օր առաջ իրենց եթերով հրապարակում են իրենց վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը, որը չի կարող գերազանցել ընտրությունների նշանակմանը նախորդող վերջին վեց ամսվա համար առևտրային գովազդի միջին արժեքը, և որը մինչև նախընտրական քարոզչության ավարտը չի կարող փոփոխվել:»,

11) 7-րդ մասում «ռադիոհաղորդումները և հեռուստահաղորդումներն» բառերը փոխարինել «տեսալսողական հաղորդումներն» բառերով,

12) 8-րդ մասը ուժը կորցրած ճանաչել,

13) 9-րդ մասում «ռադիոհաղորդումները և հեռուստահաղորդումները հեռուստառադիոհեռարձակում իրականացնելիս» բառերը փոխարինել «տեսալսողական հաղորդումները՝ հեռարձակում իրականացնելիս» բառերով, ինչպես նաև «մինչև ընտրվող մարմնի լիազորությունների ստանձնման օրը» բառերը փոխարինել «մինչև ընտրվող մարմնի լիազորությունների ստանձնման օրը, բայց ոչ պակաս, քան երեք ամիսը» բառերով,

14) 10-րդ մասում «հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների» բառերը փոխարինել «տեսալսողական մեդիածառայություն մատուցողների» բառերով,

15) 11-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«11. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը Ազգային ժողովի, Երևանի ավագանու և մարզկենտրոն ընդգրկող համայնքների ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում իրականացնում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից

ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար հավասար պայմանների ապահովման գնահատման մշտադիտարկում (մոնիտորինգ): Այդ նպատակով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը մշակում, Ազգային ժողովի հերթական ընտրությունների ժամանակ ընտրություն նշանակելու մասին Հանրապետության նախագահի հրամանագիրն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 7 օր հետո, Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դեպքում՝ Հանրապետության նախագահի հրամանագիրն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 2 օր հետո, իսկ համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ ոչ ուշ, քան սույն օրենսգրքով սահմանված ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) գրանցման ժամկետից 5 օր առաջ հրապարակում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը:»,

16) 12-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«12. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը Ազգային ժողովի, Երևանի ավագանու և մարզկենտրոն ընդգրկող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ նախընտրական քարոզչությունը սկսվելուց հետո՝ 10-րդ, Ազգային ժողովի, Երևանի ավագանու և մարզկենտրոն ընդգրկող համայնքների ավագանու հերթական ընտրությունների ժամանակ՝ նաև 20-րդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար՝ սույն օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 2 օր առաջ, հրապարակում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում սույն հոդվածի պահանջների կատարման մշտադիտարկման արդյունքները և հանձնաժողովի եզրակացությունը՝

տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ:

Ազգային ժողովի ընտրության երկրորդ փուլ անցկացվելու դեպքում սույն մասով նշված եզրակացությունը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը հրապարակում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում ընտրության երկրորդ փուլի արդյունքների ամփոփման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետից 2 օր առաջ:»,

17) 14-րդ մասը «անվճար» բառից հետո լրացնել «և վճարովի» բառերով:

**Հոդված 15.** Օրենսգրքի 20.1-ին հոդվածում ՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Համացանցում գրանցված դոմեյն, հոսթինգ ունեցող զանգվածային լրատվության միջոցը նախընտրական քարոզչության ժամանակահատվածում անվճար կամ վճարովի քարոզչություն իրականացնելիս թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար ապահովում են ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ:»,

2) 2-րդ մասից հանել «գովազդային» բառը:

**Հոդված 16.** Օրենսգրքի 21-րդ հոդվածում՝

1) Ամբողջ տեքստում «կուսակցություններ» բառերից հետո լրացնել «(կուսակցությունների դաշինքներ)» բառերը և կետադրական նշանը՝ իր բոլոր հոլովաձևերով,

2) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Հանրության համար տեսանելի քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են տեղադրվել միայն՝

1) համայնքի ղեկավարի կողմից հատուկ այդ նպատակով առանձնացված վահանակների վրա,

2) վճարովի գովազդային վահանակների վրա,

3) ընտրական շտաբների վրա,

4) սույն հոդվածի 2. 1-ին մասում նշված տեղերում:»,

3) Լրացնել նոր՝ 2.1-ին մաս.

«2.1. Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի վրա քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են տեղադրվել միայն արտաքին պատերին տեղադրված վճարովի գովազդային վահանակների վրա:

Արգելվում է քարոզչական պաստառների, քարոզչական տպագիր և այլ նյութերի տեղադրումը հանրակրթական դպրոցների, հասարակական սննդի և առևտրի օբյեկտների, վերելակների, հասարակական տրանսպորտի և տաքսի ավտոմոբիլների վրա կամ դրանց ներսում:

Քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են առանց սահմանափակման տեղադրվել կամ օգտագործվել նախընտրական ժողովներ, ընտրողների հետ հանդիպումներ և նախընտրական քարոզչության հետ կապված այլ միջոցառումներ անցկացնելու ժամանակ՝ այդ միջոցառումների անցկացման վայրում: Այդ միջոցառումների ժամանակ տեղադրված քարոզչական պաստառը, քարոզչական տպագիր և այլ նյութերը միջոցառման ավարտից հետո հանվում են համապատասխան թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքներ) կողմից:

Նախընտրական քարոզչություն իրականացնելու իրավունք ունեցող ֆիզիկական անձինք առանց սահմանափակման կարող են կրել քարոզչական նյութեր, տեղադրել դրանք իրենց պատկանող կամ իրենց տիրապետման ներքո գտնվող շենքերի, շինությունների վրա կամ դրանց ներսում, տրանսպորտային միջոցների վրա կամ դրանց ներսում, բացառությամբ սույն հոդվածի 2.1-ին մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի:»,

4) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Նախընտրական քարոզչությունը սկսելուց 10 օր առաջ համայնքի ղեկավարը պարտավոր է համայնքի տարածքում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար անվճար վահանակներ

առանձնացնել՝ սահմանելով այնպիսի պայմաններ, որոնք համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար կապահովեն հավասար հնարավորություններ (հավասար մակերես): Սույն լիազորությունը համայնքի ղեկավարի համար սեփական լիազորություն է:»:

5) լրացնել նոր՝ 3.1-ին մաս.

«3.1. Քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար համայնքի ղեկավարի կողմից առանձնացված վահանակները պետք է լինեն կիրառելի և տեղակայված լինեն հանրության համար տեսանելի ու հնարավորինս բանուկ վայրերում: Համայնքի ղեկավարը քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար համայնքի տարածքում առանձնացնում է առնվազն, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների), իսկ մեծամասնական ընտրակարգի դեպքում համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների թվին հավասար թվով վահանակներ (մակերես)՝ ապահովելով հավասար հնարավորություններ:»:

6) 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար անվճար վահանակներ առանձնացնելու մասին որոշումը 4 000 և ավելի ընտրող ունեցող համայնքի դեպքում համայնքի ղեկավարը ներկայացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով որոշումն ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում:»:

7) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպությունները 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում և հասարակական տրանսպորտի կանգառներում տեղակայված վահանակներն ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների

դաշինքներին) տրամադրելու համար ընտրությունները նշանակվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում, Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են տեղեկատվություն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) տրամադրվող վահանակների քանակի, մակերեսների, դրանց գտնվելու վայրերի և վարձավճարների վերաբերյալ: Տեղեկությունները տրամադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով: Արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպությունները կարող են նշել այն համայնքները, որտեղ անցկացվող ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև ցանկանում են բաշխել արտաքին գովազդային վահանակները: Այն վահանակները, որոնք բացակայում են Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացված ցանկում, հետագայում չեն կարող տրամադրվել ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին): Կենտրոնական ընտրական հանձնաժողովն այս տեղեկությունները տեղադրում է հանձնաժողովի համացանցային կայքում: Ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման փաստաթղթերը ներկայացնելու համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետներում ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են հայտեր՝ այդ գովազդային վահանակներում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ձևով: Այս տեղեկությունների հիման վրա արտաքին գովազդային վահանակներում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու իրավունքն ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև բաշխվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման

հիման վրա ընտրություններին մասնակցող կուսակցությունն (կուսակցությունների դաշինքը) արտաքին գովազդային վահանակը տնօրինող կազմակերպության հետ կնքում է պայմանագիր՝ քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութ տեղադրելու համար: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կողմից պայմանագիր չկնքվելու դեպքում գովազդային վահանակը տնօրինողն ազատ է կնքելու այլ պայմանագիր՝ այդ վահանակն այլ նպատակներով օգտագործելու: Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում և հասարակական տրանսպորտի կանգառներում տեղակայված քարոզչական պաստառը կարող է տեղադրվել միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նախապես բաշխված արտաքին գովազդային վահանակում:

Լուսադիոդային գովազդային վահանակներ տնօրինող կազմակերպությունները կարող են դրանք տրամադրել ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) նախընտրական քարոզչական նյութեր տեղադրելու համար, եթե կարողանում են ապահովել հավասար հնարավորություններ ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար:

Տեղադրված քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութերը քվեարկության օրը և դրա նախորդ օրը կարող են մնալ իրենց տեղերում:»,

8) 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«8. Ընտրական հանձնաժողովի որոշումը ստանալուց հետո համայնքի ղեկավարը և արտաքին գովազդային վահանակները (լուսադիոդային գովազդային վահանակներ) տնօրինող կազմակերպությունների ղեկավարներն ապահովում են, որ գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչված թեկնածուների,

ընտրությունների մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութերը եռօրյա ժամկետում հանվեն:

Գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչված թեկնածուների, ընտրությունների մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութերը եռօրյա ժամկետում չհանվելու դեպքում դրանք հանում է համայնքի ղեկավարը՝ ոստիկանության աջակցությամբ: Համայնքի ղեկավարը գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչված թեկնածուներից, ընտրությունների մասնակցող կուսակցություններից (կուսակցությունների դաշինքների) կարող է պահանջել իր կատարած ծախսերի փոխհատուցում:»,

9) 9-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Սույն հոդվածի դրույթների խախտմամբ տեղադրված քարոզչական պաստառը, քարոզչական տպագիր և այլ նյութերը համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշման հիման վրա հանում է համայնքի ղեկավարը՝ ոստիկանության աջակցությամբ: Սույն գործառույթը համայնքի ղեկավարի համար պատվիրակված լիազորություն է:»,

10) 9-րդ մասի երկրորդ պարբերության առաջին նախադասությունում «տարածքային ընտրական հանձնաժողովի» բառերը փոխարինել «ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի» բառերով,

11) լրացնել նոր՝ 12-րդ մաս.

«12. Ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու պատճառով ընտրական գործընթացի դադարեցման դեպքում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութ տեղադրելու վերաբերյալ պայմանագրի կողմերը կարող են միակողմանի հրաժարվել դրա կատարումից:»:

**Հոդված 17.** Օրենսգրքի 22-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների» բառերը փոխարինել «տեսալսողական մեդիածառայություն մատուցողների» բառերով, ինչպես նաև «ռադիոհաղորդումների կամ հեռուստահաղորդումների» բառերը փոխարինել «տեսալսողական հաղորդումների» բառերով,

2) 2-րդ մասի երրորդ պարբերության «հեռուստատեսությամբ, ռադիոյով» բառերը փոխարինել «տեսալսողական մեդիածառայություն մատուցողների եթերով» բառերով:

**Հոդված 18.** Օրենսգրքի 23-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ.

«Վարչական ռեսուրսի օգտագործման արգելքը և նախընտրական քարոզչության սահմանափակումները»,

2) 1-ին մասը լրացնել նոր՝ երկրորդ պարբերությամբ.

«Արգելվում է նախընտրական քարոզչության կազմակերպման և իրականացման ընթացքում վարչական ռեսուրսի օգտագործումը, այդ թվում՝ ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցների, տարածքների, տրանսպորտային ու կապի միջոցների, նյութական և մարդկային ռեսուրսների օգտագործումը, ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու նպատակով:»,

3) 1-ին մասի երկրորդ պարբերությունում «Արգելվում է նախընտրական քարոզչություն կազմակերպելը կամ կատարելը, ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելը, նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցները, տարածքները, տրանսպորտային և կապի միջոցները, նյութական ու մարդկային ռեսուրսները, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող

անվտանգության միջոցառումների, օգտագործելը՝» բառերը փոխարինել «Արգելվում է նախընտրական քարոզչության կազմակերպումն ու իրականացումը՝» բառերով և կետադրական նշանով,

4) 2-րդ մասում «պատգամավորին և անմիջականորեն ընտրողների կողմից ընտրված համայնքների ղեկավարներին» բառերը փոխարինել «պատգամավորին, համայնքների ղեկավարներին» բառերով:

**Հոդված 19.** Օրենսգրքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությունը «ընտրությունները» բառից հետո լրացնել «, ինչպես նաև ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու պատճառով ընտրական գործընթացի դադարեցման դեպքում մինչև դադարեցումը կատարված ընտրությունների կազմակերպմանն ուղղված գործողությունները» կետադրական նշանով և բառերով:

**Հոդված 20.** Օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը «ընտրություն նշանակվելու» բառերից հետո լրացնել «, ընտրական գործընթացը դադարեցվելու» կետադրական նշանով և բառերով:

**Հոդված 21**. Օրենսգրքի 26-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 26. Նախընտրական հիմնադրամի ձևավորումը և թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) վերաբերյալ ֆինանսական տեղեկատվությունը**

1. Ազգային ժողովի, համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունների դեպքում ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները), ինչպես նաև սույն օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում մեծամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ղեկավարի և ավագանու անդամի

թեկնածուները պարտավոր են բացել նախընտրական հիմնադրամ թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակը գրանցելու վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո՝ 5 օրվա ընթացքում: Նախընտրական հիմնադրամ չբացելու համար վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում նախընտրական հիմնադրամ չբացելու դեպքում իրավասու ընտրական հանձնաժողովը դիմում է դատարան թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու պահանջով: Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակով առաջադրված թեկնածուներն, կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցություններն առանձին նախընտրական հիմնադրամ ձևավորելու իրավունք չունեն:

Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների), մեծամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների նախընտրական հիմնադրամի միջոցները հավաքվում են Երևանում և հանրապետության բոլոր մարզերում մասնաճյուղ ունեցող որևէ առևտրային բանկում: Այս բանկերի ցանկը Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը: Նախընտրական հիմնադրամ ձևավորելու նպատակով, թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) դիմումների հիման վրա, բանկերը բացում են ժամանակավոր հատուկ հաշիվներ: Այդ հաշիվներից եկամուտներ չեն հաշվարկվում և չեն վճարվում:

2. Թեկնածուի նախընտրական հիմնադրամը ձևավորվում է՝

1) իր կատարած մուծումներից,

2) իրեն առաջադրած կուսակցության կատարած մուծումներից,

3) ընտրելու իրավունք ունեցող անձանց մուծումներից:

3. Ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նախընտրական հիմնադրամը ձևավորվում է այդ կուսակցության (դաշինքի անդամ կուսակցությունների) կատարած մուծումներից:

4. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասում չնշված ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից նախընտրական հիմնադրամների հաշվին մուծված գումարները փոխանցվում են համապատասխան մուծումը կատարած անձին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ պետական բյուջե: Պետական բյուջե են փոխանցվում նաև նախընտրական հիմնադրամների հաշվին կատարված անանուն մուծումները:

5. Նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների և հիմնադրամներից կատարվող ծախսերի հաշվառման կարգը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

6. Նախընտրական հիմնադրամ մուծումներ կատարող ֆիզիկական անձինք պարտավոր են նշել իրենց անունը, ազգանունը և հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը, որը հրապարակման ենթակա չէ:

7. Նախընտրական հիմնադրամներում կատարվող մուծումների առավելագույն չափերը սահմանվում են սույն օրենսգրքով: Նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն չափերը գերազանցող մասերը փոխանցվում են համապատասխան մուծումը կատարած անձին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ պետական բյուջե:

8. Այն բանկերը, որտեղ բացված են ժամանակավոր հատուկ հաշիվներ, թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի ավարտից 5 օր հետո՝ 3 աշխատանքային օրը մեկ, վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն տեղեկանք են ներկայացնում թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների

(կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ: Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն ամփոփում է այդ տվյալները, կազմում ամփոփ տեղեկանք, որը տեղադրվում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

9. Նախընտրական հիմնադրամի միջոցների նկատմամբ չի կարող կիրառվել արգելանք, այդ միջոցները չեն կարող հանդիսանալ բռնագանձման առարկա՝ թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նախընտրական քարոզչության հետ չկապված անձնական բնույթի պարտավորություններով:

10. Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի ավարտից հետո մինչև քվեարկությունից հետո երրորդ օրը՝ 3 աշխատանքային օրը մեկ, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների կազմում ընդգրկված կուսակցությունների) բանկային հաշիվների ֆինանսական միջոցների մնացորդի, մուտքերի և ելքերի վերաբերյալ տվյալները համապատասխան բանկերը ներկայացնում են Հայաստանի Հանրապետության Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: Հայաստանի Հանրապետության Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն  ամփոփում է այդ տվյալները, կազմում ամփոփ տեղեկանք, որը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համացանցային կայքում:»:

**Հոդված 22.** Օրենսգրքի 27-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի առաջին պարբերությունը «ընտրություններին մասնակցող կուսակցությունները» բառերից հետո լրացնել «(կուսակցությունների դաշինքները)» բառերով և կետադրական նշանով,

2) 1-ին մասի 9-րդ կետի «, եթե մեկ վստահված անձի հաշվով փոխհատուցման գումարը գերազանցում է 10 000 դրամը» կետադրական նշանը և բառերը հանել,

3) 1-ին մասի երկրորդ պարբերությունը հանել,

4) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Եթե վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությամբ նշվում է, որ նախընտրական քարոզչության համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ուղղություններով ձեռք բերված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը շուկայական արժեքով չի ներառվել նախընտրական հիմնադրամի ծախսերում, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հարուցում է վարչական վարույթ: Եթե հարուցված վարույթի արդյունքում հիմնավորվում է վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությամբ նշված տեղեկությունը, ապա թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նկատմամբ կիրառվում է վարչական տույժ՝ հիմնադրամի ծախսերում չներառված ծախսերի եռապատիկի չափով:»,

5) 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Եթե վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությամբ նշվում է, որ թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նախընտրական քարոզչության համար կատարված ծախսերը գերազանցել են սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ուղղություններով կատարված ծախսերի՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն չափը, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հարուցում է վարչական վարույթ, և եթե վարույթի արդյունքում հիմնավորվում է վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությամբ նշված տեղեկությունը, ապա թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նկատմամբ կիրառվում է վարչական տույժ՝ հիմնադրամի՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն չափը գերազանցող գումարի եռապատիկի չափով:»,

6) 5-րդ մասը «կուսակցության» բառից հետո լրացնել «(կուսակցությունների դաշինքի)» կետադրական նշանով և բառերով,

7) 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«8. Թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) դիմումի հիման վրա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը թույլ է տալիս հիմնադրամից վճարումներ կատարել նաև քվեարկության օրվանից հետո, բայց մինչև քվեարկության օրը կատարված գործարքների համար: Թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների)՝ ոչ ուշ, քան քվեարկությունից հետո երկօրյա ժամկետում ներկայացված դիմումի հիման վրա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը թույլ է տալիս համալրել հիմնադրամը՝ չկատարված պայմանագրային պարտավորությունների կատարման համար հիմնադրամի միջոցների չբավարարող գումարի չափով:»,

8) 10-րդ մասի առաջին նախադասությունը «կուսակցությունների» բառերից հետո լրացնել «(կուսակցությունների դաշինքների)» կետադրական նշանով և բառերով, երկրորդ նախադասությունը «կուսակցությունները» բառերից հետո լրացնել «(կուսակցությունների դաշինքները)» կետադրական նշանով և բառերով,

9) լրացնել նոր՝ 13-րդ մաս.

«13. Ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու պատճառով ընտրական գործընթացը դադարեցվելու դեպքում ընտրական գործընթացը դադարեցվելու պահից մեկշաբաթյա ժամկետում նախընտրական հիմնադրամում մնացած միջոցները մեծամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների դեպքում փոխանցվում են թեկնածուին առաջադրած կուսակցության հաշվին, իսկ ինքնաառաջադրման դեպքում՝ փոխանցվում են թեկնածուին, Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող՝ համայնքների ավագանիների ընտրությունների դեպքում՝ կուսակցության հաշվին, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում

հավասարապես բաշխվում են դաշինքը կազմող կուսակցությունների միջև, եթե այլ բան նախատեսված չէ կուսակցությունների դաշինքի որոշմամբ։»։

**Հոդված 23.** Օրենսգրքի 28-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 28. Նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը**

1. Թեկնածուները, ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը ներկայացնում են վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն նախընտրական քարոզչությունը սկսվելուց հետո՝ 10-րդ, Ազգային ժողովի, համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների հերթական ընտրությունների ժամանակ՝ նաև 20-րդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ։

Ազգային ժողովի ընտրության երկրորդ փուլ անցկացվելու դեպքում երկրորդ փուլին մասնակցող կուսակցությունը, կուսակցությունների դաշինքը նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը ներկայացնում է վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն՝ ընտրությունների արդյունքների ամփոփման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ։

Հայտարարագրին կցվում են սույն օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասում նշված, ինչպես նաև նախընտրական քարոզչության նպատակով կատարված և հայտարարագրման ենթակա այլ ծախսերը հիմնավորող փաստաթղթերը (պայմանագիր, հանձնման-ընդունման ակտ, հաշիվ-ապրանքագիր, վճարման անդորրագիր և այլն)։ Նախընտրական ժողովներ, ընտրողների հետ հանդիպումներ և նախընտրական քարոզչության հետ կապված այլ միջոցառումներ անցկացնելու նպատակով դահլիճների, տարածքների և

ընտրական շտաբների կոմունալ ծախսերը, ինչպես նաև նախընտրական քարոզչության նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցների վարձելիքի հետ կապված ծախսերը համարվում են հայտարարագրման ոչ ենթակա ծախսեր:

2. Հայտարարագրի էլեկտրոնային ձևը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Հայտարարագրի ձևը ներառում է նաև ուղեցույց հայտարարագիրը կազմելու և ներկայացնելու կարգի ու ժամկետների մասին:

3. Հայտարարագրում նշվում են՝

1) նախընտրական հիմնադրամ կատարված մուծումների ամսաթիվը, մուծման գումարի չափը և մուծումներ կատարած անձանց անունը, ազգանունը կամ անվանումը.

2) սույն օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված յուրաքանչյուր աշխատանքի, ծառայության, ապրանքի ձեռքբերման համար կատարված ծախսերը, դրանց կատարման ժամկետը, ծախսերի կատարումը հաստատող փաստաթղթերի տվյալները.

3) սույն օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված յուրաքանչյուր աշխատանքի, ծառայության, ապրանքի ձեռքբերման համար կատարվելիք ծախսերը, որոնց վճարումն իրականացվելու է հայտարարագիրը ներկայացնելու՝ սույն օրենսգրքով սահմանված ժամկետից հետո՝ հայտարարագրին կցելով ծախսերի կատարման անհրաժեշտությունը հավաստող փաստաթղթեր.

4) հիմնադրամում մնացած գումարի չափը:

4. Հայտարարագրերը ներկայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, տեղադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:»:

**Հոդված 24.** Օրենսգրքի 29-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասը «կուսակցությունների» բառից հետո լրացնել «(կուսակցությունների դաշինքների)» կետադրական նշանով և բառերով,

2) 6-րդ մասի 1-ին կետում «կուսակցությունների» բառից հետո լրացնել «(կուսակցությունների դաշինքների)» կետադրական նշանը և բառերը, «հատուկ հաշվեհամարներ» բառերը փոխարինել «հատուկ հաշիվներ» բառերով,

3) 6-րդ մասի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) բանկերից, կուսակցություններից և ապրանքներ մատակարարող, ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ կատարող այլ կազմակերպություններից ստանալ համապատասխան տեղեկություններ, տեղեկանքներ, փաստաթղթերի պատճեններ՝ նախընտրական քարոզչության շրջանակներում կատարված ծախսերի վերաբերյալ. »:

**Հոդված 25.** Օրենսգրքի 30-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ կետը «հասարակական կազմակերպությունները» բառերից հետո լրացնել «և հիմնադրամները» բառերով,

2) լրացնել նոր՝ 6-րդ մաս.

«6. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված այցելուի կարգավիճակ ունեցող անձանց կարող է ուղեկցել թարգմանիչ:»:

**Հոդված 26.** Օրենսգրքի 31-րդ հոդվածում ՝

1) վերնագիրը «դիտորդների,» բառից և կետադրական նշանից հետո լրացնել «միջազգային դիտորդներին և այցելուներին ուղեկցող թարգմանիչների,» բառերով և կետադրական նշանով»,

2) լրացնել նոր՝ 1.1-ին մաս.

«1.1. Որպես դիտորդ չեն կարող հանդես գալ ընտրական հանձնաժողովների անդամները, այդ ընտրություններին մասնակցող թեկնածուները, վստահված անձինք, տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետները և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները:»,

3) 2-րդ մասի երկրորդ պարբերությունը «հասարակական կազմակերպությունները» բառերից հետո լրացնել «և հիմնադրամները» բառերով,

4) 2-րդ մասի երրորդ պարբերության առաջին և երրորդ նախադասությունները «հասարակական կազմակերպությունները» բառերից հետո լրացնել «և հիմնադրամները» բառերով, չորրորդ նախադասությունը «հասարակական կազմակերպություններից» բառերից հետո լրացնել «կամ հիմնադրամներից» բառերով,

5) 2-րդ մասի երրորդ պարբերության հինգերորդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Եթե դիմումի մերժման արդյունքով սույն օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխանում է միայն մեկ հասարակական կազմակերպություն կամ հիմնադրամ, ապա այդ հասարակական կազմակերպությունը կամ հիմնադրամը հավատարմագրվում է որպես առանձին դիտորդական առաքելություն իրականացնող:»,

6) 2-րդ մասի չորրորդ պարբերությունը «հասարակական կազմակերպություններն» բառերից հետո լրացնել «ու հիմնադրամներն» բառերով,

7) 4-րդ մասը լրացնել նոր՝ երկրորդ պարբերությամբ.

«Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մինչ հավատարմագրման հայտը հաստատելը հավատարմագրման հայտում ներկայացված դիտորդների ցանկից հանում է այն անձանց վերաբերյալ տվյալները, ովքեր հանդիսանում է ընտրական հանձնաժողովի անդամ կամ տվյալ ընտրություններին մասնակցում է թեկնածուի, տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետի, վստահված անձի կամ զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցչի կարգավիճակով: Սույն կանոնը կիրառվում է նաև հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարելու մասին դիմումները քննարկելիս:»,

8) լրացնել նոր՝ 4.1-ին մաս.

«4.1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուժը կորցրած է ճանաչում դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության (համատեղ հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող

կազմակերպությունների) հավատարմագրումը, եթե հավատարմագրվելուց հետո ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց առկայության պայմաններում հավատարմագրման վերաբերյալ դիմումը կմերժվեր: Եթե սույն մասում նշված դեպքում համատեղ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններից որևէ մեկը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուժը կորցրած է ճանաչում համատեղ հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների հավատարմագրումը միայն այդ կազմակերպությանը վերաբերելի մասով: Եթե Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից համատեղ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների հավատարմագրումը մի մասով ուժը կորցրած ճանաչելու արդյունքում սույն օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխանում է միայն մեկ կազմակերպություն, ապա այդ կազմակերպությունը համարվում է հավատարմագրված որպես առանձին դիտորդական առաքելություն իրականացնող:

Սույն հոդվածի 1.1-ին մասում առկա հանգամանքները դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության (համատեղ հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների) հավատարմագրվելուց հետո ի հայտ գալու դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հավատարմագրված դիտորդների ցանկից հանում է որպես դիտորդ հանդես գալու իրավունք չունեցող անձանց վերաբերյալ տվյալները: Դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության (համատեղ հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների) հավատարմագրումը ուժը կորցրած ճանաչվելու և հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ կատարելու վերաբերյալ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները ծանուցվում է 1 օրվա ընթացքում:»,

9) լրացնել նոր՝ 7.1-ին մաս.

«7.1. Միջազգային դիտորդներին և այցելուներին ուղեկցող թարգմանիչներին վկայականներ տրամադրում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ներկայացրած հայտերի հիման վրա:»,

10) 9-րդ մասը «դիտորդների,» բառից և կետադրական նշանից հետո լրացնել «միջազգային դիտորդներին և այցելուներին ուղեկցող թարգմանիչների,» բառերով և կետադրական նշանով:

**Հոդված 27**. Օրենսգրքի 35-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի), համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների լիազոր ներկայացուցիչների կարգավիճակը**»,

2) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները), ինչպես նաև համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուն իրավունք ունեն թեկնածուին, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակը գրանցած ընտրական հանձնաժողովում նշանակելու մինչև 3 լիազոր ներկայացուցիչ:»,

3) 4-րդ մասը լրացնել նոր՝ 3-րդ կետով.

«3) նախընտրական քարոզչության կազմակերպման նպատակով՝ ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների), ինչպես նաև մեծամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների անունից կնքելու քաղաքացիաիրավական պայմանագրեր:»,

4) ուժը կորցրած ճանաչել 8-րդ մասը:

**Հոդված 28.** Օրենսգրքի 40-րդ հոդվածըլրացնել նոր՝ 5-րդ մասով.

«5. Ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու պատճառով ընտրական գործընթացը դադարեցվելու դեպքերում ընտրական հանձնաժողովների անդամների՝ ընտրությունների կազմակերպման և անցկացման համար վարձատրությունն իրականացվում է ըստ փաստացի աշխատած օրերի քանակի: Ընտրական հանձնաժողովների անդամներին ընտրությունների կազմակերպման և անցկացման համար՝ մինչև ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելը վճարված վարձատրության գումարը ենթակա չէ վերադարձման:»:

**Հոդված 29.** Օրենսգրքի 41-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 1-ին պարբերությունում «224» թիվը փոխարինել «224.1» թվով,

2) 2-րդ մասը լրացնել նոր՝ երկրորդ պարբերությամբ.

«Ընտրական հանձնաժողովի անդամի անհամատեղելիության պայմանները կարող են սահմանվել բացառապես սույն օրենսգրքով: Ընտրական հանձնաժողովի անդամի (բացառությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի) կարգավիճակը չի հանդիսանում այլ օրենքներով և իրավական ակտերով նախատեսված անհամատեղելիության պահանջների խախտում:»,

3) 3-րդ մասում «անձինք» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիները» բառերով,

4) 5-րդ մասի երրորդ նախադասության «դիմում ներկայացրած անձինք» բառերը փոխարինել «դիմում ներկայացրած քաղաքացիները» բառերով,

5) 5-րդ մասը լրացնել նոր՝ երկրորդ նախադասությամբ.

«Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներն աջակցում են ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացների կազմակերպման և անցկացման աշխատանքներին:»,

6) 5-րդ մասը լրացնել նոր՝ վեցերորդ նախադասությամբ.

«Ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներին և ստուգարքին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնց՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած է ճանաչվել դասընթացների անցկացմանը նախորդող վերջին մեկ տարվա ընթացքում:»:

7) 6-րդ մասից հանել երկրորդ նախադասությունը,

8) 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«8. Ընտրությունների ժամանակ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ իր սահմանած ժամանակացույցին համապատասխան, կարող է կազմակերպել ընտրությունների անցկացման վերաբերյալ գործնական դասընթացներ ընտրական հանձնաժողովների անդամների համար:

Գործնական դասընթացների անցկացման ժամկետի ավարտից հետո նշանակված տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմակերպում է լրացուցիչ գործնական դասընթացներ, եթե դրանց կազմակերպումն ու անցկացումը չի խոչընդոտի տվյալ ընտրություններում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի լիազորությունների պատշաճ իրականացմանը:

Գործնական դասընթացներին մասնակցությունը պարտադիր է:»:

**Հոդված 30.** Օրենսգրքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունում «պակաս լինի երկուսից» բառերը փոխարինել «պակաս լինի երեքից» բառերով:

**Հոդված 31.** Օրենսգրքի 43-րդ հոդվածում՝

1) վերնագիրը «կարգը» բառերից հետո լրացնել «և հանձնաժողովի անդամների պարտադիր ատեստավորումը» բառերով,

2) 1-ին մասը «կազմված է» բառերից հետո լրացնել «ոչ ավել, քան» բառերով և կետադրական նշանով,

3) 2-րդ մասի «պակաս լինի երկուսից» բառերը փոխարինել «պակաս լինի երեքից» բառերով,

4) 8-րդ մասի «որակավորման վկայականներ ստացած անձանցից» բառերը փոխարինել «որակավորման վկայականներ ստացած քաղաքացիներից» բառերով,

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-8.3-րդ մասեր.

«8.1. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամները ենթակա են ամենամյա պարտադիր ատեստավորման, որն անցկացվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների ստուգման նպատակով: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների ատեստավորումն անցկացվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի անմիջական մասնակցությամբ: Ատեստավորման անցկացման նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ձևավորում է ատեստավորման հանձնաժողով: Ատեստավորման ժամանակացույցը, ատեստավորման հանձնաժողովի կազմը, աշխատակարգը, ձևավորման և ատեստավորում անցկացնելու կարգը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամը ենթակա է ատեստավորման աշխատանքի ներկայանալուց հետո՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված ժամանակացույցին համապատասխան, բայց ոչ ուշ, քան եռամսյա ժամկետում:

Ատեստավորման ենթակա ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամները, ոչ ուշ, քան ատեստավորումից մեկ ամիս առաջ, տեղեկացվում են ատեստավորման անցկացման մասին:

8.2. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների ատեստավորումն անցկացվում է ստուգարքի և հարցազրույցի միջոցով ատեստավորման հանձնաժողովի կողմից: Ստուգարքի և հարցազրույցի հարցերը կազմում է ատեստավորման հանձնաժողովը:

Ատեստավորման հանձնաժողովը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների ատեստավորման արդյունքներով ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը.

1) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին,

2) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին:

Ատեստավորման հանձնաժողովի քվեարկության արդյունքում ընդունված է համարվում այն որոշումը, որը ստացել է հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայները: Սույն մասի 1-ին և 2-րդ կետերով նշված որոշումները կարող են ընդունվել ատեստավորման հանձնաժողովի անդամների առնվազն 2/3-ի մասնակցությամբ:

8.3. Ատեստավորման մասնակցած ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի այն անդամներ, որոնց վերաբերյալ կայացվել է սույն հոդվածի 8.2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված որոշումը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված ժամանակացույցին համապատասխան, բայց ոչ ուշ, քան որոշման ընդունումից հետո եռամսյա ժամկետում կրկին անցնում են ատեստավորում: Կրկնակի ատեստավորման արդյունքներով ատեստավորման հանձնաժողովի կողմից զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին որոշում ընդունվելուց հետո՝ եռօրյա ժամկետում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից:»:

**Հոդված 32**. Օրենսգրքի 44-րդ հոդվածի 6-րդ մասը «25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն,» բառերից հետո լրացնել «Ազգային ժողովի» բառերով:

**Հոդված 33**. Օրենսգրքի 45-րդ հոդվածի՝

1) 6-րդ մասի 5-րդ կետում «224» թիվը փոխարինել «224.1» թվով,

2) 7-րդ մասում՝

ա. «3 օրացուցային ամսվա ընթացքում» թիվը և բառերը փոխարինել «2 օրացուցային ամսվա ընթացքում» թվով և բառերով,

բ. լրացնել նոր երկրորդ նախադասություն.

«Կրկնակի ատեստավորման արդյունքներով զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին որոշում ընդունված լինելու դեպքում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ:»:

**Հոդված 34.** Օրենսգիրքը լրացնել նոր՝ 48.1-ին հոդվածով.

«**Հոդված 48.1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սեփական նախաձեռնությամբ ընտրական հանձնաժողովների որոշումների վերանայումը**

1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը վերահսկողության կարգով և իր նախաձեռնությամբ իրավունք ունի վերանայելու ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը դրա կայացումից հետո վեց ամսվա ընթացքում, բացառությամբ ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակները (դրանցում ընդգրկված թեկնածուներին), թեկնածուներին գրանցելու, գրանցումը մերժելու, գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշումների:

2. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը դատական կարգով վիճարկվելու դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կարճում է վարչական վարույթը:»:

**Հոդված 35.** Օրենսգրքի 50-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի առաջին պարբերությունից հանել «՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու մասին գրառում կատարելու դեպքում,» կետադրական նշանները և բառերը,

2) 1-ին մասը լրացնել նոր՝ երրորդ պարբերությամբ.

«Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի պահանջ կարող է ներկայացվել նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պատճառաբանված որոշմամբ՝ ընտրության արդյունքներն ամփոփելու ժամկետից մինչև 3 օր առաջ:»,

3) 1.1-ին մասի առաջին նախադասությունում «ժամը 11:00-ին, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը» բառերը փոխարինել «վերահաշվարկի դիմում ներկայացնելու համար սահմանված վերջնաժամկետի ավարտից հետո՝ մինչև վերահաշվարկի աշխատանքները սկսելու ժամկետը, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն իր նիստում» բառերով,

4) 6-րդ մասի երրորդ նախադասությունում «առաջին հերթին» բառերը փոխարինել «երկրորդ հերթին» բառերով,

5) 7-րդ մասի առաջին նախադասությունում «վիճակահանությամբ ընտրված ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները» բառերը փոխարինել «բոլոր այն ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները, որոնց վերաբերյալ ներկայացվել է վերահաշվարկի դիմում» բառերով,

6) 7-րդ մասի երրորդ նախադասությունում «բոլոր այն ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները, որոնց վերաբերյալ ներկայացվել է վերահաշվարկի դիմում» բառերը փոխարինել «վիճակահանությամբ ընտրված ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները» բառերով,

7) 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«8. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ ներկայացված պահանջով՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկն իրականացվում է որոշումը ստանալուց անմիջապես հետո:»,

8) 12-րդ մասում «4 ժամը» թիվը և բառը փոխարինել «3 ժամը» թվով և բառով:

**Հոդված 36.** Օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ մասում «իր» բառը փոխարինել «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի» բառերով, իսկ 6-րդ մասում «2000 ընտրող ունեցող» թիվը և բառերը փոխարինել «10 000 ընտրող ունեցող» թվով և բառերով:

**Հոդված 37.** Օրենսգրքի 2-րդ բաժինը լրացնել նոր՝ 9.1-ին գլխով.

## «ԳԼՈՒԽ 9.1

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԴՐԱ ԿՈՂՄԻՑ ՍՏԵՂԾՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ

### Հոդված 55.1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կառուցվածքը

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կառուցվածքում ընդգրկվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի, հանձնաժողովի նախագահի տեղակալի, հանձնաժողովի քարտուղարի և անդամների, Գլխավոր քարտուղարի, Գլխավոր քարտուղարի տեղակալի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի մամուլի քարտուղարի, հանձնաժողովի նախագահի խորհրդականների, օգնականի, հանձնաժողովի նախագահի տեղակալի օգնականի, հանձնաժողովի քարտուղարի օգնականի, հանձնաժողովի անդամի

օգնականի, Գլխավոր քարտուղարի օգնականի պաշտոնները և կառուցվածքային ստորաբաժանումները:

### Հոդված 55.2. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների կառավարումը

1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների կառավարումն իրականացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը:

2. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝

1) սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ներքին կարգապահական կանոնները,

2) սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովում գործավարության (փաստաթղթաշրջանառության) կարգը,

3) «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի հիման վրա սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթի անցկացման կարգը,

4) սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վարչական շենք մուտքի անցագրերի տրամադրման կարգը և ձևը,

5) իրականացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների կառավարմանն առնչվող սույն օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

### Հոդված 55.3. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ստեղծվող աշխատանքային խմբերը

1. Ընտրությունների ժամանակահատվածում (մինչև ընտրությունների արդյունքների բողոքարկման վերաբերյալ վերջնական դատական ակտի ուժի մեջ

մտնելը) ընտրությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ հավաքագրելու, առկա տեղեկությունների հավաստիությունը պարզելու, դրանց վերաբերյալ պարզաբանումներ կամ տեղեկություններ տրամադրելու, տեղեկությունները համակարգելու և Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ներկայացնելու, ինչպես նաև թվարկված գործառույթներից բխող առանձին այլ գործառույթներ կատարելու և խնդիրներ լուծելու նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովում կարող են ստեղծել աշխատանքային խմբեր Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ:

2. Ստեղծվող աշխատանքային խմբերի կազմը, գործառույթներն ու խնդիրները հաստատում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:»:

**Հոդված 38.** Օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը «անձանց» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների, մասնագետների, քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց)» բառերով և կետադրական նշաններով:

**Հոդված 39.** Օրենսգրքի 58-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «750 ընտրողի» թիվը և բառը փոխարինել «600 ընտրողի» թվով և բառով,

2) լրացնել նոր՝ 4-րդ և 5-րդ մասեր.

«4. Քվեարկության խցիկի ձևը պետք է հնարավորություն ընձեռի հաշմանդամություն, ինչպես նաև տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողներին անխոչընդոտ իրականացնելու իրենց ընտրելու իրավունքը՝ պահպանելով քվեարկության գաղտնիությունը:

5. Ընտրությունների ժամանակ տեսողության խնդիրներ ունեցող անձանց կողմից ինքնուրույն քվեարկելու համար տեղամասային ընտրական հանձնաժողովներն ապահովվում են լրացուցիչ միջոցներով (բրայլյան կաղապարներով և այլն), իսկ մեծամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների ժամանակ՝ նաև խոշորացույցներով: Լրացուցիչ միջոցների ձեռքբերումը, այդ թվում՝ բրայլյան կաղապարների տպագրությունը, ու խոշորացույցների ձեռքբերումն ապահովում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:»:

**Հոդված 40.** Օրենսգրքի 59-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Քվեաթերթիկները տպագրվում են քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 8, և ոչ ուշ, քան 3 օր առաջ՝ լիազոր մարմնի՝ ընտրողների թվի վերաբերյալ քվեարկության օրվանից 8 օր առաջ տրամադրած տեղեկանքի հիման վրա:»:

2) 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«7. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ քվեաթերթիկները տպագրելուց հետո ընտրություններին մասնակցող կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչվելու դեպքում այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) քվեաթերթիկները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով հանվում են քվեարկությունից և մարվում են: Եթե կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչվելու հետևանքով քվեարկությանը մասնակցում է միայն մեկ կուսակցություն կամ կուսակցությունների դաշինք, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ տպագրվում է նաև դեմ քվեարկությամբ առանձին քվեաթերթիկ:»,

3) 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«8. Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների ժամանակ թեկնածուի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչվելու դեպքում այդ թեկնածուի անունը քվեաթերթիկներից հանվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով: Եթե համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունների ժամանակ կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչվելու հետևանքով քվեարկությանը մասնակցում է միայն մեկ կուսակցություն կամ կուսակցությունների դաշինք, ապա համապատասխան ընտրական հանձնաժողովի որոշմամբ տպագրվում է նաև դեմ քվեարկությամբ առանձին քվեաթերթիկ: Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունների ժամանակ քվեաթերթիկները տպագրելուց հետո ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական կամ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչվելու դեպքում այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) քվեաթերթիկները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով հանվում են քվեարկությունից և մարվում են:»:

**Հոդված 41**. Օրենսգրքի 60-րդ հոդվածի 3-րդ մասի չորրորդ պարբերությունը լրացնել նոր չորրորդ և հինգերորդ նախադասություններով.

«Տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետի անհամատեղելիության պայմանները կարող են սահմանվել բացառապես սույն օրենսգրքով: Տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետի կարգավիճակը չի հանդիսանում այլ օրենքներով և իրավական ակտերով նախատեսված անհամատեղելիության պահանջների խախտում:»:

**Հոդված 42.** Օրենսգրքի 61-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Քվեարկության սենյակում կամ դրա մուտքի մոտ փակցվում են ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների անվանումները՝ ըստ քվեաթերթիկների համարների հերթականության, և դրանց ընտրական ցուցակները: Կուսակցությունների դաշինքի դեպքում դաշինքի անվանման ներքո փակագծերում նշվում են նաև դաշինքի անդամ բոլոր կուսակցությունների անվանումները:»:

**Հոդված 43.** Օրենսգրքի 64-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի «1200» թվերը փոխարինել «1100» թվերով,

2) 2-րդ մասի առաջին պարբերության առաջին նախադասությունում «քվեարկությանը ներկա գտնվելու» բառերը փոխարինել «քվեարկության սենյակում ներկա գտնվելու» բառերով,

3) 2-րդ մասի երկրորդ պարբերության առաջին նախադասությունից հանել «քվեաթերթիկները, քվեարկության ծրարները,» բառերը և կետադրական նշանները,

4) 2-րդ մասի երկրորդ պարբերության երրորդ նախադասության մեջ «Հարյուր ինքնասոսնձվող դրոշմանիշ հատկացվում է» բառերը փոխարինել «Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը չհրկիզվող պահարանից հանում է հարյուր ինքնասոսնձվող դրոշմանիշ և հատկացնում է» բառերով:

**Հոդված 44.** Օրենսգրքի 65-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ նախադասությունում «յուրաքանչյուր կազմակերպությունից մեկ դիտորդ» բառերը փոխարինել «յուրաքանչյուր կազմակերպությունից երկու դիտորդ» բառերով:

**Հոդված 45.** Օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամն ընտրողից վերցնում է քվեարկության կտրոնը, ընտրողների ցուցակում գտնում է

ընտրողի տողը, ընտրողը ստորագրում է իր տվյալների դիմաց՝ ընտրողի ստորագրության համար նախատեսված սյունակում, հանձնաժողովի անդամն իր անհատական կնիքն է դնում համապատասխան սյունակում, որից հետո անհատական կնիքով կնքում է քվեարկության կտրոնը և այն փոխանցում ընտրողին:»:

**Հոդված 46.** Օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ մասը «նախապատրաստման» բառից առաջ լրացնել «նախօրդ օրը և քվեարկության օրը» բառերով:

**Հոդված 47.** Օրենսգրքի 68-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի առաջին պարբերությունը «քվեարկության ծրարից հանում է քվեաթերթիկը» բառերից առաջ լրացնել «քվեարկության ծրարը մարելու հիմքերի բացակայության դեպքում՝» բառերով և կետադրական նշանով, ինչպես նաև «քվեաթերթիկը» բառից հետո լրացնել «, այն ցուցադրում այնպես, որ տեսանելի լինի ներկաների համար» կետադրական նշանով և բառերով,

2) 3-րդ մասի երկրորդ պարբերության առաջին նախադասությունը «հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեաթերթիկի սահմանված կամ չսահմանված նմուշի լինելու մասին» բառերից հետո լրացնել «սահմանված քվեաթերթիկի դեպքում՝» կետադրական նշանով և բառերով,

3) 3-րդ մասի երկրորդ պարբերության երկրորդ նախադասությունը հանել,

4) 3-րդ մասի երկրորդ պարբերության երրորդ նախադասությունը «Պահանջի դեպքում» բառերից հետո լրացնել «քվեարկության ծրարը կամ» բառերով,

5) 3-րդ մասի երկրորդ պարբերության չորրորդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հանձնաժողովի նախագահի հայտարարությանը համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամը ներկայացնում է առարկություն: Առարկության

դեպքում քվեարկության է դրվում հանձնաժողովի անդամի առաջարկությունը, և առարկության ընդունման մասին որոշմանը համապատասխան, իսկ առարկությունը չընդունվելու կամ առարկություն չլինելու դեպքում՝ հանձնաժողովի նախագահի հայտարարության համաձայն, քվեարկության ծրարը մարվում է կամ քվեաթերթիկը դրվում է համապատասխան կուսակցության օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթի մեջ:»,

6) 4-րդ մասի առաջինից չորրորդ պարբերությունները շարադրել նոր խմբագրությամբ.

«Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների ժամանակ հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեաթերթիկի սահմանված կամ չսահմանված նմուշի լինելու մասին, սահմանված քվեաթերթիկի դեպքում՝ վավեր կամ անվավեր լինելու մասին: Վավեր քվեաթերթիկի դեպքում հայտարարում է նաև, թե որ թեկնածուի օգտին է քվեարկված:

Պահանջի դեպքում քվեարկության ծրարը կամ քվեաթերթիկը փոխանցվում է հանձնաժողովի մյուս անդամներին: Հանձնաժողովի նախագահի հայտարարությանը համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամը ներկայացնում է առարկություն: Առարկության դեպքում քվեարկության է դրվում հանձնաժողովի անդամի առաջարկությունը, և առարկության ընդունման մասին որոշմանը համապատասխան, իսկ առարկությունը չընդունվելու կամ առարկություն չլինելու դեպքում՝ հանձնաժողովի նախագահի հայտարարության համաձայն, քվեարկության ծրարը մարվում է կամ քվեաթերթիկը դրվում է համապատասխան թեկնածուի օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթի մեջ, մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում՝ թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկված կամ անվավեր քվեաթերթիկների փաթեթի մեջ, որից հետո քվեատուփից հանում է հաջորդ ծրարը: Այդ գործողությունը կրկնվում է քվեատուփում առկա բոլոր ծրարների համար:

Ընտրություններին մասնակցող թեկնածուների օգտին քվեարկված քվեաթերթիկները, մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում՝ դեմ քվեարկված

քվեաթերթիկները և անվավեր քվեաթերթիկները տեսակավորվում են առանձին-առանձին:»,

7) 6-րդ մասը լրացնել նոր՝ երրորդ պարբերությամբ.

«Քվեարկության ծրարը մարվում է այնպես, որ վերահաշվարկի ժամանակ հնարավոր լինի հաստատել մարման հիմքի առկայությունը:»:

**Հոդված 48.** Օրենսգրքի 69-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «կամ ծրարում, քվեաթերթիկից բացի, առկա է այլ իր» բառերը,

2) 2-րդ մասի 1-ին կետից հանել «կուսակցության» բառը,

3) 2-րդ մասի 6-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

4) 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 49.** Օրենսգրքի 71-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 11-րդ կետը «կուսակցությանը» բառից հետո լրացնել «(կուսակցությունների դաշինքին)» կետադրական նշանով և բառերով,

2) 1-ին մասի 12-րդ կետում «թեկնածուին» բառը հանել և «մեկ թեկնածու» բառերից հետո լրացնել «, մեկ կուսակցություն (կուսակցությունների դաշինք)» կետադրական նշանները և բառերը,

3) 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«8. Տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք կարող են լուսանկարել կամ տեսանկարահանել ընտրական տեղամասում կազմված քվեարկության արդյունքների արձանագրությունը:

Տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց տրվում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք՝

վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով:»:

**Հոդված 50.** Օրենսգրքի 73-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությունից հանել «և արձանագրության մեկ քաղվածք» բառերը:

**Հոդված 51.** Օրենսգրքի 74-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերում «հանձնաժողովին» բառերը փոխարինել «հանձնաժողովներին» բառերով,

2) 3-րդ մասի 11-րդ կետը «կուսակցության» բառից հետո լրացնել «(կուսակցությունների դաշինքին)» կետադրական նշանով և բառերով,

3) 3-րդ մասի 13-րդ կետից հանել «թեկնածուին» բառը և «մեկ թեկնածու» բառերից հետո լրացնել «, մեկ կուսակցություն (կուսակցությունների դաշինք)» կետադրական նշանները և բառերը:

**Հոդված 52.** Օրենսգրքի 75-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի երկրորդ պարբերության «հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության ուղիղ եթերով» բառերը փոխարինել «հանրային տեսալսողական հեռարձակողի և հանրային լսողական հեռարձակողի ուղիղ եթերով» բառերով,

2) 4-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերում «հանձնաժողովին» բառերը փոխարինել «հանձնաժողովներին» բառերով,

3) 4-րդ մասի 11-րդ կետը «կուսակցության» բառից հետո լրացնել «(կուսակցությունների դաշինքին)» կետադրական նշանով և բառերով:

**Հոդված 53.** Օրենսգրքի 80-րդ հոդվածի 3-րդ մասում «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:

**Հոդված 54.** Օրենսգրքի 81-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունը ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 55.** Օրենսգրքի 84-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 2-րդ կետից հանել «համապետական և տարածքային» բառերը,

2) 2-րդ մասի 5-րդ կետը «յուրաքանչյուրի ներկայացրած» բառերից հետո լրացնել «ընտրական» բառով,

3) 2-րդ մասի 8-րդ կետում «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության» բառերով,

4) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. Ընտրություններին մասնակցելու դիմում ներկայացնելու համար կուսակցության (կուսակցությունների դաշինքի) էլեկտրոնային եղանակով ընտրական ցուցակի ձևավորման նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) տրամադրում է օգտահաշիվ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի ձևավորման նպատակով օգտահաշիվ ստանալու, էլեկտրոնային եղանակով ընտրական ցուցակ ձևավորելու կարգը և օգտահաշիվ ստանալու նպատակով դիմումի էլեկտրոնային ձևաթուղթը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակները գրանցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են

միայն կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազոր ներկայացուցչի միջոցով՝ առձեռն, սույն օրենսգրքով սահմանված ժամկետներում:»,

5) 7-րդ մասի վերջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Այդ ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի վերաբերյալ անճշտությունները չվերացնելու կամ փաստաթղթերը չլրացնելու դեպքում ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցումը մերժվում է, իսկ թեկնածուի վերաբերյալ անճշտությունները չվերացնելու կամ փաստաթղթերը չլրացնելու դեպքում ընտրական ցուցակում ընդգրկված տվյալ թեկնածուի գրանցումը մերժվում է և նրա անունը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով հանվում է ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակից:»:

**Հոդված 56.** Օրենսգրքի 85-րդ հոդվածի՝

1) վերնագրում, 1-ին, 2-րդ և 4-րդ մասերում «կուսակցության» բառերը փոխարինել «կուսակցության (կուսակցությունների դաշինքի)» կետադրական նշանով և բառերով,

2) 2-րդ մասում «կուսակցություններին» բառը փոխարինել «կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին)» կետադրական նշանով և բառերով,

3) 3-րդ մասում «ապահովում է կուսակցությունների ընտրական ցուցակների և նախընտրական ծրագրերի հրապարակայնությունը» բառերը փոխարինել «հրապարակում է կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակները և նախընտրական ծրագրերը» բառերով:

**Հոդված 57.** Օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 58.** Օրենսգրքի 87-րդ հոդվածում՝

1) վերնագիրը և տեքստը «կուսակցության» բառից հետո լրացնել «(կուսակցությունների դաշինքի)» կետադրական նշանով և բառերով,

2) լրացնել նոր՝ 1.1-ին մասով.

«1.1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կուսակցության համագումարի և մշտապես գործող ղեկավար մարմնի իրավազորության բացակայության կամ համապատասխան որոշումները ընդունված չլինելու հիմքով կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցումը կարող է անվավեր ճանաչել միայն այդ հիմքերի առկայությունը հաստատող դատական ակտի հիման վրա:»:

**Հոդված 59.** Օրենսգրքի 89-րդ հոդվածի՝

1) վերնագիրը և 1-ին մասը «կուսակցության» բառից հետո լրացնել «(կուսակցությունների դաշինքի)» կետադրական նշանով և բառերով,

2) 2-րդ մասի առաջին «կուսակցության» բառը փոխարինել «կուսակցության (կուսակցությունների դաշինքի)» կետադրական նշանով և բառերով:

**Հոդված 60.** Օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի առաջին և երրորդ պարբերությունները «կուսակցության» բառերից հետո լրացնել «(կուսակցությունների դաշինքի)» կետադրական նշաններով և բառերով:

**Հոդված 61.** Օրենսգրքի 92-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «նվիրատվություններից» բառը փոխարինել «մուծումներից» բառով,

2) 2-րդ մասում «նվիրատվություն կատարելու» բառերը փոխարինել «կատարելու մուծում» բառերով,

3) 2-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ. «Ընտրության երկրորդ փուլի դեպքում ընտրություններին մասնակցող կուսակցությունը (կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունները միասին) իրավունք ունեն կուսակցության (կուսակցությունների դաշինքի) հիմնադրամ կատարելու մուծում նվազագույն աշխատավարձի մինչև 200 000-ապատիկի չափով գումար:»,

4) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 62.** Օրենսգրքի 93-րդ հոդվածի՝

1) վերնագրում և տեքստում «ռադիոյով և հեռուստատեսությամբ» բառերը փոխարինել «տեսալսողական հաղորդումներով» բառերով,

2) տեքստում «հանրային հեռուստատեսության» բառերը փոխարինել «հանրային տեսալսողական հեռարձակողի» բառերով,

3) տեքստում «հանրային ռադիոյի» բառերը փոխարինել «հանրային լսողական հեռարձակողի» բառերով,

4) 1-ին մասում «ռադիոյի և հեռուստատեսության» բառերը փոխարինել «տեսալսողական մեդիածառայություն մատուցողների» բառերով:

**Հոդված 63.** Օրենսգրքի 115-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի առաջին պարբերությունում «նվիրատվություններից» բառը փոխարինել «մուծումներից» բառերով,

2) 2-րդ մասի երկրորդ պարբերությունում «նվիրատվություն կատարելու» բառերը փոխարինել «կատարելու մուծում» բառերով,

3) 3-րդ մասում «նվիրատվություն» բառը փոխարինել «մուծում» բառով:

**Հոդված 64.** Օրենսգրքի 118-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետում «միակ թեկնածուի» բառերը փոխարինել «թեկնածուներից մեկի» բառերով:

**Հոդված 65.** Օրենսգրքի 120-րդ հոդվածի 5-րդ մասում «մեկ շաբաթով» բառերը փոխարինել «երկու շաբաթով» բառերով:

**Հոդված 66.** Օրենսգրքի 121-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի առաջին պարբերության «քառասնօրյա» բառը փոխարինել «վաթսունօրյա» բառով,

2) 3-րդ մասի երկրորդ պարբերության «արտահերթ» բառը փոխարինել «հերթական» բառով:

**Հոդված 67.** Օրենսգրքի 122-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 122. Արտահերթ ընտրություն նշանակելը և անցկացնելը և թեկնածուներ առաջադրելու և գրանցելու ժամկետները**

1. Համայնքի ղեկավարի արտահերթ ընտրությունը նշանակվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սույն օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված օրերից որևէ մեկը այն հաշվարկով, որ պահպանվեն ընտրությունների կազմակերպման և անցկացման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետները:

2. Համայնքի ավագանու անդամների ընդհանուր թիվը կիսով չափ նվազելու դեպքում արտահերթ ընտրությունը նշանակվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով և ժամկետներում:

3. Թեկնածուների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը ընտրատարածքային ընտրական հանձնաժողով են ներկայացվում քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 35, և ոչ ուշ, քան 30 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն:

4. Թեկնածուների գրանցումը կատարվում է քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն:»:

**Հոդված 68.** Օրենսգրքի 127-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «հերթական ընտրությունն» բառերը փոխարինել «ընտրության քվեարկությունն» բառերով,

2) 2-րդ մասի առաջին պարբերության առաջին և երկրորդ նախադասություններում «60» թիվը փոխարինել «70» թվով, իսկ երկրորդ պարբերությունում «մեկ շաբաթով» բառերը փոխարինել «երկու շաբաթով» բառերով:

**Հոդված 69.** Օրենսգրքի 128-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 128. Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների արտահերթ ընտրություններ նշանակելը և անցկացնելը և ընտրական ցուցակների գրանցման համար նախատեսվող ժամկետները**

1. Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների արտահերթ ընտրություններ նշանակում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ համապատասխան ավագանու արձակվելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում:

2. Երևանի ավագանու արտահերթ ընտրությունը նշանակվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ այն հաշվարկով, որ ընտրություն նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ մտնի քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 70 օր առաջ:

3. Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների (բացառությամբ Երևանի) արտահերթ ընտրություններն անցկացվում են սույն օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված օրերից այն օրը, որ պահպանվեն ընտրությունների կազմակերպման և անցկացման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետները:

4. Եթե համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների արտահերթ ընտրության քվեարկության օրը համընկնում է

Ազգային ժողովի ընտրությունների քվեարկության օրվա հետ, ապա ավագանու ընտրության օրը հետաձգվում է երկու շաբաթով:

5. Երևանի ավագանու արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացվում քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 45, և ոչ ուշ, քան 35 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն:

6. Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների դեպքում ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցումը կատարվում է քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 35, և ոչ ուշ, քան 30 օր առաջ:

7. Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների (բացառությամբ Երևանի) ավագանիների արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով են ներկայացվում քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 45, և ոչ ուշ, քան 35 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն:

8. Ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցումը կատարվում է քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 35, և ոչ ուշ, քան 30 օր առաջ:»:

**Հոդված 70.** Օրենսգրքի 130-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի վեցերորդ պարբերությունում «առնվազն կեսը» բառերը փոխարինել «առնվազն մեկ երրորդը» բառերով,

2) լրացնել նոր 4.1-ին մաս.

«4.1. Ընտրություններին մասնակցելու դիմում ներկայացնելու համար կուսակցության (կուսակցությունների դաշինքի) էլեկտրոնային եղանակով ընտրական ցուցակի ձևավորման նպատակով Կենտրոնական ընտրական

հանձնաժողովը կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) տրամադրում է օգտահաշիվ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում կուսակցության, կուսակցությունների դաշինքի ձևավորման նպատակով օգտահաշիվ ստանալու, էլեկտրոնային եղանակով ընտրական ցուցակ ձևավորելու կարգը և օգտահաշիվ ստանալու նպատակով դիմումի էլեկտրոնային ձևաթուղթը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:»,

3) 5-րդ մասի չորրորդ պարբերությունում «ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի վերաբերյալ» բառերը հանել, իսկ «թեկնածուի դեպքում» բառերը փոխարինել «թեկնածուի վերաբերյալ անճշտությունները չվերացնելու կամ փաստաթղթերը չլրացնելու դեպքում ընտրական ցուցակում ընդգրկված տվյալ թեկնածուի գրանցումը մերժվում է և» բառերով:

**Հոդված 71.** Օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 72.** Օրենսգրքի 133-րդ հոդվածում՝

1) վերնագրում «կուսակցության» բառը փոխարինել «կուսակցության (կուսակցությունների դաշինքի)» կետադրական նշանով և բառերով,

2) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Ընտրական հանձնաժողովը կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցումը ճանաչում է անվավեր, եթե գրանցումից հետո հայտնի են դառնում փաստեր, որ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը կեղծված են:

Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու հետևանքով կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն անվավեր չի

ճանաչվում, եթե անգամ խախտվում են սույն օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները:»:

3) լրացնել նոր՝ 1.1-ին մաս.

«1.1. Ընտրական հանձնաժողովը կուսակցության համագումարի և մշտապես գործող ղեկավար մարմնի իրավազորության բացակայության կամ համապատասխան որոշումները ընդունված չլինելու հիմքով կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցումը կարող է անվավեր ճանաչել միայն այդ հիմքերի առկայությունը հաստատող դատական ակտի հիման վրա:»,

4) 3-րդ մասում «կուսակցության» բառը փոխարինել «կուսակցության (կուսակցությունների դաշինքի)» կետադրական նշանով և բառերով:

**Հոդված 73.** Օրենսգրքի 135.1-ին հոդվածի՝

1) 1-ին մասի 5-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

2) 2-5-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքում համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունը չկայացած ճանաչելու մասին ընտրական հանձնաժողովի որոշմամբ նշանակվում է նաև նոր ընտրություն, որն անցկացվում է ընտրությունը չկայացած ճանաչելու մասին ընտրական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող վաթսունօրյա ժամկետի վերջին կիրակի օրը:

Սույն մասով սահմանված կարգով նշանակված նոր ընտրությունը չկայացած ճանաչվելու դեպքում, ընտրական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշանակում է նոր ընտրություն և հայտարարում քվեարկության օրը:

3. Եթե սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում ընտրությունները չկայացած ճանաչվելու մասին ընտրական հանձնաժողովի որոշումը չի բողոքարկվել վարչական դատարան, ապա որոշումն ուժի մեջ

մտնելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշանակում է նոր ընտրություն և հայտարարում քվեարկության օր ոչ ուշ, քան Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող վաթսունօրյա ժամկետի վերջին կիրակի օրը:

4. Եթե սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում ընտրությունները չկայացած ճանաչվելու մասին ընտրական հանձնաժողովի որոշումը բողոքարկվել է վարչական դատարան, և վարչական դատարանի դատական ակտով ընտրական հանձնաժողովի որոշումը թողնվել է անփոփոխ, կամ որոշում է ընդունվել հայցադիմումի ընդունումը մերժելու մասին, ապա դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշանակում է նոր ընտրություն և հայտարարում քվեարկության օրը, ոչ ուշ, քան հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող վաթսունօրյա ժամկետի վերջին կիրակի օրը:

5. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դեպքում համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունը չկայացած ճանաչելու մասին ընտրական հանձնաժողովի որոշմամբ նշանակվում է նաև նոր ընտրություն, որն անցկացվում է ընտրությունը չկայացած ճանաչելու մասին ընտրական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող վաթսունօրյա ժամկետի վերջին կիրակի օրը:

Սույն մասով սահմանված կարգով նշանակված նոր ընտրությունը չկայացած ճանաչվելու դեպքում, ընտրական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշանակում է նոր ընտրություն և հայտարարում քվեարկության օրը:»,

3) 6-րդ մասում «՝ տվյալ ընտրության նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցին համապատասխան» կետադրական նշանը և բառերը հանել,

4) 7-րդ մասում «արտահերթ» բառը փոխարինել «հերթական» բառով,

5) 8-րդ մասում «Համապատասխան» բառը փոխարինել «Կենտրոնական» բառով:

**Հոդված 74.** Օրենսգրքի 138-րդ հոդվածի՝

1) վերնագրում «հեռուստատեսությամբ և ռադիոյով» բառերը փոխարինել «տեսալսողական հաղորդումներով» բառերով,

2) տեքստում «հանրային հեռուստատեսության» բառերը փոխարինել «հանրային տեսալսողական հեռարձակողի» բառերով,

3) տեքստում «հանրային ռադիոյի» բառերը փոխարինել «հանրային լսողական հեռարձակողի» բառերով,

4) 3-րդ մասում «ռադիոյի և հեռուստատեսության» բառերը փոխարինել «հանրային հեռարձակողների» բառերով:

**Հոդված 75.** Օրենսգրքի 139-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «նվիրատվություններից» բառը փոխարինել «մուծումներից» բառով,

2) 2-րդ մասում «նվիրատվություն» բառերը փոխարինել «մուծում» բառերով,

3) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 76.** Օրենսգրքի 141-րդ հոդվածում՝

1) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. Ընտրական ցուցակից ընտրվում է այն թեկնածուն, որի հերթական համարն ընտրական ցուցակում փոքր կամ հավասար է տվյալ ընտրական ցուցակին հասանելիք մանդատների թվին:

Եթե դրա արդյունքով կուսակցության մանդատների 70 տոկոսից ավելին բաժին է հասնում նույն սեռի ներկայացուցիչներին, ապա առավել շատ ներկայացված սեռի՝ 70 տոկոսը գերազանցող մանդատները տրամադրվում են ընտրական ցուցակի՝ պակաս ներկայացված սեռի նվազագույն համարով

թեկնածուներին, եթե այդպիսիք առկա են՝ ապահովելով պակաս ներկայացված սեռի 30 տոկոսից ոչ պակաս ներկայացվածություն: Եթե ընտրական ցուցակում պակաս ներկայացված սեռի ներկայացուցիչներ չկան, ապա այդ մանդատները մնում են թափուր: Եթե կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների թիվը փոքր է հասանելիք մանդատների թվից, ապա համապատասխան մանդատները մնում են թափուր:

Երևանի ավագանու անդամ ընտրված թեկնածուների մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմում է արձանագրություն, իսկ համամասնական ընտրակարգով անցկացվող մյուս համայնքների ավագանու անդամ ընտրված թեկնածուների մասին արձանագրություն է կազմում համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:

Երևանի ավագանու անդամ ընտրված թեկնածուների մասին արձանագրությունը՝ հնգօրյա ժամկետում, ուղարկվում է վարչապետին, իսկ համամասնական ընտրակարգով անցկացվող մյուս համայնքների ավագանու անդամ ընտրված թեկնածուների մասին արձանագրությունը՝ համապատասխան մարզպետին:

Արձանագրությունը կազմվում է ավագանի ընտրվելու մասին համապատասխան ընտրական հանձնաժողովի որոշման վիճարկման համար սահմանված ժամկետի ավարտին հաջորդող 5-րդ օրը, իսկ այդ որոշման վիճարկման դեպքում՝ համապատասխան որոշումն ընդունելու հաջորդող 5-րդ օրը:»,

2) 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«8. Մանդատից հրաժարված կամ ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը համապատասխան ընտրական հանձնաժողովի արձանագրությամբ այդ մասին հանձնաժողովին իրազեկելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, տրվում է այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուին, իսկ եթե դրա արդյունքում տվյալ խմբակցության որևէ սեռի

ներկայացուցիչների թիվը նվազում է և արդյունքում ցածր է լինելու 30 տոկոսից, ապա տրվում է այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի նվազ ներկայացված սեռի հաջորդ թեկնածուին, եթե կա: Եթե ընտրական ցուցակում նվազ ներկայացված սեռի թեկնածուներ չկան, ապա այդ մանդատը մնում է թափուր:

Եթե ընտրական ցուցակում այլ թեկնածու չկա, ապա մանդատը մնում է թափուր:»:

**Հոդված 77.** Օրենսգրքի 142-րդ հոդվածի՝

1) 6-րդ մասի երրորդ նախադասության «արտահերթ» բառը փոխարինել «հերթական» բառով,

2) 7-րդ մասը լրացնել նոր՝ 4-րդ կետով.

«4) եթե սույն օրենսգրքով սահմանված կարգով մանդատների բաշխման պահի դրությամբ չի ձևավորվում համայնքի ավագանու առնվազն կեսից ավելին:»,

3) 8-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Սույն հոդվածի 7-րդ մասով ընտրությունները չկայացած ճանաչվելու դեպքում համապատասխան ընտրական հանձնաժողովը ընտրությունները չկայացած ճանաչելու մասին ընտրական հանձնաժողովի որոշմամբ նշանակվում է նաև նոր ընտրություն, որն անցկացվում է ընտրությունը չկայացած ճանաչելու մասին ընտրական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող վաթսունօրյա ժամկետի վերջին կիրակի օրը:»,

4) 8-րդ մասի երկրորդ նախադասության «արտահերթ» բառը փոխարինել «հերթական» բառով:

**Հոդված 78.** Օրենսգրքի 142.2-րդ հոդվածի 7-րդ մասի առաջին պարբերության հինգերորդ նախադասությունում «անձանց» բառը փոխարինել «թեկնածուներին» բառով, իսկ վեցերորդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Լրացուցիչ քվեարկության արդյունքով ձայների հավասարության դեպքում առավելությունը տրվում է համայնքի ավագանու ընտրություններում առավել կողմ ձայներ ստացած կուսակցության (կուսակցությունների դաշինքի) թեկնածուին:»:

**Հոդված 79.** Օրենսգրքի 144-րդ հոդվածի 18-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 80.** Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Սույն օրենսգրքում կուսակցությանը վերաբերող բոլոր նորմերը, բացառությամբ 4-րդ, 8-րդ, 20-րդ, 20.1-ին, 21-րդ, 26-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ, 35-րդ, 44-րդ, 59-րդ, 61-րդ, 71-րդ, 74-րդ, 75-րդ, 81-րդ, 83-րդ, 84-րդ, 85-րդ, 86-րդ, 87-րդ, 88-րդ, 89-րդ, 90-րդ, 91-րդ, 92-րդ, 95-րդ, 97-րդ, 98-րդ, 129-րդ, 130-րդ, 132-րդ, 133-րդ, 135-րդ, 139-րդ և 141-րդ հոդվածներում առկա նորմերի, վերաբերում են նաև կուսակցությունների դաշինքին:»:

**Հոդված 81.** 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի ապրիլի 1-ից՝ բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի:

2. Սույն օրենքի 79-րդ հոդվածը ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

3. Սույն օրենքը պաշտոնապես հրապարակվելուց հետո մինչև դրա ուժի մեջ մտնելու պահը Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ընդունում է սույն օրենքի կարգավորումներով նախատեսված և դրանց կատարումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը: Սույն մասում նշված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը ուժի մեջ են մտնում սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից:

4. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների առաջին ատեստավորումը անցկացվում է 2025 թվականի համար:

5. Ընտրությունների նշանակման և անցկացման վերաբերյալ սույն օրենքով նախատեսվող նոր կարգավորումները տարածվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո նշանակված հերթական, արտահերթ ընտրությունների, ինչպես նաև դրանց արդյունքում կազմակերպվող նոր հերթական, նոր ընտրությունների, վերաքվեարկության և ընտրությունների երկրորդ փուլի վրա: Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո մինչ դրա ուժի մեջ մտնելը նշանակված հերթական, արտահերթ ընտրությունների, ինչպես նաև դրանց արդյունքում կազմակերպվող նոր հերթական, նոր ընտրությունների, վերաքվեարկության և ընտրությունների երկրորդ փուլի վրա տարածվում են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ընտրական գործընթացների վերաբերյալ գործող կարգավորումները:

*Տեղեկանք փոփոխվող հոդվածների*

*Լրամշակված նախագիծ*
*Երկրորդ ընթերցում*
*Կ-927-26.09.2024-ՊԻ-011/1*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** 2016 թվականի մայիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 4-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «թեկնածուի (կուսակցության)» բառերը և կետադրական նշանը փոխարինել «թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի)» բառերով և կետադրական նշաններով,

2) լրացնել նոր՝ 2-րդ մաս.

~~«2. Ոչ ոք չի կարող հարկադրել ընտրողին բացահայտելու, թե ինչպես է ընտրողը մտադիր քվեարկելու կամ ինչպես է քվեարկել թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին:»:~~

«2. Ոչ որ չի կարող հարկադրանքի որևէ եղանակով ընտրողից բացահայտել, թե ինչպես է ընտրողը մտադիր քվեարկելու կամ ինչպես է քվեարկել:»:

~~**Հոդված 2.** Օրենսգրքի 7-րդ հոդվածի՝~~

~~1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.~~

«1. Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցկացվում են պարբերաբար՝ Սահմանադրությամբ և սույն օրենսգրքով սահմանված ժամկետներում, բացառությամբ սույն օրենսգրքի 7.1-ին հոդվածով նախատեսված դեպքերի:»,

2) 2-4-րդ մասերը ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 3.** Օրենսգիրքը լրացնել նոր՝ 7.1-ին հոդվածով.

«**Հոդված 7.1. Ընտրություններ նշանակելու և անցկացնելու արգելքը: Ընտրությունների նշանակումը և անցկացումը ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո**

1. Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ Ազգային ժողովի ընտրություններ չեն նշանակվում և չեն անցկացվում:

2. Ռազմական դրության ժամանակ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ չեն նշանակվում և չեն անցկացվում: Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ չեն նշանակվում և չեն անցկացվում: Հայաստանի Հանրապետության տարածքի մի մասում արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ նշանակվում և անցկացվում են միայն այն համայնքներում, որոնց տարածքում արտակարգ դրություն հայտարարված չէ:

Սույն մասով նախատեսված սահմանափակումները չեն տարածվում համամասնական ընտրակարգով ձևավորված ավագանու կողմից անուղղակի ընտրակարգով ընտրվող համայնքի ղեկավարի ընտրությունների վրա:

3. Եթե ռազմական կամ արտակարգ դրությունը հայտարարվել է Ազգային ժողովի կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ նշանակվելուց հետո մինչև թեկնածուներ առաջադրելու համար

նախատեսված ժամկետի սկիզբը, ապա ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու պահից ընտրական գործընթացն իրավունքի ուժով համարվում է դադարեցված:

Եթե ռազմական կամ արտակարգ դրությունը հայտարարվել է Ազգային ժողովի կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների թեկնածուներ առաջադրելու համար նախատեսված ժամկետի սկսվելուց հետո մինչև ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները ամփոփելու և դրանք արձանագրությամբ վավերացնելու պահը, ապա ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու պահից ընտրական գործընթացն իրավունքի ուժով համարվում է կասեցված, որից հետո ընտրական գործընթացի վերսկսումը պարտադիր ենթադրում է նոր քվեարկության կազմակերպում և անցկացում:

Եթե ռազմական կամ արտակարգ դրությունը հայտարարվել է Ազգային ժողովի կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները ամփոփելու և դրանք արձանագրությամբ վավերացնելու պահից հետո մինչև համապատասխանաբար՝ նորընտիր Ազգային ժողովի կազմավորումը, ավագանու ձևավորումը, կամ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքները մարզպետին ներկայացնելը, ապա ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու պահից ընտրական գործընթացն իրավունքի ուժով համարվում է կասեցված՝ բացառությամբ սույն հոդվածով նախատեսված՝ ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները ամփոփելու և դրանք արձանագրությամբ վավերացնելու պահին հաջորդող ընտրական գործընթացի փուլերին վերաբերող առանձնահատուկ դեպքերի: Ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները ամփոփելու և դրանք արձանագրությամբ վավերացնելու պահից հետո կասեցված ընտրական գործընթացի դեպքում սույն օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված իրերի պահպանման կարգը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

~~Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելուց հետո՝ անհապաղ, հանդես է գալիս Ազգային ժողովի կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրական գործընթացը համապատասխանաբար դադարեցված կամ կասեցված լինելու մասին հայտարարությամբ և դրա վերաբերյալ ծանուցում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին և տեղամասային ընտրական հանձնաժողովներին:~~

~~4. Ազգային ժողովի ընտրությունների դեպքում ռազմական կամ արտակարգ դրության հայտարարվելու պահից կասեցված ընտրական գործընթացը վերսկսվում է ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո, այն հաշվարկով, որ ընտրությունները անցկացվեն ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ շուտ, քան 50, և ոչ ուշ, քան 65 օր հետո: Ազգային ժողովի ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները ամփոփելու և դրանք արձանագրությամբ վավերացնելուց հետո կասեցված ընտրական գործընթացը վերսկսվում է ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ ուշ, քան 7 օրվա ընթացքում պատճառաբանված որոշում է կայացնում ընտրական գործընթացի վերսկսման մասին, որում նշում է կատարվում ընտրական գործընթացը վերսկսելու օրվա և ընտրական գործընթացի այն պահի վերաբերյալ, որից պետք է շարունակվի ընտրական գործընթացը, կամ Ազգային ժողովի ընտրական գործընթացի դադարեցված լինելու մասին և դրանց մասին հանդես է գալիս հայտարարությամբ:~~

~~5. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում պատճառաբանված որոշում է կայացնում ընտրական գործընթացի վերսկսման մասին, որում նշում է կատարվում ընտրական գործընթացի այն պահի վերաբերյալ, որից պետք է շարունակվի ընտրական գործընթացը, կամ տեղական ինքնակառավարման մարմինների~~

ընտրական գործընթացի դադարեցված լինելու մասին և դրանց մասին հանդես է գալիս հայտարարությամբ: Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում ռազմական կամ արտակարգ դրության հայտարարվելու պահից կասեցված ընտրական գործընթացը վերսկսվում է ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո 10-րդ օրը:

6. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված դեպքերում մինչ ռազմական կամ արտակարգ դրության հայտարարումը ընտրական գործընթացների իրականացված գործողությունների՝ ընտրական գործընթացների վերսկսումից հետո կրկնելու որոշման դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պատճառաբանում է դրանք կրկնելու անհրաժեշտությունը:

Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված դեպքերում՝ քվեարկության օրվանից մինչև ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները ամփոփելու և դրանք արձանագրությամբ վավերացնելու պահը կասեցված ընտրական գործընթացի վերսկսումից հետո նոր քվեարկության կազմակերպումը և անցկացումը պարտադիր է:

Ընտրական գործընթացները վերսկսվելուց հետո ընտրությունները կազմակերպվում և անցկացվում են, ինչպես նաև ընտրական գործընթացները իրականացվում են սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով:

7. Ռազմական կամ արտակարգ դրության պատճառով չնշանակված կամ չանցկացված՝ Ազգային ժողովի կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները նշանակվում և անցկացվում են սույն հոդվածով, ինչպես նաև սույն օրենսգրքի 122.1-ին և 128.1-ին հոդվածներով սահմանված ժամկետներում:

8. Ռազմական կամ արտակարգ դրության պատճառով Ազգային ժողովի չնշանակված կամ չանցկացված ընտրությունները նշանակվում են Հանրապետության նախագահի հրամանագրով՝ ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ ուշ, քան 7 օր հետո, և անցկացվում են ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ շուտ, քան 50, և ոչ ուշ, քան 65 օր հետո:

~~Ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սույն հոդվածի 4-րդ և 12-րդ մասերում նշված ընտրական գործընթացի դադարեցված լինելու մասին որոշում կայացնելու դեպքում Ազգային ժողովի չանցկացված ընտրությունները նշանակվում են Հանրապետության նախագահի հրամանագրով՝ ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ ուշ, քան 10 օր հետո, և անցկացվում են ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ շուտ, քան 50, և ոչ ուշ, քան 65 օր հետո:~~

~~9. Ռազմական կամ արտակարգ դրության պատճառով չնշանակված կամ չանցկացված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցկացվում են ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած օրերից առավել մոտ այն օրը, որ պահպանվեն հերթական ընտրությունների կազմակերպման և անցկացման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետները:~~

~~10. Ռազմական կամ արտակարգ դրության պատճառով չնշանակված կամ չանցկացված ընտրությունները կազմակերպվում և անցկացվում են սույն օրենսգրքով հերթական ընտրությունների համար սահմանված ընդհանուր կարգով՝ հաշվի առնելով ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո ընտրությունների կազմակերպման և անցկացման՝ սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկությունները:~~

~~11. Նոր քվեաթերթիկների, քվեարկության ծրարների և ինքնասոսնձվող դրոշմանիշների, ինչպես նաև ընտրական այլ նյութերի տպագրությունն իրականացվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ՝ հաշվի առնելով դրանց տպագրության անհրաժեշտությունը:~~

~~12. Ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում ընտրական գործընթացների դադարեցման, կասեցման և վերսկսման վերաբերյալ սույն հոդվածի 3-րդ և 6-րդ մասերով սահմանված դրույթները կիրառվում են նաև Ազգային ժողովի ընտրությունների վերաքվեարկության կամ առանձին ընտրական~~

~~տեղամասերում վերաքվեարկության և Ազգային ժողովի ընտրության երկրորդ փուլի դեպքերում:~~

~~Ազգային ժողովի ընտրությունների երկրորդ փուլի դեպքում ռազմական կամ արտակարգ դրության հայտարարվելու պահից կասեցված ընտրական գործընթացը վերսկսվում է ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո 10-րդ օրը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում պատճառաբանված որոշում է կայացնում ընտրական գործընթացի վերսկսման մասին, որում նշում է կատարվում ընտրական գործընթացի այն պահի վերաբերյալ, որից պետք է շարունակվի ընտրական գործընթացը, կամ Ազգային ժողովի ընտրական գործընթացի դադարեցված լինելու մասին և դրանց մասին հանդես է գալիս հայտարարությամբ:~~

~~Ազգային ժողովի ընտրությունների վերաքվեարկության կամ առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկության դեպքում ռազմական կամ արտակարգ դրության հայտարարվելու պահից կասեցված ընտրական գործընթացը վերսկսվում է ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո 10-րդ օրը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում պատճառաբանված որոշում է կայացնում ընտրական գործընթացի վերսկսման մասին, որում նշում է կատարվում ընտրական գործընթացի այն պահի վերաբերյալ, որից պետք է շարունակվի ընտրական գործընթացը, կամ Ազգային ժողովի ընտրական գործընթացի դադարեցված լինելու մասին և դրանց մասին հանդես է գալիս հայտարարությամբ: Վերաքվեարկության օրվանից մինչև քվեարկության նախնական արդյունքները ամփոփելու և դրանք արձանագրությամբ վավերացնելու պահը կասեցված ընտրական գործընթացի վերսկսումից հետո նոր վերաքվեարկության կազմակերպումը և անցկացումը պարտադիր է:~~

~~Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների վերաքվեարկություն կամ առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն նշանակվելուց հետո ռազմական կամ արտակարգ դրության հայտարարման դեպքում ընտրական գործընթացը իրավունքի ուժով համարվում է դադարեցված: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելուց հետո՝ անհապաղ, հանդես է գալիս տեղական ինքնակառավարման մարմինների ընտրական գործընթացը դադարեցված լինելու մասին հայտարարությամբ և դրա վերաբերյալ ծանուցում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին և տեղամասային ընտրական հանձնաժողովներին:»:~~

**Հոդված 24**. Օրենսգրքի 8-րդ հոդվածի՝

1) 5-րդ մասի առաջին և երկրորդ պարբերությունների «5 օրվա» թիվը և բառը փոխարինել «10 օրվա» թվով և բառով,

2) 5-րդ մասի չորրորդ պարբերությունը «ներկայացման կարգը» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև հայտարարագրում ներառված՝ հրապարակման ոչ ենթական տվյալների ցանկը» կետադրական նշաններով և բառերով,

3) 6-րդ մասը «համացանցային կայքում» բառերից հետո լրացնել «՝ բաց տվյալների ձևաչափով» կետադրական նշանով և բառերով,

4) 7-րդ մասի առաջին և երկրորդ նախադասությունները «ըստ գտնվելու վայրի ընտրողների» բառերից հետո լրացնել «, նախընտրած վայրի ընտրողների» կետադրական նշաններով և բառերով,

5) 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«8. Ընտրողները սույն օրենսգրքով սահմանված կարգով տեղեկացվում են ընտրական հանձնաժողովների կազմերի, գտնվելու վայրերի, աշխատաժամերի, ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունների վերաբերյալ դիմումներ տալու ժամկետների, թեկնածուների առաջադրման և գրանցման ժամկետների,

քվեարկության օրվա, տեղի, ժամանակի, քվեարկության և ընտրությունների արդյունքների մասին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրություն նշանակելու վերաբերյալ հրամանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում ընտրություն նշանակվելու վերջնաժամկետի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, ~~հանրային տեսալսողական հեռարձակողի և հանրային լսողական հեռարձակողի եթերով և~~ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում հրապարակում է ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում՝ նաև այն համայնքների ցանկը, որտեղ անցկացվելու են ընտրությունները:

Սույն մասում սահմանված ժամկետներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հանրային տեսալսողական հեռարձակողի և հանրային լսողական հեռարձակողի եթերով հրապարակում է տեղեկատվություն՝ ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունների վերաբերյալ դիմումներ ներկայացնելու ժամկետների, թեկնածուների առաջադրման և գրանցման ժամկետների, ինչպես նաև քվեարկության օրվա և ժամանակի մասին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հանրային տեսալսողական հեռարձակողի և հանրային լսողական հեռարձակողի եթերով ընտրողների համար հրապարակում է նաև տեղեկատվություն իրենց ընտրական տեղամասի համարի և տեղամասային կենտրոնի հասցեի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու միջոցի և ձևի վերաբերյալ:»,

6) 9-րդ մասի երկրորդ պարբերության «հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության ուղիղ եթերով» բառերը փոխարինել «հանրային տեսալսողական հեռարձակողի և հանրային լսողական հեռարձակողի ուղիղ եթերով» բառերով:

7) 11-րդ մասի առաջին նախադասության վերջում «հանձնարարությամբ» բառից հետո լրացնել «, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչները՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի գրավոր հանձնարարությամբ» կետադրական նշանները և բառերը,

8) 11.1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«11.1. Ազգային ժողովի ընտրությունների, ինչպես նաև համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների ժամանակ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով անցկացված մրցույթի արդյունքում ընտրված մասնագիտացված կազմակերպությունն իրականացնում է ընտրական տեղամասերից քվեարկության ընթացքի, քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նիստերի տեսանկարահանում և միաժամանակյա համացանցային հեռարձակում՝ ուղիղ ժամանակային ռեժիմում՝ հատուկ ստեղծված կայքի (կայքերի) միջոցով: Հեռարձակման ժամանակ տեսագրության վրա պետք է տեսանելի լինեն իրական ժամանակը և տեղամասային կենտրոնի համարը, իսկ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նիստերի դեպքում իրական ժամանակը և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի համարը:

Տեսանկարահանումը պետք է իրականացվի անշարժ տեսախցիկների միջոցով: Տեսախցիկների տեսադաշտում պետք է լինեն քվեատուփը, ընտրողների գրանցման, քվեարկության ծրարների ու քվեաթերթիկների հատկացման և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացները: Տեսանկարահանումը և համացանցային հեռարձակումը պետք է իրականացվեն սույն օրենսգրքով սահմանված՝ քվեարկության գաղտնիության սկզբունքի պահպանմամբ:

Սահմանված կարգով ընտրված մասնագիտացված կազմակերպության կողմից նաև տեսաձայնագրվում և հեռարձակվում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների՝ արդյունքների ամփոփման նիստերը և վերահաշվարկը: Հեռարձակման ժամանակ տեսագրության վրա պետք է

տեսանելի լինեն իրական ժամանակը և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի համարը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մասնագիտացված կազմակերպության հետ կնքում է համապատասխան պայմանագիր, որով սահմանվում են նաև սույն մասով նախատեսված կարգով ընտրական տեղամասերից քվեարկության ընթացքի, քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների նիստերի և վերահաշվարկի տեսանկարահանման (տեսաձայնագրման) և միաժամանակյա համացանցային հեռարձակման կարգն ու պայմանները, ինչպես նաև տեղամասերի ցանկը:

Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողը և ընտրական հանձնաժողովները պարտավոր են աջակցել մասնագիտացված կազմակերպությանը տեսանկարահանման (տեսաձայնագրման) և համացանցային հեռարձակման գործընթացը կազմակերպելու հարցում, սակայն պատասխանատվություն չեն կրում գործընթացի կազմակերպման և դրա որակի համար:

Մասնագիտացված կազմակերպության կողմից ընտրական տեղամասում և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում իրականացված տեսանկարահանված (տեսաձայնագրված) նյութերը հասանելի են մնում մասնագիտացված կազմակերպության հատուկ ստեղծած կայքում մինչև ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումը: Կազմակերպության հետ կնքված պայմանագրով կարող է նախատեսվել ավելի երկար ժամկետ: Տեսանկարահանված (տեսաձայնագրված) նյութերի պատճենները գրավոր դիմումի հիման վրա կարող են տրամադրվել ընտրական հանձնաժողովներին, ընտրություններին մասնակցող թեկնածուներին, կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) և դիտորդական առաքելություն իրականացրած կազմակերպություններին՝ ընտրական իրավունքի պաշտպանության շրջանակներում՝ պատճենահանման ինքնարժեքի վճարման

պայմանով: Դիմումը կարող է ներկայացվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովին՝ մինչև ընտրական հանձնաժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման վիճարկման համար սահմանված ժամկետի ավարտը, իսկ այդ որոշման վիճարկման դեպքում՝ մինչև վերջնական դատական ակտի ընդունումը: Դիմումը պետք է ներառի ընտրության անվանումը և համապատասխանաբար այն ընտրական տեղամասի համարը կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի համարը, որի տեսանկարահանված (տեսաձայնագրված) նյութերից պահանջվում է պատճենը, և դիմումի հետ պետք է ներկայացվի մասնագիտացված կազմակերպության սահմանած պահանջները բավարարող էլեկտրոնային կրիչ:

Տեսանկարահանված (տեսաձայնագրված) նյութերն ~~արխիվացնում~~ արխիվացվում և պահպանվում են քվեարկությունից հետո հինգ տարի ժամկետով ~~պահպանում է մասնագիտացված կազմակերպությունը~~: Տեսանկարահանված (տեսաձայնագրված) նյութերի արտահանման, իրավասու մարմնին հանձնման և արխիվացման կարգը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:»,

9) 13-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 3~~5~~**. Օրենսգրքի 8.1-ին հոդվածում՝

1) 2-րդ մասի առաջին նախադասությունից հանել «հասարակական» և «մշտական» բառերը,

2) 2-րդ մասի առաջին նախադասությունը «կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները)» բառերից և կետադրական նշանից հետո լրացնել «, մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուները» կետադրական նշանով և բառերով,

3) 2-րդ մասի երկրորդ նախադասությունից~~ան~~ հանել «Մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների» բառերը,

4) 3-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 4. Օրենսգրքի 9-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել նոր երրորդ նախադասությամբ.**

«Ազգային ժողովի հերթական ընտրությունների և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունների դեպքում լիազոր մարմինն ընտրողների ռեգիստրը՝ ըստ տեղամասերի, քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 41 օր և 7 օր առաջ, իսկ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դեպքում՝ 21 օր և 7 օր առաջ էլեկտրոնային եղանակով ներկայացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ հանձնաժողովի համացանցային կայքում որոնման հնարավորությամբ տեղադրելու համար:»:

**Հոդված 5~~6~~.** Օրենսգրքի 10-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«3. Ազգային ժողովի ընտրությունների դեպքում այլ համայնքի կամ նույն համայնքի այլ բնակավայրի հաշվառում ունեցող ընտրողները, իսկ համամասնական ընտրակարգով անցկացվող՝ համայնքի ավագանու ընտրությունների դեպքում նույն համայնքի այլ բնակավայրի հաշվառում ունեցող ընտրողները քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ՝ մինչև ժամը 14:00-ն, լիազոր մարմնի կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավարին (սույն հոդվածում այսուհետ միասին՝ լիազոր մարմին) ներկայացնում են դիմում՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ավելացվելու մասին՝ նշելով քվեարկության օրը գտնվելու վայրի հասցեն: Լիազոր մարմինը դիմումը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, ընտրողի տվյալները ժամանակավորապես հանում է ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից և ավելացնում ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում և ծանուցում է դիմողին այդ մասին: Ծանուցման մեջ նշվում է գտնվելու վայրի ընտրական տեղամասի համարը և տեղամասային կենտրոնի հասցեն: Դիմումը կարող է ներկայացվել էլեկտրոնային կամ թղթային եղանակով, էլեկտրոնային

դիմումներն ապահովվում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Այլ անձի անունից դիմում ներկայացնելու դեպքում դիմումատուն պարտավոր է ներկայացնել նոտարական վավերացմամբ հաստատված լիազորագիր:»,

2) 3.1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3.1. Ընտրությունների ժամանակ իրենց տեղամասային կենտրոնում քվեարկելու անհնարինության դեպքում տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողները քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ՝ մինչև ժամը 14:00-ն, կարող են լիազոր մարմին դիմում ներկայացնել՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և իրենց նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին՝ նշելով տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձանց համար մատչելի ընտրական տեղամասի համարը: Լիազոր մարմինը դիմումը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, ընտրողի տվյալները ժամանակավորապես հանում է ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից և ավելացնում նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում և ծանուցում է դիմողին այդ մասին: Ծանուցման մեջ նշվում է նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասի համարը և տեղամասային կենտրոնի հասցեն:

Դիմումը կարող է ներկայացվել էլեկտրոնային կամ թղթային եղանակով: Տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձի անունից դիմում ներկայացնելու դեպքում դիմումատուն պարտավոր է ներկայացնել նոտարական վավերացմամբ հաստատված լիազորագիր: Հաշմանդամության հիմքով տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձանց էլեկտրոնային դիմումները կարող են ապահովվել ստորագրության՝ դիմողի համար ընդունելի ցանկացած եղանակով, իսկ տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող այլ անձանց էլեկտրոնային դիմումներն ապահովվում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Հաշմանդամության հիմքով տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձանց

էլեկտրոնային թվային ստորագրությամբ չապահովված էլեկտրոնային դիմումներին կից ներկայացվում է նաև անձի հաշմանդամություն ունենալը հաստատող փաստաթուղթը կամ դրա պատճենը:

Տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողների համար մատչելի ընտրական տեղամասերի ցանկը հրապարակում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ոչ ուշ, քան քվեարկության օրվանից ~~40 օր և 20 օր առաջ~~ 40 օր առաջ, Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դեպքում՝ 20 օր առաջ:»,

3) 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«4. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ, ինչպես նաև համամասնական ընտրակարգով անցկացվող՝ համայնքի ավագանու ընտրությունների ժամանակ տվյալ համայնքում ընտրելու իրավունք ունեցող տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները և տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետները կարող են ընդգրկվել այն ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում, որտեղ նշանակված են տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ կամ տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետներ՝ ժամանակավորապես հանվելով ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից: Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները և տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետները ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակներում ընդգրկվելու մասին դիմում լիազոր մարմին կարող է ներկայացվել քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ՝ մինչև ժամը 14.00-ն՝ նշելով այն ընտրական տեղամասի համարը, որտեղ նշանակված են տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ կամ տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետներ: Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներին ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակներում ընդգրկվելու մասին դիմումը լիազոր մարմին կարող է

ներկայացվել նաև նրան նշանակող կուսակցության կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից, իսկ տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետների դեպքում՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից՝ համապատասխանաբար՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի, տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետի դիմումի հիման վրա, որը պետք է ներկայացվի քվեարկության օրվանից առնվազն 14 օր առաջ: Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների և տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետների անունից դիմում կարող են ներկայացնելու նաև այլ անձինք՝ ներկայացնելով նոտարական վավերացմամբ հաստատված լիազորագիր: Սույն մասում նշված դիմումները կարող են ներկայացվել էլեկտրոնային կամ թղթային եղանակով, էլեկտրոնային դիմումներն ապահովվում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Լիազոր մարմինը դիմումը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, ընտրողի տվյալները ժամանակավորապես հանում է ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից և ավելացնում ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում և ծանուցում է դիմողին այդ մասին: Ծանուցման մեջ նշվում է գտնվելու վայրի ընտրական տեղամասի համարը և տեղամասային կենտրոնի հասցեն:»,

4) 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«5. Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող ընտրողներն Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ քվեարկությանը մասնակցելու համար քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ՝ մինչև ժամը 14:00-ն, լիազոր մարմին ներկայացնում են դիմում՝ ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու մասին՝ նշելով քվեարկության օրը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վայրի հասցեն: Լիազոր մարմինը դիմումը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում ընտրողին ընդգրկում է քվեարկության օրը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վայրի ընտրական տեղամասի

ընտրողների ցուցակում և ծանուցում է դիմողին այդ մասին: Ծանուցման մեջ նշվում է գտնվելու վայրի ընտրական տեղամասի համարը և տեղամասային կենտրոնի հասցեն: Դիմումը կարող է ներկայացվել էլեկտրոնային կամ թղթային եղանակով, էլեկտրոնային դիմումներն ապահովվում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող ընտրողի անունից դիմում ներկայացնելու դեպքում դիմումատուն պարտավոր է ներկայացնել նոտարական վավերացմամբ հաստատված լիազորագիր:»,

5) լրացնել նոր՝ 5.1-ին մաս.

«5.1. Սույն հոդվածի 3-րդ, 3.1-ին, 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված դեպքերում ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից հանվելու և ըստ գտնվելու կամ նախընտրած վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ավելացվելու, ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու վերաբերյալ ծանուցման ձևերը և կարգը, ինչպես նաև ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու, ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկվելու մասին դիմումների ձևը և էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու կարգը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Սույն հոդվածի 3-րդ, 3.1-ին, 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված դեպքերում ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից հանվելու և ըստ գտնվելու կամ նախընտրած վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ավելացվելու, ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու դիմումները մերժելու դեպքում լիազոր մարմինը եռօրյա ժամկետում ծանուցմամբ հայտնում է համապատասխան դիմումը մերժված լինելու մասին:»,

6) 7-րդ մասի առաջին պարբերությունում «7» թիվը փոխարինել «12» թվով,

7) 9-րդ մասում «10 օր և 6 օր առաջ, իսկ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դեպքում՝ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 30 օր, 10 օր և 6» թվերը և բառերը փոխարինել «15 օր և 9 օր առաջ, իսկ Ազգային ժողովի

արտահերթ ընտրությունների դեպքում՝ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 30 օր, 15 օր և 9» թվերով և բառերով,

8) 11-րդ մասում «10 օր, 5 օր և 3 օր» թվերը և բառերը փոխարինել «15 օր և 5 օր» թվերով և բառերով:

**Հոդված 6~~7~~**. Օրենսգրքի 11-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «ըստ գտնվելու վայրի ընտրողների» բառերից հետո լրացնել «, նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասում ընդգրկված ընտրողների» կետադրական նշանով և բառերով,

2) 1-ին մասը լրացնել նոր՝ երրորդ նախադասությունով՝

«Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունների ժամանակ տեղամասի ընտրողների ցուցակում համարակալման շարունակականությամբ ըստ առանձին բաժինների ներառվում են նաև ըստ գտնվելու վայրի ընտրողների և նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասում ընդգրկված ընտրողների ցուցակները, իսկ մեծամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ղեկավարի ընտրությունների ժամանակ տեղամասի ընտրողների ցուցակում համարակալման շարունակականությամբ առանձին բաժնով ներառվում է նաև ըստ նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասում ընդգրկված ընտրողների ցուցակը:»,

3) 4-րդ մասում «1200» թիվը՝ իր բոլոր հոլովաձևերով փոխարինել «1100» թվով:

**Հոդված 7~~8~~.** Օրենսգրքի 12-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «առաջ, իսկ» բառերից հետո լրացնել «Ազգային ժողովի» բառերով,

2) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրություն նշանակելու վերաբերյալ հրամանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ հնգօրյա ժամկետում լիազոր

մարմինը Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրում է տեղեկանք ընտրողների թվի վերաբերյալ՝ ըստ մարզերի և Երևան քաղաքի վարչական շրջանների:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում՝ ընտրություն նշանակելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, լիազոր մարմինը Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրում է տեղեկանք ընտրողների թվի վերաբերյալ՝ ըստ համայնքների, իսկ Երևանի ավագանու ընտրությունների դեպքում՝ ըստ Երևան քաղաքի վարչական շրջանների:

Լիազոր մարմինն ընտրական տեղամասերը կազմավորելուց հետո՝ երկօրյա ժամկետում, ինչպես նաև քվեարկության օրվանից 15 օր և 8 օր առաջ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրում է տեղեկանք ընտրողների թվի վերաբերյալ՝ Ազգային ժողովի ընտրությունների դեպքում՝ ըստ մարզերի (Երևան քաղաքի վարչական շրջանների) և ընտրական տեղամասերի, իսկ Երևանի ավագանու ընտրությունների դեպքում՝ ըստ Երևան քաղաքի վարչական շրջանների և ընտրական տեղամասերի:

Տեղական ինքնակառավարման մարմինների (բացառությամբ Երևանի ավագանու) ընտրությունների ժամանակ լիազոր մարմինը ընտրական տեղամասերը կազմավորելուց հետո՝ երկօրյա ժամկետում, ինչպես նաև քվեարկության օրվանից 15 օր և 8 օր առաջ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին տրամադրում է տեղեկանք ընտրողների թվի վերաբերյալ՝ ըստ համայնքների և ընտրական տեղամասերի:

Սույն օրենսգրքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ էլեկտրոնային եղանակով կազմված ընտրողների ցուցակները լիազոր մարմինը Կենտրոնական ընտրական հանձնաժողովին է տրամադրում քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 8 օր առաջ:

Լիազոր մարմինը սույն մասում նշված տեղեկանքները ներկայացնում է էլեկտրոնային եղանակով: Նշված տեղեկանքները հրապարակվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:»:

**Հոդված 8~~9~~.** Օրենսգրքի 13-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Ընտրողների նախնական ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, քվեարկության օրվանից 40 օր առաջ, Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դեպքում՝ 20 օր առաջ, իսկ ընտրողների վերջնական ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, քվեարկության օրվանից 7 օր առաջ տեղադրվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության համացանցային կայքերում՝ ներբեռնելու հնարավորությամբ:~~Ընտրությունների ժամանակ լիազոր մարմինն ընտրողների նախնական ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, քվեարկության օրվանից 40 օր առաջ, Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դեպքում՝ 20 օր առաջ, իսկ ընտրողների վերջնական ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, քվեարկության օրվանից 7 օր առաջ տեղադրում է համացանցում՝ www.police.am հասցեով:~~»,

2) 3-րդ մասը «առաջ, իսկ» բառերից հետո լրացնել «Ազգային ժողովի» բառերով,

3) 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«7. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրված ցուցակները հրապարակվում են հանձնաժողովի համացանցային կայքում սույն օրենսգրքի 73-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետում, որոնք պահպանվում են մինչև քվեարկության արդյունքների ամփոփման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի ավարտը, իսկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը դատական կարգով վիճարկելու դեպքում՝ մինչև դատական ակտի ուժի մեջ մտնելը: Նշված

ժամկետների ավարտից հետո ընտրողների ստորագրված ցուցակները կամ դրանցից քաղվածքներ կարող են տրամադրվել բացառապես ընտրական գործընթացներին առնչվող քրեական վարույթի շրջանակներում: Ընտրողների ստորագրված ցուցակների էլեկտրոնային տարբերակը Կենտրոնական ընտրական հանձնաժողովում պահպանվում է քվեարկությունից հետո հինգ տարի ժամկետով: Քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրված ցուցակները պահպանության են հանձնվում Հայաստանի Հանրապետության պետական արխիվ՝ սահմանված կարգով պահպանելու համար:»:

**Հոդված 9~~10~~**. Օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասում «14» թիվը փոխարինել «12» թվով:

**Հոդված 10~~11~~**. Օրենսգրքի 16-րդ հոդվածի 3-րդ մասում՝

1) առաջին նախադասությունում «2000» թիվը փոխարինել «2200» թվով,

2) երկրորդ նախադասությունը «10-րդ հոդվածով նախատեսված դեպքերում» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ՝ համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի առաջարկությամբ, եթե ընտրական տեղամասի ընտրողների ~~նվազագույն կամ~~ առավելագույն թվի փոփոխությունն անհրաժեշտ է սույն օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխանող տեղամասային կենտրոնի և քվեարկության սենյակի ընտրության նպատակով» կետադրական նշանով և բառերով:

**Հոդված 11~~2~~**. Օրենսգրքի 17-րդ հոդվածի՝

3) 2-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Տեղամասային կենտրոնը պետք է հնարավորին չափ մոտ լինի ընտրական տեղամասում գտնվող բնակելի շենքերին և տներին: Տեղամասային կենտրոնը պետք է ընտրվի այնպես, որ հնարավորինս ապահովվի հաշմանդամություն

ունեցող, ինչպես նաև տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող և տեսողության խնդիր ունեցող անձանց անխոչընդոտ մուտքն ու ելքը և տեղաշարժը տեղամասային կենտրոնում: Տեղամասային կենտրոնում քվեարկության սենյակը պետք է ընտրվի այնպես, որ ապահովվեն քվեարկության բնականոն ընթացքը և հանձնաժողովի բնականոն աշխատանքը: Տեղամասային կենտրոնի գտնվելու վայրը և քվեարկության սենյակը սահմանելու և քվեարկության սենյակի՝ սույն օրենսգրքի 57-րդ հոդվածով սահմանված պահանջներին համապատասխան կահավորման համար պատասխանատու է համայնքի ղեկավարը: Սույն գործառույթը համայնքի ղեկավարի համար սեփական լիազորություն է:»,

4) 5-րդ մասի «տեղաշարժման դժվարություններ և տեսողության խնդիրներ ունեցող» բառերը փոխարինել «հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող և տեսողության խնդիր ունեցող» բառերով և կետադրական նշաններով:

**Հոդված 12~~3~~.** Օրենսգրքի 18-րդ հոդվածի~~՝~~

~~1)~~ 2.1-ին մասի երրորդ նախադասությունում «մինչև քվեարկության օրը» բառերը փոխարինել «քվեարկության օրվանից 2 օր առաջ» բառերով~~,~~

~~2) 4-րդ մասը ուժը կորցրած ճանաչել~~:

**Հոդված 13~~4~~.** Օրենսգրքի 19-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում չորրորդ նախադասությունում «տվյալ համայնքում» բառերը փոխարինել «տվյալ բնակավայրում» բառերով,

2) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Ազգային ժողովի հերթական ընտրությունների քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 70 օր առաջ, իսկ արտահերթ ընտրությունների դեպքում՝ ոչ ուշ, քան 25 օր առաջ, համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ,

մարզպետը, Երևանում՝ Երևանի քաղաքապետը Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացնում այն դահլիճների և այլ շինությունների ցանկը, որոնք ընտրություններին մասնակցող կուսակցություններին տրամադրվում են անվճար: Այդ ցանկը տեղադրվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Տեղեկությունները ներկայացվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով:»:

**Հոդված 14~~5~~.** Օրենսգրքի 20-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «ռադիոյի և հեռուստատեսության» բառերը փոխարինել «տեսալսողական մեդիածառայություն մատուցողների» բառերով,

2) 2-րդ մասի «հանրային ռադիոյից և հանրային հեռուստատեսությունից» բառերը փոխարինել «հանրային հեռարձակողների տեսալսողական հաղորդումներից» բառերով,

3) 3-րդ մասում «հանրային ռադիոն և հանրային հեռուստատեսությունը» բառերն իրենց բոլոր հոլովաձևերով փոխարինել «հանրային հեռարձակողները» բառերով, ինչպես նաև «ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների» բառերը փոխարինել «տեսալսողական մեդիածառայություն մատուցողների» բառերով,

4) 4-րդ մասի առաջին պարբերության «Ազգային ժողովի և 70 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ հանրային ռադիոն և հանրային հեռուստատեսությունը» բառերը փոխարինել «Ազգային ժողովի, Երևանի ավագանու և մարզկենտրոն ընդգրկող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ հանրային տեսալսողական և հանրային լսողական հեռարձակողները» կետադրական նշանով և բառերով,

5) 4-րդ մասի երկրորդ պարբերության «և 70 000-ից ավելի ընտրող ունեցող» բառերը փոխարինել «, Երևանի ավագանու և մարզկենտրոն ընդգրկող» կետադրական նշանով և բառերով,

6) 4-րդ մասի չորրորդ պարբերության «70 000-ից ավելի ընտրող ունեցող» բառերը փոխարինել «Մարզկենտրոն ընդգրկող» բառերով,

7) 4-րդ մասի հինգերորդ պարբերության «Հանրային ռադիոն և հանրային հեռուստաընկերությունը» բառերը փոխարինել «Հանրային տեսալսողական և հանրային լսողական հեռարձակողները» բառերով,

8) 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Ազգային ժողովի ընտրություններ նշանակելու մասին Հանրապետության նախագահի հրամանագիրն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 5 օր հետո, իսկ Երևանի ավագանու և մարզկենտրոն ընդգրկող համայնքների ավագանիների ընտրությունների ժամանակ ոչ ուշ, քան սույն օրենսգրքով սահմանված ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման ժամկետի հաշվարկի սկզբից 5 օր առաջ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը հրապարակում է հանրային տեսալսողական հեռարձակողի և հանրային լսողական հեռարձակողի վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը, որը չի կարող գերազանցել ընտրությունների նշանակմանը նախորդող վերջին վեց ամսվա համար առևտրային գովազդի միջին արժեքի 50 տոկոսը, և որը մինչև նախընտրական քարոզչության ավարտը չի կարող փոփոխվել:»,

9) 6-րդ մասի առաջին պարբերության «հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների» բառերը փոխարինել «տեսալսողական մեդիածառայություն մատուցողների» բառերով,

10) 6-րդ մասի երկրորդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) նախընտրական քարոզչություն իրականացնելու համար եթերաժամ տրամադրող մասնավոր հիմունքներով հեռարձակում իրականացնող տեսալսողական մեդիածառայություն մատուցողները Ազգային ժողովի ընտրություններ նշանակելու մասին Հանրապետության նախագահի հրամանագիրն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 5 օր հետո, իսկ

տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ոչ ուշ, քան սույն օրենսգրքով սահմանված թեկնածուների առաջադրման, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման ժամկետի հաշվարկի սկզբից 5 օր առաջ իրենց եթերով հրապարակում են իրենց վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը, որը չի կարող գերազանցել ընտրությունների նշանակմանը նախորդող վերջին վեց ամսվա համար առևտրային գովազդի միջին արժեքը, և որը մինչև նախընտրական քարոզչության ավարտը չի կարող փոփոխվել:»,

11) 7-րդ մասում «ռադիոհաղորդումները և հեռուստահաղորդումներն» բառերը փոխարինել «տեսալսողական հաղորդումներն» բառերով,

12) 8-րդ մասը ուժը կորցրած ճանաչել,

13) 9-րդ մասում «ռադիոհաղորդումները և հեռուստահաղորդումները հեռուստառադիոհեռարձակում իրականացնելիս» բառերը փոխարինել «տեսալսողական հաղորդումները՝ հեռարձակում իրականացնելիս» բառերով, ինչպես նաև «մինչև ընտրվող մարմնի լիազորությունների ստանձնման օրը» բառերը փոխարինել «մինչև ընտրվող մարմնի լիազորությունների ստանձնման օրը, բայց ոչ պակաս, քան երեք ամիսը» բառերով,

14) 10-րդ մասում «հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների» բառերը փոխարինել «տեսալսողական մեդիածառայություն մատուցողների» բառերով,

15) 11-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«11. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը Ազգային ժողովի, Երևանի ավագանու և մարզկենտրոն ընդգրկող համայնքների ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում իրականացնում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար հավասար պայմանների ապահովման գնահատման մշտադիտարկում (մոնիտորինգ): Այդ նպատակով Հեռուստատեսության և ռադիոյի

հանձնաժողովը մշակում, և Ազգային ժողովի հերթական ընտրությունների ժամանակ ընտրություն նշանակելու մասին Հանրապետության նախագահի հրամանագիրն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 7 օր հետո, Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դեպքում՝ Հանրապետության նախագահի հրամանագիրն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 2 օր հետո, իսկ համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ ոչ ուշ, քան սույն օրենսգրքով սահմանված ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) գրանցման ժամկետից 5 օր առաջ հրապարակում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը:»,

16) 12-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«12. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը Ազգային ժողովի, Երևանի ավագանու և մարզկենտրոն ընդգրկող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ նախընտրական քարոզչությունը սկսվելուց հետո՝ 10-րդ, Ազգային ժողովի, Երևանի ավագանու և մարզկենտրոն ընդգրկող համայնքների ավագանու հերթական ընտրությունների ժամանակ՝ նաև 20-րդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար՝ սույն օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 2 օր առաջ, հրապարակում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում սույն հոդվածի պահանջների կատարման մշտադիտարկման արդյունքները և հանձնաժողովի եզրակացությունը՝ տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ:

Ազգային ժողովի ընտրության երկրորդ փուլ անցկացվելու դեպքում սույն մասով նշված եզրակացությունը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը հրապարակում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում ընտրության երկրորդ փուլի արդյունքների ամփոփման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետից 2 օր առաջ:»,

17) 14-րդ մասը «անվճար» բառից հետո լրացնել «և վճարովի» բառերով:

**Հոդված 1~~6~~5.** Օրենսգրքի 20.1-ին հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Համացանցում գրանցված դոմեյն, հոսթինգ ունեցող զանգվածային լրատվության միջոցը նախընտրական քարոզչության ժամանակահատվածում անվճար կամ վճարովի քարոզչություն իրականացնելիս թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար ապահովում են ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ:»,

2) 2-րդ մասից հանել «գովազդային» բառը:

**Հոդված 1~~7~~6.** Օրենսգրքի 21-րդ հոդվածում՝

1) Ամբողջ տեքստում «կուսակցություններ» բառերից հետո լրացնել «(կուսակցությունների դաշինքներ)» բառերը և կետադրական նշանը՝ իր բոլոր հոլովաձևերով,

2) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Հանրության համար տեսանելի քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են տեղադրվել միայն՝

5) համայնքի ղեկավարի կողմից հատուկ այդ նպատակով առանձնացված վահանակների վրա,

6) վճարովի գովազդային վահանակների վրա,

7) ընտրական շտաբների վրա,

8) սույն հոդվածի 2. 1-ին մասում նշված տեղերում:»,

3) Լրացնել նոր՝ 2.1-ին մաս.

«2.1. Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի վրա քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են տեղադրվել միայն արտաքին պատերին տեղադրված վճարովի գովազդային վահանակների վրա:

Արգելվում է քարոզչական պաստառների, քարոզչական տպագիր և այլ նյութերի տեղադրումը հանրակրթական դպրոցների, հասարակական սննդի և առևտրի օբյեկտների, վերելակների, հասարակական տրանսպորտի և տաքսի ավտոմոբիլների վրա կամ դրանց ներսում:

Քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են առանց սահմանափակման տեղադրվել կամ օգտագործվել նախընտրական ժողովներ, ընտրողների հետ հանդիպումներ և նախընտրական քարոզչության հետ կապված այլ միջոցառումներ անցկացնելու ժամանակ՝ այդ միջոցառումների անցկացման վայրում: Այդ միջոցառումների ժամանակ տեղադրված քարոզչական պաստառը, քարոզչական տպագիր և այլ նյութերը միջոցառման ավարտից հետո հանվում են համապատասխան թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքներ) կողմից:

Նախընտրական քարոզչություն իրականացնելու իրավունք ունեցող ֆիզիկական անձինք առանց սահմանափակման կարող են կրել քարոզչական նյութեր, տեղադրել դրանք իրենց պատկանող կամ իրենց տիրապետման ներքո գտնվող շենքերի, շինությունների վրա կամ դրանց ներսում, տրանսպորտային միջոցների վրա կամ դրանց ներսում, բացառությամբ սույն հոդվածի 2.1-ին մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի:»,

4) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Նախընտրական քարոզչությունը սկսելուց 10 օր առաջ համայնքի ղեկավարը պարտավոր է համայնքի տարածքում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար անվճար վահանակներ առանձնացնել՝ սահմանելով այնպիսի պայմաններ, որոնք համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների, ընտրություններին մասնակցող

կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար կապահովեն հավասար հնարավորություններ (հավասար մակերես): Սույն լիազորությունը համայնքի ղեկավարի համար սեփական լիազորություն է:»:

5) լրացնել նոր՝ 3.1-ին մաս.

«3.1. Քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար համայնքի ղեկավարի կողմից առանձնացված վահանակները պետք է լինեն կիրառելի և տեղակայված լինեն հանրության համար տեսանելի ու հնարավորինս բանուկ վայրերում: Համայնքի ղեկավարը քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար համայնքի տարածքում առանձնացնում է առնվազն, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների), իսկ մեծամասնական ընտրակարգի դեպքում համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների թվին հավասար թվով վահանակներ (մակերես)՝ ապահովելով հավասար հնարավորություններ:»:

~~6) 4-րդ մասի «փակցնելու համար անվճար տեղեր» բառերը փոխարինել «տեղադրելու համար անվճար վահանակներ» բառերով:~~

6) 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար անվճար վահանակներ առանձնացնելու մասին որոշումը 4 000 և ավելի ընտրող ունեցող համայնքի դեպքում համայնքի ղեկավարը ներկայացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով որոշումն ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում:»:

7) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպությունները 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում և հասարակական տրանսպորտի կանգառներում տեղակայված վահանակներն ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների

դաշինքներին) տրամադրելու համար ընտրությունները նշանակվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում, Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են տեղեկատվություն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) տրամադրվող վահանակների քանակի, մակերեսների, դրանց գտնվելու վայրերի և վարձավճարների վերաբերյալ: Տեղեկությունները տրամադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով: Արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպությունները կարող են նշել այն համայնքները, որտեղ անցկացվող ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև ցանկանում են բաշխել արտաքին գովազդային վահանակները: Այն վահանակները, որոնք բացակայում են Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացված ցանկում, հետագայում չեն կարող տրամադրվել ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին): Կենտրոնական ընտրական հանձնաժողովն այս տեղեկությունները տեղադրում է հանձնաժողովի համացանցային կայքում: Ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման փաստաթղթերը ներկայացնելու համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետներում ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են հայտեր՝ այդ գովազդային վահանակներում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ձևով: Այս տեղեկությունների հիման վրա արտաքին գովազդային վահանակներում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու իրավունքն ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև բաշխվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման

հիման վրա ընտրություններին մասնակցող կուսակցությունն (կուսակցությունների դաշինքը) արտաքին գովազդային վահանակը տնօրինող կազմակերպության հետ կնքում է պայմանագիր՝ քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութ տեղադրելու համար: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կողմից պայմանագիր չկնքվելու դեպքում գովազդային վահանակը տնօրինողն ազատ է կնքելու այլ պայմանագիր՝ այդ վահանակն այլ նպատակներով օգտագործելու: Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում և հասարակական տրանսպորտի կանգառներում տեղակայված քարոզչական պաստառը կարող է տեղադրվել միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նախապես բաշխված արտաքին գովազդային վահանակում:

Լուսադիոդային գովազդային վահանակներ տնօրինող կազմակերպությունները կարող են դրանք տրամադրել ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) նախընտրական քարոզչական նյութեր տեղադրելու համար, եթե կարողանում են ապահովել հավասար հնարավորություններ ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար:

Տեղադրված քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութերը քվեարկության օրը և դրա նախորդ օրը կարող են մնալ իրենց տեղերում:»,

8) 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«

8. Ընտրական հանձնաժողովի որոշումը ստանալուց հետո համայնքի ղեկավարը և արտաքին գովազդային վահանակները (լուսադիոդային գովազդային վահանակներ) տնօրինող կազմակերպությունների ղեկավարներն ապահովում են,

որ գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչված թեկնածուների, ընտրությունների մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութերը եռօրյա ժամկետում հանվեն:

Գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչված թեկնածուների, ընտրությունների մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութերը եռօրյա ժամկետում չհանվելու դեպքում դրանք հանում է համայնքի ղեկավարը՝ ոստիկանության աջակցությամբ: Համայնքի ղեկավարը գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչված թեկնածուներից, ընտրությունների մասնակցող կուսակցություններից (կուսակցությունների դաշինքների) կարող է պահանջել իր կատարած ծախսերի փոխհատուցում:

8. Ընտրական հանձնաժողովի որոշումը ստանալուց հետո ոստիկանությունը և արտաքին գովազդային վահանակները (լուսադիոդային գովազդային վահանակներ) տնօրինող կազմակերպությունների ղեկավարներն ապահովում են, որ գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչված թեկնածուների, ընտրությունների մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութերը եռօրյա ժամկետում հանվեն:

Գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչված թեկնածուների, ընտրությունների մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութերը եռօրյա ժամկետում չհանվելու դեպքում դրանք հանում է ոստիկանությունը: Ոստիկանությունը գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչված թեկնածուներից, ընտրությունների մասնակցող կուսակցություններից (կուսակցությունների դաշինքների) կարող է պահանջել իր կատարած ծախսերի փոխհատուցում:»,

9) 9-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

~~«Սույն հոդվածի դրույթների խախտմամբ տեղադրված քարոզչական պաստառը, քարոզչական տպագիր և այլ նյութերը հանվում են համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշմամբ՝ ոստիկանության օժանդակությամբ:»,~~

«Սույն հոդվածի դրույթների խախտմամբ տեղադրված քարոզչական պաստառը, քարոզչական տպագիր և այլ նյութերը համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշման հիման վրա հանում է համայնքի ղեկավարը՝ ոստիկանության աջակցությամբ: Սույն գործառույթը համայնքի ղեկավարի համար պատվիրակված լիազորություն է:»,

10) 9-րդ մասի երկրորդ պարբերության առաջին նախադասությունում «տարածքային ընտրական հանձնաժողովի» բառերը փոխարինել «ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի» բառերով,

11) լրացնել նոր՝ 12-րդ մաս.

«12. Ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու պատճառով ընտրական գործընթացի ~~կասեցման կամ~~ դադարեցման դեպքում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութ տեղադրելու վերաբերյալ պայմանագրի կողմերը կարող են միակողմանի հրաժարվել դրա կատարումից:»:

**Հոդված 17~~8~~.** Օրենսգրքի 22-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների» բառերը փոխարինել «տեսալսողական մեդիածառայություն մատուցողների» բառերով, ինչպես նաև «ռադիոհաղորդումների կամ հեռուստահաղորդումների» բառերը փոխարինել «տեսալսողական հաղորդումների» բառերով,

2) 2-րդ մասի երրորդ պարբերության «հեռուստատեսությամբ, ռադիոյով» բառերը փոխարինել «տեսալսողական մեդիածառայություն մատուցողների եթերով» բառերով:

**Հոդված 18~~9~~.** Օրենսգրքի 23-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ.

«Վարչական ռեսուրսի օգտագործման արգելքը և նախընտրական քարոզչության սահմանափակումները»,

2) 1-ին մասը լրացնել նոր՝ երկրորդ պարբերությամբ.

«Արգելվում է նախընտրական քարոզչության կազմակերպման և իրականացման ընթացքում վարչական ռեսուրսի օգտագործումը, այդ թվում՝ ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցների, տարածքների, տրանսպորտային ու կապի միջոցների, նյութական և մարդկային ռեսուրսների օգտագործումը, ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու նպատակով:»,

3) 1-ին մասի երկրորդ պարբերությունում «Արգելվում է նախընտրական քարոզչություն կազմակերպելը կամ կատարելը, ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելը, նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցները, տարածքները, տրանսպորտային և կապի միջոցները, նյութական ու մարդկային ռեսուրսները, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների, օգտագործելը՝» բառերը փոխարինել «Արգելվում է նախընտրական քարոզչության կազմակերպումն ու իրականացումը՝» բառերով և կետադրական նշանով,

4) 2-րդ մասում «պատգամավորին և անմիջականորեն ընտրողների կողմից ընտրված համայնքների ղեկավարներին» բառերը փոխարինել «պատգամավորին, համայնքների ղեկավարներին» բառերով:

**Հոդված 19~~20~~.** Օրենսգրքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությունը «ընտրությունները» բառից հետո լրացնել «, ինչպես նաև

ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու պատճառով ընտրական գործընթացի դադարեցման դեպքում մինչև դադարեցումը կատարված ընտրությունների կազմակերպմանն ուղղված գործողությունները» կետադրական նշանով և բառերով:

**Հոդված 20~~1~~.** Օրենսգրքի 25-րդ հոդվածի~~ում՝~~

~~1)~~ 2-րդ մասի 4-րդ կետը «ընտրություն նշանակվելու» բառերից հետո լրացնել «, ընտրական գործընթացը դադարեցվելու» կետադրական նշանով և բառերով:~~,~~

~~2) լրացնել նոր՝ 2.1-ին մաս.~~

~~«2.1. Ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու պատճառով ընտրական գործընթացը կասեցվելու դեպքում ընտրական գրավների հատուկ հաշվեհամարում առկա՝ ընտրական գրավի գումարները սառեցվում են մինչև ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո ընտրությունների վերսկսումը:»:~~

**Հոդված 21~~2~~.** Օրենսգրքի 26-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 26. Նախընտրական հիմնադրամի ձևավորումը և թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) վերաբերյալ ֆինանսական տեղեկատվությունը**

1. Ազգային ժողովի, համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունների դեպքում ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները), ինչպես նաև սույն օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում մեծամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուները պարտավոր են բացել նախընտրական հիմնադրամ թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակը գրանցելու վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո՝ 5 օրվա

ընթացքում: Նախընտրական հիմնադրամ չբացելու համար վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում նախընտրական հիմնադրամ չբացելու դեպքում իրավասու ընտրական հանձնաժողովը դիմում է դատարան թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու պահանջով: Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակով առաջադրված թեկնածուներն, կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցություններն առանձին նախընտրական հիմնադրամ ձևավորելու իրավունք չունեն:

Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների), մեծամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների նախընտրական հիմնադրամի միջոցները հավաքվում են Երևանում և հանրապետության բոլոր մարզերում մասնաճյուղ ունեցող որևէ առևտրային բանկում: Այս բանկերի ցանկը Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը: Նախընտրական հիմնադրամ ձևավորելու նպատակով, թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) դիմումների հիման վրա, բանկերը բացում են ժամանակավոր հատուկ հաշիվներ: Այդ հաշիվներից եկամուտներ չեն հաշվարկվում և չեն վճարվում:

2. Թեկնածուի նախընտրական հիմնադրամը ձևավորվում է՝

1) իր կատարած մուծումներից,

2) իրեն առաջադրած կուսակցության կատարած մուծումներից,

3) ընտրելու իրավունք ունեցող անձանց մուծումներից:

3. Ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նախընտրական հիմնադրամը ձևավորվում է այդ կուսակցության (դաշինքի անդամ կուսակցությունների) կատարած մուծումներից:

4. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասում չնշված ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից նախընտրական հիմնադրամների հաշվին մուծված գումարները փոխանցվում են համապատասխան մուծումը կատարած անձին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ պետական բյուջե: Պետական բյուջե են փոխանցվում նաև նախընտրական հիմնադրամների հաշվին կատարված անանուն մուծումները:

5. Նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների և հիմնադրամներից կատարվող ծախսերի հաշվառման կարգը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

6. Նախընտրական հիմնադրամ մուծումներ կատարող ֆիզիկական անձինք պարտավոր են նշել իրենց անունը, ազգանունը և հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը, որը հրապարակման ենթակա չէ:

7. Նախընտրական հիմնադրամներում կատարվող մուծումների առավելագույն չափերը սահմանվում են սույն օրենսգրքով: Նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն չափերը գերազանցող մասերը փոխանցվում են համապատասխան մուծումը կատարած անձին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ պետական բյուջե:

8. Այն բանկերը, որտեղ բացված են ժամանակավոր հատուկ հաշիվներ, թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի ավարտից 5 օր հետո՝ 3 աշխատանքային օրը մեկ, վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն տեղեկանք են ներկայացնում թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ: Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն ամփոփում է այդ տվյալները, կազմում ամփոփ տեղեկանք, որը

տեղադրվում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

9. Նախընտրական հիմնադրամի միջոցների նկատմամբ չի կարող կիրառվել արգելանք, այդ միջոցները չեն կարող հանդիսանալ բռնագանձման առարկա՝ թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նախընտրական քարոզչության հետ չկապված անձնական բնույթի պարտավորություններով:

10. Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի ավարտից հետո մինչև քվեարկությունից հետո երրորդ օրը՝ 3 աշխատանքային օրը մեկ, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների կազմում ընդգրկված կուսակցությունների) բանկային հաշիվների ֆինանսական միջոցների մնացորդի, մուտքերի և ելքերի վերաբերյալ տվյալները համապատասխան բանկերը ներկայացնում են Հայաստանի Հանրապետության Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: Հայաստանի Հանրապետության Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ամփոփում է այդ տվյալները, կազմում ամփոփ տեղեկանք, որը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համացանցային կայքում:»:

**Հոդված 22~~3~~.** Օրենսգրքի 27-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի առաջին պարբերությունը «ընտրություններին մասնակցող կուսակցությունները» բառերից հետո լրացնել «(կուսակցությունների դաշինքները)» բառերով և կետադրական նշանով,

2) 1-ին մասի 9-րդ կետի «, եթե մեկ վստահված անձի հաշվով փոխհատուցման գումարը գերազանցում է 10 000 դրամը» կետադրական նշանը և բառերը հանել,

3) 1-ին մասի երկրորդ պարբերությունը հանել,

4) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Եթե վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությամբ նշվում է, որ նախընտրական քարոզչության համար սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ուղղություններով ձեռք բերված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը շուկայական արժեքով չի ներառվել նախընտրական հիմնադրամի ծախսերում, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հարուցում է վարչական վարույթ: Եթե հարուցված վարույթի արդյունքում հիմնավորվում է վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությամբ նշված տեղեկությունը, ապա թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նկատմամբ կիրառվում է վարչական տույժ՝ հիմնադրամի ծախսերում չներառված ծախսերի եռապատիկի չափով:»,

5) 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Եթե վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությամբ նշվում է, որ թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նախընտրական քարոզչության համար կատարված ծախսերը գերազանցել են սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ուղղություններով կատարված ծախսերի՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն չափը, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հարուցում է վարչական վարույթ, և եթե վարույթի արդյունքում հիմնավորվում է վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությամբ նշված տեղեկությունը, ապա թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նկատմամբ կիրառվում է վարչական տույժ՝ հիմնադրամի՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն չափը գերազանցող գումարի եռապատիկի չափով:»,

6) 5-րդ մասը «կուսակցության» բառից հետո լրացնել «(կուսակցությունների դաշինքի)» կետադրական նշանով և բառերով,

7) 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«8. Թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) դիմումի հիման վրա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը թույլ է տալիս հիմնադրամից վճարումներ կատարել նաև քվեարկության օրվանից հետո, բայց մինչև քվեարկության օրը կատարված գործարքների համար: Թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների)՝ ոչ ուշ, քան քվեարկությունից հետո երկօրյա ժամկետում ներկայացված դիմումի հիման վրա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը թույլ է տալիս համալրել հիմնադրամը՝ չկատարված պայմանագրային պարտավորությունների կատարման համար հիմնադրամի միջոցների չբավարարող գումարի չափով:»,

8) 10-րդ մասի առաջին նախադասությունը «կուսակցությունների» բառերից հետո լրացնել «(կուսակցությունների դաշինքների)» կետադրական նշանով և բառերով, երկրորդ նախադասությունը «կուսակցությունները» բառերից հետո լրացնել «(կուսակցությունների դաշինքները)» կետադրական նշանով և բառերով,

9) լրացնել նոր՝ 13-րդ մաս.

«13. ~~Ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու պատճառով ընտրական գործընթացը կասեցման դեպքում նախընտրական հիմնադրամներում առկա միջոցները սառեցվում են մինչև ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո ընտրությունների վերսկսումը: Վերսկսված ընտրությունների դեպքում թեկնածուները, ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) կարող են օգտագործել իրենց նախընտրական հիմնադրամներում մնացած միջոցները:~~

Ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու պատճառով ընտրական գործընթացը դադարեցվելու դեպքում ընտրական գործընթացը դադարեցվելու պահից մեկշաբաթյա ժամկետում նախընտրական հիմնադրամում մնացած միջոցները մեծամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների դեպքում փոխանցվում են թեկնածուին առաջադրած կուսակցության հաշվին, իսկ ինքնաառաջադրման

դեպքում՝ փոխանցվում են թեկնածուին, Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող՝ համայնքների ավագանիների ընտրությունների դեպքում՝ կուսակցության հաշվին, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում հավասարապես բաշխվում են դաշինքը կազմող կուսակցությունների միջև, եթե այլ բան նախատեսված չէ կուսակցությունների դաշինքի որոշմամբ:»:

**Հոդված 2~~3~~4.** Օրենսգրքի 28-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 28. Նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը**

1. Թեկնածուները, ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը ներկայացնում են վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն նախընտրական քարոզչությունը սկսվելուց հետո՝ 10-րդ, Ազգային ժողովի, համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների հերթական ընտրությունների ժամանակ՝ նաև 20-րդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ:

Ազգային ժողովի ընտրության երկրորդ փուլ անցկացվելու դեպքում երկրորդ փուլին մասնակցող կուսակցությունը, կուսակցությունների դաշինքը նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը ներկայացնում է վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն՝ ընտրությունների արդյունքների ամփոփման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ:

Հայտարարագրին կցվում են սույն օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասում նշված, ինչպես նաև նախընտրական քարոզչության նպատակով կատարված և հայտարարագրման ենթակա այլ ծախսերը հիմնավորող փաստաթղթերը (պայմանագիր, հանձնման-ընդունման ակտ, հաշիվ-ապրանքագիր, վճարման

անդորրագիր և այլն): Նախընտրական ժողովներ, ընտրողների հետ հանդիպումներ և նախընտրական քարոզչության հետ կապված այլ միջոցառումներ անցկացնելու նպատակով դահլիճների, տարածքների և ընտրական շտաբների կոմունալ ծախսերը, ինչպես նաև նախընտրական քարոզչության նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցների վառելիքի հետ կապված ծախսերը համարվում են հայտարարագրման ոչ ենթակա ծախսեր:

2. Հայտարարագրի էլեկտրոնային ձևը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Հայտարարագրի ձևը ներառում է նաև ուղեցույց հայտարարագիրը կազմելու և ներկայացնելու կարգի ու ժամկետների մասին:

3. Հայտարարագրում նշվում են՝

1) նախընտրական հիմնադրամ կատարված մուծումների ամսաթիվը, մուծման գումարի չափը և մուծումներ կատարած անձանց անունը, ազգանունը կամ անվանումը.

2) սույն օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված յուրաքանչյուր աշխատանքի, ծառայության, ապրանքի ձեռքբերման համար կատարված ծախսերը, դրանց կատարման ժամկետը, ծախսերի կատարումը հաստատող փաստաթղթերի տվյալները.

3) սույն օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված յուրաքանչյուր աշխատանքի, ծառայության, ապրանքի ձեռքբերման համար կատարվելիք ծախսերը, որոնց վճարումն իրականացվելու է հայտարարագիրը ներկայացնելու՝ սույն օրենսգրքով սահմանված ժամկետից հետո՝~~ հայտարարագրին կցվելով կատարվելիք ծախսերը հավաստող փաստաթղթերի մասին տվյալներ~~ հայտարարագրին կցելով ծախսերի կատարման անհրաժեշտությունը հավաստող փաստաթղթեր.

4) հիմնադրամում մնացած գումարի չափը:

4. Հայտարարագրերը ներկայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, տեղադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:»:

**Հոդված 245.** Օրենսգրքի 29-րդ հոդվածում

1) 5-րդ մասը «կուսակցությունների» բառից հետո լրացնել «(կուսակցությունների դաշինքների)» կետադրական նշանով և բառերով,

2) 6-րդ մասի 1-ին կետում «կուսակցությունների» բառից հետո լրացնել «(կուսակցությունների դաշինքների)» կետադրական նշանը և բառերը, «հատուկ հաշվեհամարներ» բառերը փոխարինել «հատուկ հաշիվներ» բառերով,:

3) 6-րդ մասի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) բանկերից, կուսակցություններից և ապրանքներ մատակարարող, ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ կատարող այլ կազմակերպություններից ստանալ համապատասխան տեղեկություններ, տեղեկանքներ, փաստաթղթերի պատճեններ՝ նախընտրական քարոզչության շրջանակներում կատարված ծախսերի վերաբերյալ. »:

**Հոդված 256.** Օրենսգրքի 30-րդ հոդվածումի՝

1) 1-ին մասի 2-րդ կետը «հասարակական կազմակերպությունները» բառերից հետո լրացնել «և հիմնադրամները» բառերով,

2) լրացնել նոր՝ 6-րդ մաս.

«6. Սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված այցելուի կարգավիճակ ունեցող անձանց կարող է ուղեկցել թարգմանիչ:»:

**Հոդված 267.** Օրենսգրքի 31-րդ հոդվածում ՝

1) վերնագիրը «դիտորդների,» բառից և կետադրական նշանից հետո լրացնել «միջազգային դիտորդներին և այցելուներին ուղեկցող թարգմանիչների,» բառերով և կետադրական նշանով»,

2) լրացնել նոր՝ 1.1-ին մաս.

«1.1. Որպես դիտորդ չեն կարող հանդես գալ ընտրական հանձնաժողովների անդամները, այդ ընտրություններին մասնակցող թեկնածուները, վստահված

անձինք, տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետները և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները:»,

~~2~~3) 2-րդ մասի երկրորդ պարբերությունը «հասարակական կազմակերպությունները» բառերից հետո լրացնել «և հիմնադրամները» բառերով,

~~3~~4) 2-րդ մասի երրորդ պարբերության առաջին և երրորդ նախադասությունները «հասարակական կազմակերպությունները» բառերից հետո լրացնել «և հիմնադրամները» բառերով, չորրորդ նախադասությունը «հասարակական կազմակերպություններից» բառերից հետո լրացնել «կամ հիմնադրամներից» բառերով,

~~4~~5) 2-րդ մասի երրորդ պարբերության հինգերորդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Եթե դիմումի մերժման արդյունքով սույն օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխանում է միայն մեկ հասարակական կազմակերպություն կամ հիմնադրամ, ապա այդ հասարակական կազմակերպությունը կամ հիմնադրամը հավատարմագրվում է որպես առանձին դիտորդական առաքելություն իրականացնող:»,

~~5~~6) 2-րդ մասի չորրորդ պարբերությունը «հասարակական կազմակերպություններն» բառերից հետո լրացնել «ու հիմնադրամներն» բառերով,

~~6~~7) 4-րդ մասը լրացնել նոր՝ երկրորդ պարբերությամբ.

«Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մինչ հավատարմագրման հայտը հաստատելը հավատարմագրման հայտում ներկայացված դիտորդների ցանկից հանում է այն անձանց վերաբերյալ տվյալները, ովքեր հանդիսանում է ընտրական հանձնաժողովի անդամ կամ տվյալ ընտրություններին մասնակցում է թեկնածուի, տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետի, վստահված անձի կամ զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցչի կարգավիճակով: Սույն կանոնը կիրառվում է նաև հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարելու մասին դիմումները քննարկելիս:»,

~~7~~8) լրացնել նոր՝ 4.1-ին մաս.

«4.1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուժը կորցրած է ճանաչում դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության (համատեղ հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների) հավատարմագրումը, եթե հավատարմագրվելուց հետո ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց առկայության պայմաններում հավատարմագրման վերաբերյալ դիմումը կմերժվեր: Եթե սույն մասում նշված դեպքում համատեղ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններից որևէ մեկը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուժը կորցրած է ճանաչում համատեղ հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների հավատարմագրումը միայն այդ կազմակերպությանը վերաբերելի մասով: Եթե Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից համատեղ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների հավատարմագրումը մի մասով ուժը կորցրած ճանաչելու արդյունքում սույն օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխանում է միայն մեկ կազմակերպություն, ապա այդ կազմակերպությունը համարվում է հավատարմագրված որպես առանձին դիտորդական առաքելություն իրականացնող:

Սույն հոդվածի 1.1-ին մասում առկա հանգամանքները դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության (համատեղ հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների) հավատարմագրվելուց հետո ի հայտ գալու դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հավատարմագրված դիտորդների ցանկից հանում է որպես դիտորդ հանդես գալու իրավունք չունեցող անձանց վերաբերյալ տվյալները: Դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության (համատեղ հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների) հավատարմագրումը ուժը կորցրած ճանաչվելու և

հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ կատարելու վերաբերյալ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները ծանուցվում է 1 օրվա ընթացքում:»,~~:~~

9) լրացնել նոր՝ 7.1-ին մաս.

«7.1. Միջազգային դիտորդներին և այցելուներին ուղեկցող թարգմանիչներին վկայականներ տրամադրում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ներկայացրած հայտերի հիման վրա:»,

10) 9-րդ մասը «դիտորդների,» բառից և կետադրական նշանից հետո լրացնել «միջազգային դիտորդներին և այցելուներին ուղեկցող թարգմանիչների,» բառերով և կետադրական նշանով:

**Հոդված 27~~8~~.** Օրենսգրքի 35-րդ հոդվածում՝

5) վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի), համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների լիազոր ներկայացուցիչների կարգավիճակը**»,

6) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները), ինչպես նաև համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուն իրավունք ունեն թեկնածուին, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակը գրանցած ընտրական հանձնաժողովում նշանակելու մինչև 3 լիազոր ներկայացուցիչ:»,

7) 4-րդ մասը լրացնել նոր՝ 3-րդ կետով.

«3) նախընտրական քարոզչության կազմակերպման նպատակով՝ ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների), ինչպես նաև մեծամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի

ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների անունից կնքելու քաղաքացիաիրավական պայմանագրեր:»,

8) ուժը կորցրած ճանաչել 8-րդ մասը:

**Հոդված 289**. Օրենսգրքի 40-րդ հոդվածը լրացնել նոր՝ 5-րդ մասով.

«5. Ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու պատճառով ընտրական գործընթացը դադարեցվելու դեպքերում ընտրական հանձնաժողովների անդամների՝ ընտրությունների կազմակերպման և անցկացման համար վարձատրությունն իրականացվում է ըստ փաստացի աշխատած օրերի քանակի: Ընտրական հանձնաժողովների անդամներին ընտրությունների կազմակերպման և անցկացման համար՝ մինչև ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելը վճարված վարձատրության գումարը ենթակա չէ վերադարձման:»:

**Հոդված 2930**. Օրենսգրքի 41-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 1-ին պարբերությունում «224» թիվը փոխարինել «224.1» թվով,

2) 2-րդ մասը լրացնել նոր՝ երկրորդ պարբերությամբ.

«Ընտրական հանձնաժողովի անդամի անհամատեղելիության պայմանները կարող են սահմանվել բացառապես սույն օրենսգրքով: Ընտրական հանձնաժողովի անդամի (բացառությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի) կարգավիճակը չի հանդիսանում այլ օրենքներով և իրավական ակտերով նախատեսված անհամատեղելիության պահանջների խախտում:»,

3) 3-րդ մասում «անձինք» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիները» բառերով,

4) 5-րդ մասի երրորդ նախադասության «դիմում ներկայացրած անձինք» բառերը փոխարինել «դիմում ներկայացրած քաղաքացիները» բառերով,

~~3~~5) 5-րդ մասը լրացնել նոր՝ երկրորդ նախադասությամբ.

«Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներն աջակցում են ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացների կազմակերպման և անցկացման աշխատանքներին:»,

~~4~~6) 5-րդ մասը լրացնել նոր՝ վեցերորդ նախադասությամբ.

«Ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներին և ստուգարքին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնց՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած է ճանաչվել դասընթացների անցկացմանը նախորդող վերջին մեկ տարվա ընթացքում:»:

~~5~~7) 6-րդ մասից հանել երկրորդ նախադասությունը,

~~6~~8) 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«8. Ընտրությունների ժամանակ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ իր սահմանած ժամանակացույցին համապատասխան, կարող է կազմակերպել ընտրությունների անցկացման վերաբերյալ գործնական դասընթացներ ընտրական հանձնաժողովների անդամների համար:

Գործնական դասընթացների անցկացման ժամկետի ավարտից հետո նշանակված տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմակերպում է լրացուցիչ գործնական դասընթացներ, եթե դրանց կազմակերպումն ու անցկացումը չի խոչընդոտի տվյալ ընտրություններում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի լիազորությունների պատշաճ իրականացմանը:

Գործնական դասընթացներին մասնակցությունը պարտադիր է:»:

**Հոդված 30~~31~~.** Օրենսգրքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունում «պակաս լինի երկուսից» բառերը փոխարինել «պակաս լինի երեքից» բառերով:

**Հոդված 31~~2~~.** Օրենսգրքի 43-րդ հոդվածում՝

1) վերնագիրը «կարգը» բառերից հետո լրացնել «և հանձնաժողովի անդամների պարտադիր ատեստավորումը» բառերով,

2) 1-ին մասը «կազմված է» բառերից հետո լրացնել «ոչ ավել, քան» բառերով և կետադրական նշանով,

3~~2~~) 2-րդ մասի «պակաս լինի երկուսից» բառերը փոխարինել «պակաս լինի երեքից» բառերով,

4) 8-րդ մասի «որակավորման վկայականներ ստացած անձանցից» բառերը փոխարինել «որակավորման վկայականներ ստացած քաղաքացիներից» բառերով,

~~3~~5) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-8.3-րդ մասեր.

«8.1. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամները ենթակա են ամենամյա պարտադիր ատեստավորման, որն անցկացվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների ստուգման նպատակով: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների ատեստավորումն անցկացվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի անմիջական մասնակցությամբ: Ատեստավորման անցկացման նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ձևավորում է ատեստավորման հանձնաժողով: Ատեստավորման ժամանակացույցը, ատեստավորման հանձնաժողովի կազմը, աշխատակարգը, ձևավորման և ատեստավորում անցկացնելու կարգը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամը ենթակա է ատեստավորման աշխատանքի

ներկայանալուց հետո՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված ժամանակացույցին համապատասխան, բայց ոչ ուշ, քան եռամսյա ժամկետում:

Ատեստավորման ենթակա ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամները, ոչ ուշ, քան ատեստավորումից մեկ ամիս առաջ, տեղեկացվում են ատեստավորման անցկացման մասին:

8.2. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների ատեստավորումն անցկացվում է ստուգարքի և հարցազրույցի միջոցով ատեստավորման հանձնաժողովի կողմից: Ստուգարքի և հարցազրույցի հարցերը կազմում է ատեստավորման հանձնաժողովը:

Ատեստավորման հանձնաժողովը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների ատեստավորման արդյունքներով ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը.

1) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին,

2) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին:

Ատեստավորման հանձնաժողովի քվեարկության արդյունքում ընդունված է համարվում այն որոշումը, որը ստացել է հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայները: Սույն մասի 1-ին և 2-րդ կետերով նշված որոշումները կարող են ընդունվել ատեստավորման հանձնաժողովի անդամների առնվազն 2/3-ի մասնակցությամբ:

8.3. Ատեստավորման մասնակցած ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի այն անդամներ, որոնց վերաբերյալ կայացվել է սույն հոդվածի 8.2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված որոշումը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված ժամանակացույցին համապատասխան, բայց ոչ ուշ, քան որոշման ընդունումից հետո եռամսյա ժամկետում կրկին անցնում են ատեստավորում: Կրկնակի ատեստավորման արդյունքներով ատեստավորման հանձնաժողովի կողմից զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին որոշում ընդունվելուց հետո՝ եռօրյա ժամկետում ընտրատարածքային ընտրական

հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից:»:

**Հոդված 32~~3~~**. Օրենսգրքի 44-րդ հոդվածի 6-րդ մասը «25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն,» բառերից հետո լրացնել «Ազգային ժողովի» բառերով:

**Հոդված 33~~4~~**. Օրենսգրքի 45-րդ հոդվածի՝

1) 6-րդ ~~հոդվածի~~ մասի 5-րդ կետում «224» թիվը փոխարինել «224. 1» թվով,

2) 7-րդ մասում՝

ա. «3 օրացուցային ամսվա ընթացքում» թիվը և բառերը փոխարինել «2 օրացուցային ամսվա ընթացքում» թվով և  բառերով,

բ. լրացնել նոր երկրորդ նախադասություն.

«Կրկնակի ատեստավորման արդյունքներով զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու մասին որոշում ընդունված լինելու դեպքում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ:»:

**Հոդված 34~~5~~.** Օրենսգիրքը լրացնել նոր՝ 48.1-ին հոդվածով.

«**Հոդված 48.1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սեփական նախաձեռնությամբ ընտրական հանձնաժողովների որոշումների վերանայումը**

1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը վերահսկողության կարգով և իր նախաձեռնությամբ իրավունք ունի վերանայելու ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը դրա կայացումից հետո վեց ամսվա ընթացքում, բացառությամբ ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակները (դրանցում ընդգրկված թեկնածուներին), թեկնածուներին գրանցելու,

գրանցումը մերժելու, գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշումների:

2. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը դատական կարգով վիճարկվելու դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կարճում է վարչական վարույթը:»:

**Հոդված 35~~6~~.** Օրենսգրքի 50-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի առաջին պարբերությունից հանել «՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու մասին գրառում կատարելու դեպքում,» կետադրական նշանները և բառերը,

2) 1-ին մասը լրացնել նոր՝ երրորդ պարբերությամբ.

«Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի պահանջ կարող է ներկայացվել նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պատճառաբանված որոշմամբ՝ ընտրության արդյունքներն ամփոփելու ժամկետից մինչև 3 օր առաջ:»,

3) 1.1-ին մասի առաջին նախադասությունում «ժամը 11:00-ին, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը» բառերը փոխարինել «վերահաշվարկի դիմում ներկայացնելու համար սահմանված վերջնաժամկետի ավարտից հետո՝ մինչև վերահաշվարկի աշխատանքները սկսելու ժամկետը, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն իր նիստում» բառերով,

4) 6-րդ մասի երրորդ նախադասությունում «առաջին հերթին» բառերը փոխարինել «երկրորդ հերթին» բառերով,

5) 7-րդ մասի առաջին նախադասությունում «վիճակահանությամբ ընտրված ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները» բառերը փոխարինել «բոլոր այն ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները, որոնց վերաբերյալ ներկայացվել է վերահաշվարկի դիմում» բառերով,

6) 7-րդ մասի երրորդ նախադասությունում «բոլոր այն ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները, որոնց վերաբերյալ ներկայացվել է վերահաշվարկի դիմում» բառերը փոխարինել «վիճակահանությամբ ընտրված ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքները» բառերով,

7) 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«8. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ ներկայացված պահանջով՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկն իրականացվում է որոշումը ստանալուց անմիջապես հետո:»,

8) 12-րդ մասում «4 ժամը» թիվը և բառը փոխարինել «3 ժամը» թվով և բառով:

**Հոդված 36~~7~~.** Օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ մասում «իր» բառը փոխարինել «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի» բառերով, իսկ 6-րդ մասում «2000 ընտրող ունեցող» թիվը և բառերը փոխարինել «10 000 ընտրող ունեցող» թվով և բառերով:

**Հոդված 37~~8~~.** Օրենսգրքի 2-րդ բաժինը լրացնել նոր՝ 9.1-ին գլխով.

## «ԳԼՈՒԽ 9.1
## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԴՐԱ ԿՈՂՄԻՑ ՍՏԵՂԾՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ

### Հոդված 55.1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կառուցվածքը

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կառուցվածքում ընդգրկվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի, հանձնաժողովի նախագահի տեղակալի, հանձնաժողովի քարտուղարի և անդամների, Գլխավոր քարտուղարի, Գլխավոր քարտուղարի տեղակալի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի մամուլի քարտուղարի, հանձնաժողովի նախագահի

խորհրդականների, օգնականի, հանձնաժողովի նախագահի տեղակալի օգնականի, հանձնաժողովի քարտուղարի օգնականի, հանձնաժողովի անդամի օգնականի, Գլխավոր քարտուղարի օգնականի պաշտոնները և կառուցվածքային ստորաբաժանումները:

**Հոդված 55.2. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների կառավարումը**

1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների կառավարումն իրականացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովիը նախագահը :

2. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝

1) ~~«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի հիման վրա հաստատում է քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագիրը, սահմանում է քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, գործունեության գնահատման կարգը, և չափանիշները,~~

~~2)~~ սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ներքին կարգապահական կանոնները,

~~3~~2) սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովում գործավարության (փաստաթղթաշրջանառության) կարգը,

~~4~~3) «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի հիման վրա սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթի անցկացման կարգը~~, մրցութային հանձնաժողովի ձևավորման կարգը, աշխատակարգը~~,

~~5~~4) սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վարչական շենք մուտքի անցագրերի տրամադրման կարգը և ձևը,

~~6~~5) իրականացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների կառավարմանն առնչվող սույն օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

**Հոդված 55.3. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ստեղծվող աշխատանքային խմբերը**

1. Ընտրությունների ժամանակահատվածում (մինչև ընտրությունների արդյունքների բողոքարկման վերաբերյալ վերջնական դատական ակտի ուժի մեջ մտնելը) ընտրությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ հավաքագրելու, առկա տեղեկությունների հավաստիությունը պարզելու, դրանց վերաբերյալ պարզաբանումներ կամ տեղեկություններ տրամադրելու, տեղեկությունները համակարգելու և Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ներկայացնելու, ինչպես նաև թվարկված գործառույթներից բխող առանձին այլ գործառույթներ կատարելու և խնդիրներ լուծելու նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովում կարող են ստեղծել աշխատանքային խմբեր Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ:

2. Ստեղծվող աշխատանքային խմբերի կազմը, գործառույթներն ու խնդիրները հաստատում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:»:

**Հոդված 38~~9~~.** Օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը «անձանց» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների, մասնագետների, քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց)» բառերով և կետադրական նշաններով:

**Հոդված 39~~40~~.** Օրենսգրքի 58-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «750 ընտրողի» թիվը և բառը փոխարինել «600 ընտրողի» թվով և բառով,

2) լրացնել նոր՝ 4-րդ և 5-րդ մասեր.

«4. Քվեարկության խցիկի ձևը պետք է հնարավորություն ընձեռի հաշմանդամություն, ինչպես նաև տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողներին անխոչընդոտ իրականացնելու իրենց ընտրելու իրավունքը՝ պահպանելով քվեարկության գաղտնիությունը:

5. Ընտրությունների ժամանակ տեսողության խնդիրներ ունեցող անձանց կողմից ինքնուրույն քվեարկելու համար տեղամասային ընտրական հանձնաժողովներն ապահովվում են լրացուցիչ միջոցներով (բրայլյան կաղապարներով և այլն), իսկ մեծամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների ժամանակ՝ նաև խոշորացույցներով: Լրացուցիչ միջոցների ձեռքբերումը, այդ թվում՝ բրայլյան կաղապարների տպագրությունը, ու խոշորացույցների ձեռքբերումն ապահովում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:»:

**Հոդված 40~~1~~.** Օրենսգրքի 59-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Քվեաթերթիկները տպագրվում են քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 8, և ոչ ուշ, քան 3 օր առաջ՝ լիազոր մարմնի՝ ընտրողների թվի վերաբերյալ քվեարկության օրվանից 8 օր առաջ տրամադրած տեղեկանքի հիման վրա:»:

2) 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«7. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ քվեաթերթիկները տպագրելուց հետո ընտրություններին մասնակցող կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչվելու դեպքում այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) քվեաթերթիկները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով հանվում են քվեարկությունից և մարվում են: Եթե կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչվելու հետևանքով քվեարկությանը մասնակցում է միայն մեկ կուսակցություն կամ կուսակցությունների դաշինք, ապա Կենտրոնական

ընտրական հանձնաժողովի որոշմամբ տպագրվում է նաև դեմ քվեարկությամբ առանձին քվեաթերթիկ:»,

3) 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«8. Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների ժամանակ թեկնածուի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչվելու դեպքում այդ թեկնածուի անունը քվեաթերթիկներից հանվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով: Եթե համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունների ժամանակ կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչվելու հետևանքով քվեարկությանը մասնակցում է միայն մեկ կուսակցություն կամ կուսակցությունների դաշինք, ապա համապատասխան ընտրական հանձնաժողովի որոշմամբ տպագրվում է նաև դեմ քվեարկությամբ առանձին քվեաթերթիկ: Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունների ժամանակ քվեաթերթիկները տպագրելուց հետո ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական կամ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչվելու դեպքում այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) քվեաթերթիկները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով հանվում են քվեարկությունից և մարվում են:»:

**Հոդված 41~~2~~.** Օրենսգրքի 60-րդ հոդվածի 3-րդ մասի չորրորդ պարբերությունը լրացնել նոր չորրորդ և հինգերորդ նախադասություններով.

«Տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետի անհամատեղելիության պայմանները կարող են սահմանվել բացառապես սույն օրենսգրքով: Տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետի կարգավիճակը չի հանդիսանում այլ օրենքներով և իրավական ակտերով նախատեսված անհամատեղելիության պահանջների խախտում:»:

**Հոդված 42~~3~~.** Օրենսգրքի 61-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Քվեարկության սենյակում կամ դրա մուտքի մոտ փակցվում են ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների անվանումները՝ ըստ քվեաթերթիկների համարների հերթականության, և դրանց ընտրական ցուցակները: Կուսակցությունների դաշինքի դեպքում դաշինքի անվանման ներքո փակագծերում նշվում են նաև դաշինքի անդամ բոլոր կուսակցությունների անվանումները:»:

**Հոդված 43~~4~~.** Օրենսգրքի 64-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի «1200» թվերը փոխարինել «1100» թվերով,

2) 2-րդ մասի առաջին պարբերության առաջին նախադասությունում «քվեարկությանը ներկա գտնվելու» բառերը փոխարինել «քվեարկության սենյակում ներկա գտնվելու» բառերով,

3~~2~~) 2-րդ մասի երկրորդ պարբերության առաջին նախադասությունից հանել «քվեաթերթիկները, քվեարկության ծրարները,» բառերը և կետադրական նշանները,

4~~3~~) 2-րդ մասի երկրորդ պարբերության երրորդ նախադասության մեջ «Հարյուր ինքնասոսնձվող դրոշմանիշ հատկացվում է» բառերը փոխարինել «Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը չհրկիզվող պահարանից հանում է հարյուր ինքնասոսնձվող դրոշմանիշ և հատկացնում է» բառերով:

**Հոդված 44~~5~~.** Օրենսգրքի 65-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ նախադասությունում «յուրաքանչյուր կազմակերպությունից մեկ դիտորդ» բառերը փոխարինել «յուրաքանչյուր կազմակերպությունից երկու դիտորդ» բառերով:

**Հոդված 45.** Օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ․

«Ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամն ընտրողից վերցնում է քվեարկության կտրոնը, ընտրողների ցուցակում գտնում է ընտրողի տողը, ընտրողը ստորագրում է իր տվյալների դիմաց՝ ընտրողի ստորագրության համար նախատեսված սյունակում, հանձնաժողովի անդամն իր անհատական կնիքն է դնում համապատասխան սյունակում, որից հետո անհատական կնիքով կնքում է քվեարկության կտրոնը և այն փոխանցում ընտրողին:»:

**Հոդված 46.** Օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ մասը «նախապատրաստման» բառից առաջ լրացնել «նախօրդ օրը և քվեարկության օրը» բառերով:

~~**Հոդված 47.** Օրենսգրքի 68-րդ հոդվածում՝~~

~~1) 3-րդ մասի առաջին պարբերությունը «քվեարկության ծրարից հանում է քվեաթերթիկը» բառերից առաջ լրացնել «քվեարկության ծրարի մարված լինելու հիմքերի բացակայության դեպքում՝» բառերով և կետադրական նշանով, ինչպես նաև «քվեաթերթիկը» բառից հետո լրացնել «, այն ցուցադրում այնպես, որ տեսանելի լինի ներկաների համար» կետադրական նշանով և բառերով,~~

~~2) 3-րդ մասի երկրորդ պարբերության առաջին նախադասությունը «հանձնաժողովի նախագահը հայտարարում է» բառերից հետո լրացնել «քվեարկության ծրարի վրա ավելորդ գրառում պարունակելու, դրա սահմանված կամ չսահմանված նմուշի լինելու մասին, քվեարկության ծրարում քվեաթերթիկից բացի այլ իր պարունակելու մասին,» կետադրական նշաններով և բառերով,~~

~~3) 3-րդ մասի երկրորդ պարբերության երկրորդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.~~

~~«Քվեարկության ծրարից քվեաթերթիկը հանելուց հետո քվեարկության ծրարում քվեաթերթիկից բացի այլ իրի առկայության հայտնաբերման~~

պարագայում հանձնաժողովի նախագահը հանդես է գալիս այդ մասին հայտարարությամբ և քվեաթերթիկը դնում է ծրարի մեջ:»,

4) 3-րդ մասի երկրորդ պարբերության երրորդ նախադասությունը «Պահանջի դեպքում» բառերից հետո լրացնել «քվեարկության ծրարը կամ» բառերով,

5) 3-րդ մասի երկրորդ պարբերության չորրորդ և հինգերորդ նախադասությունները շարադրել նոր խմբագրությամբ.

«Հանձնաժողովի նախագահի հայտարարություններին համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամը ներկայացնում է առարկություն: Առարկության դեպքում քվեարկության է դրվում հանձնաժողովի անդամի առաջարկությունը, և առարկության ընդունման մասին որոշմանը համապատասխան, իսկ առարկությունը չընդունվելու կամ առարկություն չլինելու դեպքում՝ հանձնաժողովի նախագահի հայտարարության համաձայն, քվեարկության ծրարը մարվում է կամ քվեարկության ծրարից հանվում է քվեաթերթիկը կամ քվեաթերթիկը դրվում է համապատասխան կուսակցության օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթի մեջ:»,

6) 4-րդ մասի առաջինից երրորդ պարբերությունները շարադրել նոր խմբագրությամբ.

«Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների ժամանակ հանձնաժողովի նախագահը քվեատուփից հանում է քվեարկության մեկ ծրար, ցուցադրում այնպես, որ այն տեսանելի լինի ներկաների համար, հայտարարում է քվեարկության ծրարի վրա ավելորդ գրառում պարունակելու, դրա սահմանված կամ չսահմանված նմուշի լինելու մասին, քվեարկության ծրարում քվեաթերթիկից բացի այլ իր պարունակելու մասին, քվեարկության ծրարի մարված լինելու հիմքերի բացակայության դեպքում՝ քվեարկության ծրարից հանում է քվեաթերթիկը և հայտարարում քվեաթերթիկի սահմանված կամ չսահմանված նմուշի լինելու մասին, վավեր կամ անվավեր լինելու մասին: Վավեր քվեաթերթիկի դեպքում հայտարարում է նաև, թե որ թեկնածուի օգտին է քվեարկված:

Քվեարկության ծրարից քվեաթերթիկը հանելուց հետո քվեարկության ծրարում քվեաթերթիկից բացի այլ իրի առկայության հայտնաբերման պարագայում հանձնաժողովի նախագահը հանդես է գալիս այդ մասին հայտարարությամբ և քվեաթերթիկը դնում է ծրարի մեջ:

Պահանջի դեպքում քվեարկության ծրարը կամ քվեաթերթիկը փոխանցվում է հանձնաժողովի մյուս անդամներին: Հանձնաժողովի նախագահի հայտարարություններին համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամը ներկայացնում է առարկություն: Առարկության դեպքում քվեարկության է դրվում հանձնաժողովի անդամի առաջարկությունը, և առարկության ընդունման մասին որոշմանը համապատասխան, իսկ առարկությունը չընդունվելու կամ առարկություն չլինելու դեպքում՝ հանձնաժողովի նախագահի հայտարարության համաձայն, քվեարկության ծրարը մարվում է կամ քվեարկության ծրարից հանվում է քվեաթերթիկը կամ քվեաթերթիկը դրվում է թեկնածուի օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթի մեջ, մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում՝ թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկված կամ անվավեր քվեաթերթիկների փաթեթի մեջ, որից հետո քվեատուփից հանում է հաջորդ ծրարը: Այդ գործողությունը կրկնվում է քվեատուփում առկա բոլոր ծրարների համար:

Ընտրություններին մասնակցող թեկնածուների օգտին քվեարկված քվեաթերթիկները և անվավեր քվեաթերթիկները տեսակավորվում են առանձին-առանձին:»,

7) 6-րդ մասի երկրորդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Ավելորդ գրառում պարունակող, չսահմանված նմուշի կամ քվեաթերթիկից բացի այլ իր պարունակող քվեարկության ծրարների դեպքում քվեաթերթիկը ծրարից չի հանվում, քվեարկության ծրարն իր պարունակությամբ անհապաղ մարվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով:»,

8) 6-րդ մասը լրացնել նոր՝ երրորդ պարբերությամբ՝

«Քվեարկության ծրարն իր պարունակությամբ մարվում է այնպես, որ վերահաշվարկի ժամանակ հնարավոր լինի հաստատել մարման հիմքերի

~~առկայությունը: Մարված քվեարկության ծրարների ընդհանուր թիվը հաշվվում և արձանագրվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:»:~~

**Հոդված 47. Օրենսգրքի 68-րդ հոդվածում՝**

1) 3-րդ մասի առաջին պարբերությունը «քվեարկության ծրարից հանում է քվեաթերթիկը» բառերից առաջ լրացնել «քվեարկության ծրարը մարելու հիմքերի բացակայության դեպքում՝» բառերով և կետադրական նշանով, ինչպես նաև «քվեաթերթիկը» բառից հետո լրացնել «, այն ցուցադրում այնպես, որ տեսանելի լինի ներկաների համար» կետադրական նշանով և բառերով,

2) 3-րդ մասի երկրորդ պարբերության առաջին նախադասությունը «հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեաթերթիկի սահմանված կամ չսահմանված նմուշի լինելու մասին» բառերից հետո լրացնել «սահմանված քվեաթերթիկի դեպքում՝» կետադրական նշանով և բառերով,

3) 3-րդ մասի երկրորդ պարբերության երկրորդ նախադասությունը հանել,

4) 3-րդ մասի երկրորդ պարբերության երրորդ նախադասությունը «Պահանջի դեպքում» բառերից հետո լրացնել «քվեարկության ծրարը կամ» բառերով,

5) 3-րդ մասի երկրորդ պարբերության չորրորդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հանձնաժողովի նախագահի հայտարարությանը համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամը ներկայացնում է առարկություն: Առարկության դեպքում քվեարկության է դրվում հանձնաժողովի անդամի առաջարկությունը, և առարկության ընդունման մասին որոշմանը համապատասխան, իսկ առարկությունը չընդունվելու կամ առարկություն չլինելու դեպքում՝ հանձնաժողովի նախագահի հայտարարության համաձայն, քվեարկության ծրարը մարվում է կամ քվեաթերթիկը դրվում է համապատասխան կուսակցության օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթի մեջ:»,

6) 4-րդ մասի առաջինից չորրորդ պարբերությունները շարադրել նոր խմբագրությամբ.

«Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների ժամանակ հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեաթերթիկի սահմանված կամ չսահմանված նմուշի լինելու մասին, սահմանված քվեաթերթիկի դեպքում՝ վավեր կամ անվավեր լինելու մասին: Վավեր քվեաթերթիկի դեպքում հայտարարում է նաև, թե որ թեկնածուի օգտին է քվեարկված:

Պահանջի դեպքում քվեարկության ծրարը կամ քվեաթերթիկը փոխանցվում է հանձնաժողովի մյուս անդամներին: Հանձնաժողովի նախագահի հայտարարությանը համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամը ներկայացնում է առարկություն: Առարկության դեպքում քվեարկության է դրվում հանձնաժողովի անդամի առաջարկությունը, և առարկության ընդունման մասին որոշմանը համապատասխան, իսկ առարկությունը չընդունվելու կամ առարկություն չլինելու դեպքում՝ հանձնաժողովի նախագահի հայտարարության համաձայն, քվեարկության ծրարը մարվում է կամ քվեաթերթիկը դրվում է համապատասխան թեկնածուի օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթի մեջ, մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում՝ թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկված կամ անվավեր քվեաթերթիկների փաթեթի մեջ, որից հետո քվեատուփից հանում է հաջորդ ծրարը: Այդ գործողությունը կրկնվում է քվեատուփում առկա բոլոր ծրարների համար:

Ընտրություններին մասնակցող թեկնածուների օգտին քվեարկված քվեաթերթիկները, մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում՝ դեմ քվեարկված քվեաթերթիկները և անվավեր քվեաթերթիկները տեսակավորվում են առանձին-առանձին:»,

7) 6-րդ մասը լրացնել նոր՝ երրորդ պարբերությամբ.

«Քվեարկության ծրարը մարվում է այնպես, որ վերահաշվարկի ժամանակ հնարավոր լինի հաստատել մարման հիմքի առկայությունը:»:

**Հոդված 48.** Օրենսգրքի 69-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «կամ ծրարում, քվեաթերթիկից բացի, առկա է այլ իր» բառերը,

2) 2-րդ մասի 1-ին կետից հանել «կուսակցության» բառը,

3) 2-րդ մասի 6-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

4) 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

~~**Հոդված 49.** Օրենսգրքի 70-րդ հոդվածում՝~~

~~1) վերնագիրը «քվեաթերթիկները» բառերից առաջ լրացնել «քվեարկության ծրարները և» բառերով,~~

~~2) լրացնել նոր՝ 2-րդ մաս.~~

~~«2. Սահմանված նմուշի քվեարկության ծրար է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հաստատված նմուշի այն քվեարկության ծրարը, որը հանվել է քվեատուփից:»:~~

**Հոդված 49~~50~~.** Օրենսգրքի 71-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 11-րդ կետը «կուսակցությանը» բառից հետո լրացնել «(կուսակցությունների դաշինքին)» կետադրական նշանով և բառերով,

2) 1-ին մասի 12-րդ կետում «թեկնածուին» բառը հանել և «մեկ թեկնածու» բառերից հետո լրացնել «, մեկ կուսակցություն (կուսակցությունների դաշինք)» կետադրական նշանները և բառերը,

3) 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«8. Տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք կարող են լուսանկարել կամ տեսանկարահանել ընտրական տեղամասում կազմված քվեարկության արդյունքների արձանագրությունը:

Տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց տրվում է ընտրական

տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով:»:

**Հոդված 50~~1~~.** Օրենսգրքի 73-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությունից հանել «և արձանագրության մեկ քաղվածք» բառերը:

**Հոդված 51~~2~~.** Օրենսգրքի 74-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերում «հանձնաժողովին» բառերը փոխարինել «հանձնաժողովներին» բառերով,

2) 3-րդ մասի 11-րդ կետը «կուսակցության» բառից հետո լրացնել «(կուսակցությունների դաշինքին)» կետադրական նշանով և բառերով,

3) 3-րդ մասի 13-րդ կետից հանել «թեկնածուին» բառը և «մեկ թեկնածու» բառերից հետո լրացնել «, մեկ կուսակցություն (կուսակցությունների դաշինք)» կետադրական նշանները և բառերը:

**Հոդված 52~~3~~.** Օրենսգրքի 75-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի երկրորդ պարբերության «հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության ուղիղ եթերով» բառերը փոխարինել «հանրային տեսալսողական հեռարձակողի և հանրային լսողական հեռարձակողի ուղիղ եթերով» բառերով,

2) 4-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերում «հանձնաժողովին» բառերը փոխարինել «հանձնաժողովներին» բառերով,

3) 4-րդ մասի 11-րդ կետը «կուսակցության» բառից հետո լրացնել «(կուսակցությունների դաշինքին)» կետադրական նշանով և բառերով:

**Հոդված 534.** Օրենսգրքի 80-րդ հոդվածի 3-րդ մասում «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով:

**Հոդված 545.** Օրենսգրքի 81-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունը պարբերությունը ուժը կորցրած ճանաչել հանել:

**Հոդված 556.** Օրենսգրքի 84-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) տեղեկանք՝ կուսակցության կանոնադրության՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքին համապատասխանության մասին (կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունների կանոնադրությունների՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքին համապատասխանության մասին տեղեկանքներ), ինչպես նաև կուսակցության կանոնադրության պատճենը (կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունների կանոնադրությունների պատճենները),»,

12) 2-րդ մասի 2-րդ կետից հանել «համապետական և տարածքային» բառերը,

23) 2-րդ մասի 5-րդ կետը «յուրաքանչյուրի ներկայացրած» բառերից հետո լրացնել «ընտրական» բառով,

34) 2-րդ մասի 8-րդ կետում «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության» բառերով,

5) 2-րդ մասը լրացնել նոր՝ 10-րդ կետով.

«10) տեղեկանք՝ կուսակցության (կուսակցությունների դաշինքի անդամ կուսակցությունների) կողմից ընտրություններին նախորդող հաշվետու տարվա տարեկան հաշվետվությունը, իսկ ընտրական ցուցակների գրանցման համար

~~անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման ժամկետի դրությամբ կուսակցությունների տարեկան հաշվետվության ներկայացման ժամկետը լրացած չլինելու և տարեկան հաշվետվությունը ներկայացված չլինելու դեպքում՝ ընտրություններին նախորդող նախավերջին հաշվետու տարվա տարեկան հաշվետվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ներկայացված լինելու մասին:»,~~

~~6) լրացնել նոր՝ 4.1-ին մաս.~~

~~«4.1. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված տեղեկանքը տրամադրում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում գործող պետական գրանցում և պետական հաշվառում իրականացնող մարմինը: Տեղեկանքը պետք է տրամադրվի ոչ շուտ, քան համապատասխան ընտրությունների նշանակումը և ոչ ուշ, քան սույն օրենսգրքով սահմանված ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման համար փաստաթղթերը ներկայացնելու սահմանված ժամկետի ավարտի նախորդ օրը:»,~~

~~7) լրացնել նոր՝ 4.2-րդ մաս.~~

~~«4.2. Սույն հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով սահմանված տեղեկանքը տրամադրում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ դիմելուց հետո՝ եռօրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան սույն օրենսգրքով սահմանված ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման համար փաստաթղթերը ներկայացնելու սահմանված ժամկետի ավարտի նախորդ օրը: Տեղեկանքի ձևը սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:»,~~

4~~8~~) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Ընտրություններին մասնակցելու դիմում ներկայացնելու համար կուսակցության (կուսակցությունների դաշինքի) էլեկտրոնային եղանակով ընտրական ցուցակի ձևավորման նպատակով Կենտրոնական ընտրական

հանձնաժողովը կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) տրամադրում է օգտահաշիվ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի ձևավորման նպատակով օգտահաշիվ ստանալու, էլեկտրոնային եղանակով ընտրական ցուցակ ձևավորելու կարգը և օգտահաշիվ ստանալու նպատակով դիմումի էլեկտրոնային ձևաթուղթը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակները գրանցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են միայն կուսակցության (կուսակցությունների դաշինքի) լիազոր ներկայացուցչի միջոցով՝ առձեռն, սույն օրենսգրքով սահմանված ժամկետներում:»,

5~~9~~) 7-րդ մասի վերջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Այդ ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի վերաբերյալ անճշտությունները չվերացնելու կամ փաստաթղթերը չլրացնելու դեպքում ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցումը մերժվում է, իսկ թեկնածուի վերաբերյալ անճշտությունները չվերացնելու կամ փաստաթղթերը չլրացնելու դեպքում ընտրական ցուցակում ընդգրկված տվյալ թեկնածուի գրանցումը մերժվում է և նրա անունը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով հանվում է ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակից:»:

**Հոդված 56~~7~~.** Օրենսգրքի 85-րդ հոդվածի՝

1) վերնագրում, 1-ին, 2-րդ և 4-րդ մասերում «կուսակցության» բառերը փոխարինել «կուսակցության (կուսակցությունների դաշինքի)» կետադրական նշանով և բառերով,

2) 2-րդ մասում «կուսակցություններին» բառը փոխարինել «կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին)» կետադրական նշանով և բառերով,

3) 3-րդ մասում «ապահովում է կուսակցությունների ընտրական ցուցակների և նախընտրական ծրագրերի հրապարակայնությունը» բառերը փոխարինել «հրապարակում է կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակները և նախընտրական ծրագրերը» բառերով:

**Հոդված 57~~8~~.** Օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 58~~9~~.** Օրենսգրքի 87-րդ հոդվածում՝

1) վերնագիրը և տեքստը «կուսակցության» բառից հետո լրացնել «(կուսակցությունների դաշինքի)» կետադրական նշանով և բառերով,

2) լրացնել նոր՝ 1.1-ին մասով.

«1.1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կուսակցության համագումարի և մշտապես գործող ղեկավար մարմնի իրավազորության բացակայության կամ համապատասխան որոշումները ընդունված չլինելու հիմքով կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցումը կարող է անվավեր ճանաչել միայն այդ հիմքերի առկայությունը հաստատող դատական ակտի հիման վրա:»:

**Հոդված 59~~60~~.** Օրենսգրքի 89-րդ հոդվածի՝

1) վերնագիրը և 1-ին մասը «կուսակցության» բառից հետո լրացնել «(կուսակցությունների դաշինքի)» կետադրական նշանով և բառերով,

2) 2-րդ մասի առաջին «կուսակցության» բառը փոխարինել «կուսակցության (կուսակցությունների դաշինքի)» կետադրական նշանով և բառերով:

**Հոդված 60~~61~~.** Օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի առաջին և երրորդ պարբերությունները «կուսակցության» բառերից հետո լրացնել «(կուսակցությունների դաշինքի)» կետադրական նշաններով և բառերով:

**Հոդված 61~~2~~.** Օրենսգրքի 92-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «նվիրատվություններից» բառը փոխարինել «մուծումներից» բառով,

2) 2-րդ մասում «նվիրատվություն կատարելու» բառերը փոխարինել «կատարելու մուծում» բառերով,

3) 2-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ. «Ընտրության երկրորդ փուլի դեպքում ընտրություններին մասնակցող կուսակցությունը (կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունները միասին) իրավունք ունեն կուսակցության (կուսակցությունների դաշինքի) հիմնադրամ կատարելու մուծում նվազագույն աշխատավարձի մինչև 200 000-ապատիկի չափով գումար:»,

4) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 62~~3~~.** Օրենսգրքի 93-րդ հոդվածի՝

1) վերնագրում և տեքստում «ռադիոյով և հեռուստատեսությամբ» բառերը փոխարինել «տեսալսողական հաղորդումներով» բառերով,

2) տեքստում «հանրային հեռուստատեսության» բառերը փոխարինել «հանրային տեսալսողական հեռարձակողի» բառերով,

3) տեքստում «հանրային ռադիոյի» բառերը փոխարինել «հանրային լսողական հեռարձակողի» բառերով,

4) 1-ին մասում «ռադիոյի և հեռուստատեսության» բառերը փոխարինել «տեսալսողական մեդիածառայություն մատուցողների» բառերով:

**Հոդված 63~~4~~.** Օրենսգրքի 115-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի առաջին պարբերությունում «նվիրատվություններից» բառը փոխարինել «մուծումներից» բառերով,

2) 2-րդ մասի երկրորդ պարբերությունում «նվիրատվություն կատարելու» բառերը փոխարինել «կատարելու մուծում» բառերով,

3) 3-րդ մասում «նվիրատվություն» բառը փոխարինել «մուծում» բառով:

**Հոդված 64~~5~~.** Օրենսգրքի 118-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետում «միակ թեկնածուի» բառերը փոխարինել «թեկնածուներից մեկի» բառերով:

**Հոդված 65~~6~~.** Օրենսգրքի 120-րդ հոդվածի 5-րդ մասում «մեկ շաբաթով» բառերը փոխարինել «երկու շաբաթով» բառերով:

**Հոդված 66~~7~~.** Օրենսգրքի 121-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասի առաջին պարբերության «քառասնօրյա» բառը փոխարինել «վաթսունօրյա» բառով,

2) 3-րդ մասի երկրորդ պարբերության «արտահերթ» բառը փոխարինել «հերթական» բառով:

**Հոդված 67~~8~~.** Օրենսգրքի 122-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 122. Արտահերթ ընտրություն նշանակելը և անցկացնելը և թեկնածուներ առաջադրելու և գրանցելու ժամկետները**

1. Համայնքի ղեկավարի արտահերթ ընտրությունը նշանակվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սույն օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված օրերից որևէ մեկը այն հաշվարկով, որ պահպանվեն ընտրությունների կազմակերպման և անցկացման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետները:

2. Համայնքի ավագանու անդամների ընդհանուր թիվը կիսով չափ նվազելու դեպքում արտահերթ ընտրությունը նշանակվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով և ժամկետներում:

3. Թեկնածուների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը ընտրատարածքային ընտրական հանձնաժողով են ներկայացվում քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 35, և ոչ ուշ, քան 30 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն:

4. Թեկնածուների գրանցումը կատարվում է քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն:»:

**Հոդված 69.** Օրենսգրքի 122.1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

**«Հոդված 122.1. Ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո ընտրությունների նշանակումը և անցկացումը**

1. Ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու լիազորությունների ժամկետը երկարաձգվում է մինչև ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո ընտրությունների արդյունքով ընտրված համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակման օրը, եթե ընտրությունների արդյունքները դատարան չեն բողոքարկվել, իսկ ընտրությունների արդյունքները դատարան բողոքարկելու դեպքում՝ դատական ակտի ուժի մեջ մտնելու օրը:

2. Ռազմական կամ արտակարգ դրության հետևանքով չնշանակված կամ չանցկացված համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու հերթական և նոր ընտրությունները նշանակվում են մարզպետի որոշմամբ, իսկ արտահերթ ընտրությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում:

~~3. Ընտրությունները նշանակվում են՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սույն օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված օրերից որևէ մեկն այն հաշվարկով, որ ընտրություն նշանակելու մասին որոշումն ուժի մեջ մտնի քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 70 օր առաջ:~~

~~4. Ընտրությունները կազմակերպվում և անցկացվում են հերթական ընտրությունների համար սույն օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում:»:~~

**Հոդված 68~~70~~.** Օրենսգրքի 127-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «հերթական ընտրությունն» բառերը փոխարինել «ընտրության քվեարկությունն» բառերով,

2) 2-րդ մասի առաջին պարբերության առաջին և երկրորդ նախադասություններում «60» թիվը փոխարինել «70» թվով, իսկ երկրորդ պարբերությունում «մեկ շաբաթով» բառերը փոխարինել «երկու շաբաթով» բառերով:

**Հոդված 69~~71~~.** Օրենսգրքի 128-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 128. Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների արտահերթ ընտրություններ նշանակելը և անցկացնելը և ընտրական ցուցակների գրանցման համար նախատեսվող ժամկետները**

1. Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների արտահերթ ընտրություններ նշանակում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ համապատասխան ավագանու արձակվելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում:

2. Երևանի ավագանու արտահերթ ընտրությունը նշանակվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ այն հաշվարկով, որ

ընտրություն նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ մտնի քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 70 օր առաջ:

3. Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների (բացառությամբ Երևանի) արտահերթ ընտրություններն անցկացվում են սույն օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված օրերից այն օրը, որ պահպանվեն ընտրությունների կազմակերպման և անցկացման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետները:

4. Եթե համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների արտահերթ ընտրության քվեարկության օրը համընկնում է Ազգային ժողովի ընտրությունների քվեարկության օրվա հետ, ապա ավագանու ընտրության օրը հետաձգվում է երկու շաբաթով:

5. Երևանի ավագանու արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացվում քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 45, և ոչ ուշ, քան 35 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն:

6. Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների դեպքում ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցումը կատարվում է քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 35, և ոչ ուշ, քան 30 օր առաջ:

7. Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների (բացառությամբ Երևանի) ավագանիների արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով են ներկայացվում քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 45, և ոչ ուշ, քան 35 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն:

8. Ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցումը կատարվում է քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 35, և ոչ ուշ, քան 30 օր առաջ:»:

~~**Հոդված 72.** Օրենսգրքի 128.1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.~~

~~**«Հոդված 128.1. Ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո համայնքների ավագանիների՝ համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների նշանակումը և անցկացումը, թեկնածուների առաջադրումը և գրանցումը**~~

~~1. Ռազմական կամ արտակարգ դրության հետևանքով չնշանակված կամ չանցկացված համամասնական ընտրակարգով համայնքի ավագանու հերթական ընտրությունը նշանակվում է մարզպետի (Երևանի ավագանու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության) որոշմամբ, արտահերթ ընտրությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, նոր ընտրությունը՝ համապատասխան ընտրական հանձնաժողովի որոշմամբ՝ ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում:~~

~~2. Ռազմական կամ արտակարգ դրության հետևանքով չնշանակված կամ չանցկացված համամասնական ընտրակարգով համայնքի ավագանու ընտրությունները նշանակվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սույն օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված օրերից որևէ մեկը այն հաշվարկով, որ ընտրություն նշանակելու մասին որոշումն ուժի մեջ մտնի քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 70 օր առաջ:~~

~~3. Ընտրությունները կազմակերպվում և անցկացվում են հերթական ընտրությունների համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետներում:»:~~

**Հոդված 7~~3~~0.** Օրենսգրքի 130-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի վեցերորդ պարբերությունում «առնվազն կեսը» բառերը փոխարինել «առնվազն մեկ երրորդը» բառերով,

~~2) 3-րդ մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.~~

~~«1) տեղեկանք՝ կուսակցության կանոնադրության՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքին համապատասխանության մասին (կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունների կանոնադրությունների՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքին համապատասխանության մասին տեղեկանքներ), ինչպես նաև կուսակցության կանոնադրության պատճենը (կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունների կանոնադրությունների պատճենները),»,~~

~~3) 3-րդ մասը լրացնել նոր՝ 9-րդ կետով.~~

~~«9) տեղեկանք՝ կուսակցության (կուսակցությունների դաշինքի անդամ կուսակցությունների) կողմից ընտրություններին նախորդող հաշվետու տարվա տարեկան հաշվետվությունը, իսկ ընտրական ցուցակների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման ժամկետի դրությամբ կուսակցությունների տարեկան հաշվետվության ներկայացման ժամկետը լրացած չլինելու և տարեկան հաշվետվությունը ներկայացված չլինելու դեպքում՝ ընտրություններին նախորդող նախավերջին հաշվետու տարվա տարեկան հաշվետվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ներկայացված լինելու մասին:»,~~

~~4) լրացնել՝ նոր 3.1-ին և 3.2-րդ մասերով.~~

~~«3.1. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված տեղեկանքը տրամադրում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում գործող պետական գրանցում և պետական հաշվառում իրականացնող մարմինը: Տեղեկանքը պետք է տրամադրվի ոչ շուտ, քան համապատասխան ընտրությունների նշանակումը և ոչ ուշ, քան սույն օրենսգրքով սահմանված ընտրություններին մասնակցող կուսակցությունների~~

~~(կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման համար փաստաթղթերը ներկայացնելու սահմանված ժամկետի ավարտի նախորդ օրը:~~

~~3.2. Սույն հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով սահմանված տեղեկանքը տրամադրում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ դիմելուց հետո՝ եռօրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան սույն օրենսգրքով սահմանված ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման համար փաստաթղթերը ներկայացնելու սահմանված ժամկետի ավարտի  նախորդ օրը: Տեղեկանքի ձևը սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:»:~~

2~~5~~) լրացնել նոր 4.1-ին մաս.

«4.1. Ընտրություններին մասնակցելու դիմում ներկայացնելու համար կուսակցության (կուսակցությունների դաշինքի) էլեկտրոնային եղանակով ընտրական ցուցակի ձևավորման նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) տրամադրում է օգտահաշիվ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում կուսակցության, կուսակցությունների դաշինքի ձևավորման նպատակով օգտահաշիվ ստանալու, էլեկտրոնային եղանակով ընտրական ցուցակ ձևավորելու կարգը և օգտահաշիվ ստանալու նպատակով դիմումի էլեկտրոնային ձևաթուղթը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:»,

3~~6~~) 5-րդ մասի չորրորդ պարբերությունում «ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի վերաբերյալ» բառերը հանել, իսկ «թեկնածուի դեպքում» բառերը փոխարինել «թեկնածուի վերաբերյալ անճշտությունները չվերացնելու կամ փաստաթղթերը չլրացնելու դեպքում ընտրական ցուցակում ընդգրկված տվյալ թեկնածուի գրանցումը մերժվում է և» բառերով:

**Հոդված 714.** Օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 72~~5~~**. Օրենսգրքի 133-րդ հոդվածում՝

3) վերնագրում «կուսակցության» բառը փոխարինել «կուսակցության (կուսակցությունների դաշինքի)» կետադրական նշանով և բառերով,

4) 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Ընտրական հանձնաժողովը կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցումը ճանաչում է անվավեր, եթե գրանցումից հետո հայտնի են դառնում փաստեր, որ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը կեղծված են:

Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու հետևանքով կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն անվավեր չի ճանաչվում, եթե անգամ խախտվում են սույն օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները:»:

3) լրացնել նոր՝ 1.1-ին մաս.

«1.1. Ընտրական հանձնաժողովը կուսակցության համագումարի և մշտապես գործող ղեկավար մարմնի իրավազորության բացակայության կամ համապատասխան որոշումները ընդունված չլինելու հիմքով կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցումը կարող է անվավեր ճանաչել միայն այդ հիմքերի առկայությունը հաստատող դատական ակտի հիման վրա:»,

4) 3-րդ մասում «կուսակցության» բառը փոխարինել «կուսակցության (կուսակցությունների դաշինքի)» կետադրական նշանով և բառերով:

**Հոդված 73~~6~~**. Օրենսգրքի 135.1-ին հոդվածի՝

1) 1-ին մասի 5-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:.

2) 2-5-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքում համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունը չկայացած ճանաչելու մասին ընտրական հանձնաժողովի որոշմամբ նշանակվում է նաև նոր ընտրություն, որն անցկացվում է ընտրությունը չկայացած ճանաչելու մասին ընտրական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող վաթսունօրյա ժամկետի վերջին կիրակի օրը:

Սույն մասով սահմանված կարգով նշանակված նոր ընտրությունը չկայացած ճանաչվելու դեպքում, ընտրական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշանակում է նոր ընտրություն և հայտարարում քվեարկության օրը:

3. Եթե սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում ընտրությունները չկայացած ճանաչվելու մասին ընտրական հանձնաժողովի որոշումը չի բողոքարկվել վարչական դատարան, ապա որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշանակում է նոր ընտրություն և հայտարարում քվեարկության օր ոչ ուշ, քան Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող վաթսունօրյա ժամկետի վերջին կիրակի օրը:

4. Եթե սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում ընտրությունները չկայացած ճանաչվելու մասին ընտրական հանձնաժողովի որոշումը բողոքարկվել է վարչական դատարան, և վարչական դատարանի դատական ակտով ընտրական հանձնաժողովի որոշումը թողնվել է անփոփոխ, կամ որոշում է ընդունվել հայցադիմումի ընդունումը մերժելու մասին, ապա դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշանակում է նոր ընտրություն և հայտարարում քվեարկության օրը, ոչ ուշ, քան հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող վաթսունօրյա ժամկետի վերջին կիրակի օրը:

5. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դեպքում համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունը

չկայացած ճանաչելու մասին ընտրական հանձնաժողովի որոշմամբ նշանակվում է նաև նոր ընտրություն, որն անցկացվում է ընտրությունը չկայացած ճանաչելու մասին ընտրական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող վաթսունօրյա ժամկետի վերջին կիրակի օրը:

Սույն մասով սահմանված կարգով նշանակված նոր ընտրությունը չկայացած ճանաչվելու դեպքում, ընտրական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշանակում է նոր ընտրություն և հայտարարում քվեարկության օրը:»,

3) 6-րդ մասում «՝ տվյալ ընտրության նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցին համապատասխան» կետադրական նշանը և բառերը հանել,

4) 7-րդ մասում «արտահերթ» բառը փոխարինել «հերթական» բառով,

5) 8-րդ մասում «Համապատասխան» բառը փոխարինել «Կենտրոնական» բառով:

**Հոդված 74~~7~~.** Օրենսգրքի 138-րդ հոդվածի՝

1) վերնագրում «հեռուստատեսությամբ և ռադիոյով» բառերը փոխարինել «տեսալսողական հաղորդումներով» բառերով,

2) տեքստում «հանրային հեռուստատեսության» բառերը փոխարինել «հանրային տեսալսողական հեռարձակողի» բառերով,

3) տեքստում «հանրային ռադիոյի» բառերը փոխարինել «հանրային լսողական հեռարձակողի» բառերով,

4) 3-րդ մասում «ռադիոյի և հեռուստատեսության» բառերը փոխարինել «հանրային հեռարձակողների» բառերով:

**Հոդված 75~~8~~.** Օրենսգրքի 139-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «նվիրատվություններից» բառը փոխարինել «մուծումներից» բառով,

2) 2-րդ մասում «նվիրատվություն» բառերը փոխարինել «մուծում» բառերով,

3) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 76~~9~~.** Օրենսգրքի 141-րդ հոդվածում՝

~~1) 6-րդ մասը լրացնել նոր՝ չորրորդ պարբերությամբ.~~

~~«Արձանագրությունը կազմվում է ավագանի ընտրվելու մասին համապատասխան ընտրական հանձնաժողովի որոշման վիճարկման համար սահմանված ժամկետի ավարտին հաջորդող 5-րդ օրը, իսկ այդ որոշման վիճարկման դեպքում՝ համապատասխան որոշումն ընդունելու հաջորդող 5-րդ օրը:»,~~

~~2) 8-րդ մասի առաջին պարբերությունում «ցածր է լինելու 25 տոկոսից» բառերը և թիվը փոխարինել «ցածր է լինելու 30 տոկոսից» բառերով և թվով:~~

1) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. Ընտրական ցուցակից ընտրվում է այն թեկնածուն, որի հերթական համարն ընտրական ցուցակում փոքր կամ հավասար է տվյալ ընտրական ցուցակին հասանելիք մանդատների թվին:

Եթե դրա արդյունքով կուսակցության մանդատների 70 տոկոսից ավելին բաժին է հասնում նույն սեռի ներկայացուցիչներին, ապա առավել շատ ներկայացված սեռի՝ 70 տոկոսը գերազանցող մանդատները տրամադրվում են ընտրական ցուցակի՝ պակաս ներկայացված սեռի նվազագույն համարով թեկնածուներին, եթե այդպիսիք առկա են՝ ապահովելով պակաս ներկայացված սեռի 30 տոկոսից ոչ պակաս ներկայացվածություն: Եթե ընտրական ցուցակում պակաս ներկայացված սեռի ներկայացուցիչներ չկան, ապա այդ մանդատները մնում են թափուր: Եթե կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների թիվը փոքր է հասանելիք մանդատների թվից, ապա համապատասխան մանդատները մնում են թափուր:

Երևանի ավագանու անդամ ընտրված թեկնածուների մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմում է արձանագրություն, իսկ

համամասնական ընտրակարգով անցկացվող մյուս համայնքների ավագանու անդամ ընտրված թեկնածուների մասին արձանագրություն է կազմում համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:

Երևանի ավագանու անդամ ընտրված թեկնածուների մասին արձանագրությունը՝ հնգօրյա ժամկետում, ուղարկվում է վարչապետին, իսկ համամասնական ընտրակարգով անցկացվող մյուս համայնքների ավագանու անդամ ընտրված թեկնածուների մասին արձանագրությունը՝ համապատասխան մարզպետին:

Արձանագրությունը կազմվում է ավագանի ընտրվելու մասին համապատասխան ընտրական հանձնաժողովի որոշման վիճարկման համար սահմանված ժամկետի ավարտին հաջորդող 5-րդ օրը, իսկ այդ որոշման վիճարկման դեպքում՝ համապատասխան որոշումն ընդունելու հաջորդող 5-րդ օրը:»,

2) 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«8. Մանդատից հրաժարված կամ ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը համապատասխան ընտրական հանձնաժողովի արձանագրությամբ այդ մասին հանձնաժողովին իրազեկելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, տրվում է այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուին, իսկ եթե դրա արդյունքում տվյալ խմբակցության որևէ սեռի ներկայացուցիչների թիվը նվազում է և արդյունքում ցածր է լինելու 30 տոկոսից, ապա տրվում է այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի նվազ ներկայացված սեռի հաջորդ թեկնածուին, եթե կա: Եթե ընտրական ցուցակում նվազ ներկայացված սեռի թեկնածուներ չկան, ապա այդ մանդատը մնում է թափուր:

Եթե ընտրական ցուցակում այլ թեկնածու չկա, ապա մանդատը մնում է թափուր:»:

**Հոդված 7780.** Օրենսգրքի 142-րդ հոդվածի՝

1) 6-րդ մասի երրորդ նախադասության «արտահերթ» բառը փոխարինել «հերթական» բառով,

2) 7-րդ մասը լրացնել նոր՝ 4-րդ կետով.

«4) եթե սույն օրենսգրքով սահմանված կարգով մանդատների բաշխման պահի դրությամբ չի ձևավորվում համայնքի ավագանու առնվազն կեսից ավելին:»,

3) 8-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Սույն հոդվածի 7-րդ մասով ընտրությունները չկայացած ճանաչվելու դեպքում համապատասխան ընտրական հանձնաժողովը ընտրությունները չկայացած ճանաչելու մասին ընտրական հանձնաժողովի որոշմամբ նշանակվում է նաև նոր ընտրություն, որն անցկացվում է ընտրությունը չկայացած ճանաչելու մասին ընտրական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող վաթսունօրյա ժամկետի վերջին կիրակի օրը:»,

4) 8-րդ մասի երկրորդ նախադասության «արտահերթ» բառը փոխարինել «հերթական» բառով:

**Հոդված 7881.** Օրենսգրքի 142.2-րդ հոդվածի 7-րդ մասի առաջին պարբերության հինգերորդ նախադասությունում «անձանց» բառը փոխարինել «թեկնածուներին» բառով, իսկ վեցերորդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Լրացուցիչ քվեարկության արդյունքով ձայների հավասարության դեպքում առավելությունը տրվում է համայնքի ավագանու ընտրություններում առավել կողմ ձայներ ստացած կուսակցության (կուսակցությունների դաշինքի) թեկնածուին:»:

**Հոդված 7982.** Օրենսգրքի 144-րդ հոդվածի 18-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 8~~3~~0.** Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Սույն օրենսգրքում կուսակցությանը վերաբերող բոլոր նորմերը, բացառությամբ 4-րդ, 8-րդ, 20-րդ, 20.1-ին, 21-րդ, 26-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ, 35-րդ, 44-րդ, 59-րդ, 61-րդ, 71-րդ, 74-րդ, 75-րդ, 81-րդ, 83-րդ, 84-րդ, 85-րդ, 86-րդ, 87-րդ, 88-րդ, 89-րդ, 90-րդ, 91-րդ, 92-րդ, 95-րդ, 97-րդ, 98-րդ, 129-րդ, 130-րդ, 132-րդ, 133-րդ, 135-րդ, 139-րդ և 141-րդ հոդվածներում առկա նորմերի, վերաբերում են նաև կուսակցությունների դաշինքին:»:

**Հոդված 8~~4~~1.** ~~1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի դեկտեմբերի 1-ից:~~

~~2. Սույն օրենքը պաշտոնապես հրապարակվելուց հետո մինչև դրա ուժի մեջ մտնելու պահը Կենտրոնական ընտրական հանձնաժողովը և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ընդունում են սույն օրենքի կարգավորումներով նախատեսված և դրանց կատարումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը: Սույն մասում նշված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը ուժի մեջ են մտնում սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից:~~

~~3. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների առաջին ատեստավորումը անցկացվում է 2025 թվականի համար:~~

~~4. Ընտրությունների նշանակման և անցկացման վերաբերյալ սույն օրենքով նախատեսվող նոր կարգավորումները տարածվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո նշանակված հերթական, արտահերթ ընտրությունների, ինչպես նաև դրանց արդյունքում կազմակերպվող նոր հերթական, նոր ընտրությունների, վերաքվեարկության և ընտրությունների երկրորդ փուլի վրա: Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո մինչ դրա ուժի մեջ մտնելը նշանակված հերթական, արտահերթ ընտրությունների, ինչպես նաև դրանց արդյունքում կազմակերպվող նոր հերթական, նոր ընտրությունների, վերաքվեարկության և ընտրությունների~~

~~երկրորդ փուլի վրա տարածվում են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ընտրական գործընթացների վերաբերյալ գործող կարգավորումները:~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի ապրիլի 1-ից՝ բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի:

2. Սույն օրենքի 79-րդ հոդվածը ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

3. Սույն օրենքը պաշտոնապես հրապարակվելուց հետո մինչև դրա ուժի մեջ մտնելու պահը Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ընդունում է սույն օրենքի կարգավորումներով նախատեսված և դրանց կատարումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը: Սույն մասում նշված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը ուժի մեջ են մտնում սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից:

4. Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների անդամների առաջին ատեստավորումը անցկացվում է 2025 թվականի համար:

5. Ընտրությունների նշանակման և անցկացման վերաբերյալ սույն օրենքով նախատեսվող նոր կարգավորումները տարածվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո նշանակված հերթական, արտահերթ ընտրությունների, ինչպես նաև դրանց արդյունքում կազմակերպվող նոր հերթական, նոր ընտրությունների, վերաքվեարկության և ընտրությունների երկրորդ փուլի վրա: Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո մինչ դրա ուժի մեջ մտնելը նշանակված հերթական, արտահերթ ընտրությունների, ինչպես նաև դրանց արդյունքում կազմակերպվող նոր հերթական, նոր ընտրությունների, վերաքվեարկության և ընտրությունների երկրորդ փուլի վրա տարածվում են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ընտրական գործընթացների վերաբերյալ գործող կարգավորումները:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ, «ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ, «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ, «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ, «ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ, «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ, «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ, «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ, «ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ, «ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ, «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ, «ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ, «ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ, «ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ, «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-927-26.09.2024-ՊԻ-011/1, Կ-927[1]-26.09.2024-ՊԻ-011/1, Կ-927[2]-26.09.2024-ՊԻ-011/1, Կ-927[3]-26.09.2024-ՊԻ-011/1, Կ-927[4]-26.09.2024-ՊԻ-011/1, Կ-927[5]-26.09.2024-ՊԻ-011/1, Կ-927[6]-26.09.2024-ՊԻ-011/1, Կ-927[7]-26.09.2024-ՊԻ-011/1, Կ-927[8]-26.09.2024-ՊԻ-011/1, Կ-927[9]-26.09.2024-ՊԻ-011/1, Կ-927[10]-26.09.2024-ՊԻ-011/1, Կ-927[11]-26.09.2024-ՊԻ-011/1, Կ-927[12]-26.09.2024-ՊԻ-011/1, Կ-927[13]-26.09.2024-ՊԻ-011/1, Կ-927[14]-26.09.2024-ՊԻ-011/1, Կ-927[15]-26.09.2024-ՊԻ-011/1, Կ-927[16]-26.09.2024-ՊԻ-011/1 և Կ-927[17]-26.09.2024-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկությունների ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ | | | | | |
| 1. | *ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան»* | **Նախագծի 3-րդ հոդված** | Նախագծի Հոդված 3-ով լրացվող 7.1-ին հոդվածը վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ<br>1. Ռազմական կամ արտակարգ | **Չի ընդունվել:**<br>Նախագծից հանվել են այն կարգավորումները, որոնք | **Չի ընդունվել:** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ***խմբակցություն*** | | դրության ժամանակ Ազգային ժողովի ընտրություններ չեն նշանակվում եւ չեն անցկացվում: Ռազմական կամ արտակարգ դրության պատճառով Ազգային ժողովի չնշանակված ընտրությունները նշանակվում են Հանրապետության նախագահի հրամանագրով՝ ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ ուշ, քան 7 օր հետո, եւ անցկացվում են ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ շուտ, քան 50, եւ ոչ ուշ, քան 65 օր հետո:<br>2. Ռազմական դրության ժամանակ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ չեն նշանակվում եւ չեն անցկացվում: Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ չեն նշանակվում եւ չեն անցկացվում: Հայաստանի Հանրապետության տարածքի մի մասում արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ նշանակվում եւ անցկացվում են միայն այն համայնքներում, որոնց տարածքում արտակարգ դրություն հայտարարված չէ: Ռազմական կամ արտակարգ դրության պատճառով չնշանակված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցկացվում են | վերաբերում են ռազմական կամ արտակարգ դրության ընթացքում ընտրություններ նշանակելու և անցկացնելու արգելքին և ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո ընտրություններ նշանակելուն և անցկացնելուն: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած օրերից առավել մոտ այն օրը, որ պահպանվեն հերթական ընտրությունների կազմակերպման եւ անցկացման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետները:<br>Սույն մասով նախատեսված սահմանափակումները չեն տարածվում համամասնական ընտրակարգով ձեւավորված ավագանու կողմից անուղղակի ընտրակարգով ընտրվող համայնքի ղեկավարի ընտրությունների վրա:<br>3. Ռազմական կամ արտակարգ դրության պատճառով չնշանակված կամ չանցկացված ընտրությունները կազմակերպվում եւ անցկացվում են սույն օրենսգրքով հերթական ընտրությունների համար սահմանված ընդհանուր կարգով՝ հաշվի առնելով ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո ընտրությունների կազմակերպման եւ անցկացման՝ սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկությունները:<br>4. Եթե ռազմական կամ արտակարգ դրությունը հայտարարվել է Ազգային ժողովի կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ նշանակվելուց հետո մինչեւ քվեարկության սկիզբը, ապա ռազմական կամ արտակարգ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | դրություն հայտարարվելու պահից ընտրական գործընթացն իրավունքի ուժով համարվում է **կասեցված**: Սույն մասով սահմանված դեպքում ռազմական կամ արտակարգ դրության հայտարարվելու պահից կասեցված ընտրական գործընթացը վերսկսվում է ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո, 7 օրյա ժամկետում կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից կայացված և հրապարակված որոշմանը հաջորդող 3-րդ օրվանից: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սույն մասով նախատեսված որոշմամբ պետք է հստակ նշվի ընտրական գործընթացը վերսկսելու օրվա եւ ընտրական գործընթացի այն պահի վերաբերյալ, որից պետք է շարունակվի ընտրական գործընթացը: Եթե ընտրական գործընթացը կասեցվել է մինչև ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտը, ապա ընտրական գործընթացը վերսկսվում է ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման (վերագրանցման) համար կենտրոնական ընտրական | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հանձնաժողովի կողմից սահմանված ողջամիտ ժամկետի սկզբից: Եթե ընտրական գործընթացը կասեցվել է ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո մինչև քվեարկության սկիզբը, ապա ընտրական գործընթացը վերսկսվում է կասեցման պահից, բացառությամբ այն դեպքի, երբ գրանցված ընտրական ցուցակներ ունեցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) առնվազը 2/3-ը պահանջում են կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների նոր գրանցում:<br>5. Եթե ռազմական կամ արտակարգ դրությունը հայտարարվել է Ազգային ժողովի կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության ավարտից հետո, ապա ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու պահից ընտրական գործընթացն իրավունքի ուժով համարվում է կասեցված, բացառությամբ քվեարկության նախնական արդյունքները ամփոփելու եւ դրանք արձանագրությամբ վավերացնելու գործողությունների:<br>Սույն մասով սահմանված դեպքում | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ռազմական կամ արտակարգ դրության հայտարարվելու պահից կասեցված ընտրական գործընթացը վերսկսվում է ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո, 7 օրյա ժամկետում կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից կայացված և հրապարակված որոշմանը հաջորդող 3-րդ օրվանից: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սույն մասով նախատեսված որոշմամբ պետք է հստակ նշվի ընտրական գործընթացը վերսկսելու օրվա եւ ընտրական գործընթացի այն պահի վերաբերյալ, որից պետք է շարունակվի ընտրական գործընթացը:<br>6. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելուց հետո՝ անհապաղ, հանդես է գալիս Ազգային ժողովի կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրական գործընթացը կասեցված լինելու մասին հայտարարությամբ եւ դրա վերաբերյալ ծանուցում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին եւ տեղամասային ընտրական հանձնաժողովներին:<br>7. Ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու հիմքով կասեցված ընտրական գործընթացի դեպքում սույն օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | նախատեսված իրերի, ինչպես նաև ընտրական գործընթացին առնչվող փաստաթղթերի պահպանման կարգը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Սույն մասով սահմանված իրերի և փաստաթղերի պահպման կարգը պետք է ներառի գրանցված ընտրական ցուցակներ ունեցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ոչ պակաս, քան 2/3-ի, իսկ եթե ընտրական գործընթացը կասեցվել է մինչև ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցումը, ապա Ազգային ժողովի բոլոր խմբակցությունների մասնակցության իրավունքը իրերի և փաստաթղերի պահպանման գործընթացում:<br>8. Սույն հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերով նախատեսված դեպքերում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները պետք լինեն պատճառաբանված, ներառեն ընտրական գործընթացների վերսկսման և ընթացակարգերի հիմնավոր, հստակ և ողջամիտ ժամկետներ:<br>9. Ռազմական կամ արտակարգ դրության պատճառով չնշանակված Ազգային ժողովի կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները նշանակվում եւ անցկացվում են սույն հոդվածով, ինչպես նաեւ սույն օրենսգրքի 122.1-ին | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | եւ 128.1-ին հոդվածներով սահմանված ժամկետներում: 10. Նոր քվեաթերթիկների, քվեարկության ծրարների եւ ինքնասոսնձվող դրոշմանիշների, ինչպես նաեւ ընտրական այլ նյութերի տպագրությունն իրականացվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ՝ հաշվի առնելով դրանց տպագրության անհրաժեշտությունը: 11. Ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում ընտրական գործընթացների կասեցման եւ վերսկսման վերաբերյալ սույն հոդվածի դրույթները կիրառվում են նաեւ Ազգային ժողովի ընտրությունների վերաքվեարկության կամ առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկության եւ Ազգային ժողովի ընտրության երկրորդ փուլի դեպքերում: Ազգային ժողովի ընտրությունների երկրորդ փուլի դեպքում ռազմական կամ արտակարգ դրության հայտարարվելու պահից կասեցված ընտրական գործընթացը վերսկսվում է ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո 10-րդ օրը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ ուշ, քան 7 օրվա ընթացքում պատճառաբանված որոշում է կայացնում ընտրական գործընթացի վերսկսման մասին, որում նշում է | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կատարվում ընտրական գործընթացի այն պահի վերաբերյալ, որից պետք է շարունակվի ընտրական գործընթացը: Ազգային ժողովի ընտրությունների վերաքվեարկության կամ առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկության դեպքում ռազմական կամ արտակարգ դրության հայտարարվելու պահից կասեցված ընտրական գործընթացը վերսկսվում է ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո 10-րդ օրը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ռազմական կամ արտակարգ դրության ավարտից ոչ ուշ, քան 7 օրվա ընթացքում պատճառաբանված որոշում է կայացնում ընտրական գործընթացի վերսկսման մասին, որում նշում է կատարվում ընտրական գործընթացի այն պահի վերաբերյալ, որից պետք է շարունակվի ընտրական գործընթացը եւ դրա մասին հանդես է գալիս հայտարարությամբ: Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների վերաքվեարկություն կամ առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն նշանակվելուց հետո ռազմական կամ արտակարգ դրության հայտարարման դեպքում ընտրական գործընթացը իրավունքի ուժով համարվում է կասեցված: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ռազմական կամ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | արտակարգ դրություն հայտարարվելուց հետո՝ անհապաղ, հանդես է գալիս տեղական ինքնակառավարման մարմինների ընտրական գործընթացը կասեցված լինելու մասին հայտարարությամբ եւ դրա վերաբերյալ ծանուցում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին եւ տեղամասային ընտրական հանձնաժողովներին:<br><br>**Հիմնավորում:** Առաջարկությունը հիմնված է Սահմանադրության 2-րդ հոդվածով սահմանված ժողովրդաիշխանության հիմնարար արժեքը և ազատ, պարբերական և թափանցիկ ընտրության միջազգային սկզբունքները պաշտպանելու հրամայականի վրա: Սահմանադրական կարգի սպառնալիք է հանդիսանում նաև այն, որ որևէ կերպ նվազագույնի չհասցվեն կամ չչեզոքացվեն պարբերական ընտրությունների խաթարման հնարավորությունները: Այս առումով սույն փոփոխութիւնները թղթակցվում են նաև Ռազմական և արտակարգ դրությունների իրավական ռեժիմների մասին օրենքներով առաջարկվող փոփոխությունների հետ: Վերջիններովս առաջարկվում է արգելել քվեարկության օրը ժամը 08:00-ից մինչև 20:00-ն արտակարգ կամ ռազմական դրություն հայտարարելը՝ սահմանափակելով համապետական կարևորագույն | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | միջոցառմանը ներքին կամ արտաքին անօրինական միջամտության հնարավորությունը: Այլ կերպ նվազագույնի հասցնել ընտրական կամ հանրաքվեի անցկացման խոչընդոտ ստեղծող հնարավորությունները: Առաջարկությունը բխում է նաև աշխատանքային քննարկումներից: Առաջարկության ընդունման դեպքում հնարավոր է քննարկել նաև քվեարկությունից հետո ընտրություններն անվավեր ճանաչելու հնարավորությունների կառուցակարգերը՝ բացառելով ներքաղաքական լարված իրավիճակով պայմանավորված ընտրությունների բնականոն ընթացքը խաթարելու հնարավորությունները: Առաջարկություններն հիմնված են նաև Վենետիկի հանձնաժողովի դիրքրոշումների վրա:<br><br>**Այս համատեքստում առաջարկում ենք նաև նախագծերի փաթեթը լրացնել հետևյալ օրինագծերով**<br>1. «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում լրացում կատարելու մասին<br>«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» 2012 թվականի մարտի 21-ի ՀՕ -106-Ն օրենքի 3-րդ հոդվածի երկրորդ մասը լրացնել նոր պարբերությամբ հետևյալ ձևակերպմամբ՝<br>«Արգելվում է արտակարգ դրություն | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հայտարարել Ազգային ժողովի ընտրությունների, ինչպես նաև նշանակված հանրաքվեի օրը ժամը 08:00-ից մինչև 20:00-ն: Սույն պարբերությամբ սահմանված արգելքը չի սահմանափակում կառավարությանը պատճառաբանված որոշմամբ ձեռնարկելու սույն օրենքով նախատեսված միջոցառումները՝ առաջնորդվելով քաղաքացիների ազատ կամքի արտահայտմանը չխոչընդոտելու սկզբունքով:»<br><br>2. «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-258-Ն օրենքի 5-րդ հոդվածը լրացնել նոր՝ 4-րդ, մասով հետևյալ ձևակերպմամբ՝<br>«Արգելվում է ռազմական դրություն հայտարարել Ազգային ժողովի ընտրությունների, ինչպես նաև նշանակված հանրաքվեի օրը ժամը 08:00-ից մինչև 20:00-ն: Սույն պարբերությամբ սահմանված արգելքը չի սահմանափակում կառավարությանը պատճառաբանված որոշմամբ ձեռնարկելու սույն օրենքով նախատեսված միջոցառումները՝ առաջնորդվելով քաղաքացիների ազատ կամքի արտահայտմանը չխոչընդոտելու սկզբունքով:»<br><br>**Հիմնավորում:** Ռազմական կամ արտակարգ դրությունը հանդիսանում են Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը, տարածքային | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ամբողջականությունը, ինչպես նաև սահմանադրական կարգը պաշտպանելու կարևորագույն միջոցներ (հատուկ ռեժիմային ինստիտուտներ): Մյուս կողմից սահմանադրական կարգի կարևորագույն հենասյուն է պարբերական և ազատ ընտրությունների անցկացումը, որը կարիք ունի անվերապահ պաշտպանության: Հետևաբար, որպեսզի արհեստական հակադրություն չստեղծվի պետության կարևորագույն այս ինստիտուտների միջև, առաջարկվում է դրանց սահմանափակումները հավասարակշռել այնպես, որ դրանք համարժեք ձևով արձագանքեն և դիմագրավեն սահմանադրական կարգին սպառնացող ներքին և արտաքին սպառնալիքներին: Տես նաև ընտրական օրենսգրքի առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ բացատրությունը:<br>Ընդ որում, վերը նշված առաջարկները չիրացվելու դեպքում՝ առաջարկվում է ռազմական և արտակարգ դրության վերաբերյալ սույն փոփոխություններով ներկայացվող կարգավորումները հանել նախագծերի փաթեթից՝ առավել ընդգրկուն քննարկում կազմակերպելու և նոր լուծումներ գտնելու նպատակադրությամբ: | | |
| 2. | ***ՀՀ Ազգային ժողովի*** | **Նախագծի 73-** | Նախագծի հոդված 73-ից հանել 2-րդ և 3-րդ կետերով առաջարկվող | **Ընդունվել է:**<br>Նախագծից հանվել են | **Ընդունվել է:** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ***«Հայաստան» խմբակցություն*** | **րդ հոդված** | լրացումները, քանի որ անտրամաբանական է ընտրություններին մասնակցելու համար կուսակցություններից պահանջել ներկայացնել կուսակցության կանոնադրության՝ օրենքին համապատասխանելու վերաբերյալ հավաստում արդարադատության նախարարությունից կամ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից տեղեկանք՝ օրենքով սահմանված հաշվեվությունը կուսակցության կողմից հանձնաժողովին ներկայացված լինելու վերաբերյալ: Բացի այն, որ պետական մարմինները տեղեկատվության հասանելիություն ունեն և չպետք է դրանով ծանրաբեռնել և ավելորդ վարչարարություն իրականացնել կուսակցությունների նկատմամբ, այլ նաև այն պատճառով, որ պետք է առաջնորդվել օրինական կարգով գրանցված և գործունեություն իրականացնող կուսակցությունների իրավաչափ վարքագծով: Հակառակն ապացուցելու պարտականությունը պետական մարմնին է, այլ ոչ թե կուսակցությանը: Առաջարկության կարևոր հիմնավորում է նաև այն, որ կանոնադրության՝ օրենքին համապատասխանության վերաբերյալ ստուգման պարտավորությունը, որը գործող օրենքով դրված էր կենտրոնական ընտրական | քննարկվող կարգավորումները: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հանձնաժողովի վրա նույն այս փոփոխություններով (նախագծի 58 և 74 հոդվածներ) հանվում են:<br><br>Այս համատեքստում առաջարկում ենք նաև նախագծերի փաթեթից հանել «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եվ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը: | | |
| **«Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ** | | | | | |
| 1. | ***ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցություն*** | **Նախագծում լրացնել նոր հոդված** | Նախագիծը լրացնել նոր հոդվածով հետևյալ բովանդակությամբ<br>«Հոդված .. Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասում «հիմնադիր» բառը փոխարինել «անդամ» բառով:<br><br>**Հիմնավորում:** Հոդվածի վերնագիրն ու բովանդակությունը հարկ է համապատասխանեցնել: Բացի այդ, նախատեսված սահմանափակումը վերաբերելի է կուսակցության անդամներին, այլ ոչ թե հիմնադիրներին: Առաջարկությունը բխում է նաև աշխատանքային քննարկումներից: | **Ընդունվել է:**<br>Կարգավորումը հանվել է օրենքից | **Ընդունվել է:** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2. | ***ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցություն*** | **Նախագծի 1-ին հոդված** | Նախագծի հոդված 1-ում կատարել հետևյալ լրացումը «Հոդված 17-ի 3-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ «3) մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի ընտրությունը, եթե կուսակցության կանոնադրությամբ նախատեսված է մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի պաշտոն,»: | **Ընդունվել է:** | **Ընդունվել է:** |
| 3. | ***ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցություն*** | **Նախագծում լրացնել նոր հոդված** | Նախագիծը լրացնել նոր հոդվածով հետևյալ բովանդակությամբ «Հոդված….Օրենքի Հոդված 23-ը վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ<br><br>Հոդված 23. Կուսակցության գույքը<br>1. Կանոնադրությամբ և ծրագրով սահմանված նպատակների իրականացման համար կուսակցությունը սեփականության կամ այլ գույքային իրավունքով կարող է ունենալ ցանկացած գույք: Կուսակցությունը սեփականության իրավունքով չի կարող ունենալ այնպիսի գույք, որը հանված է շրջանառությունից:<br>2. Կուսակցության գույքը գոյանում է՝<br>1) կուսակցությանն անդամագրվելու համար միանվագ կատարվող վճարներից (մուտքի վճարներից), սահմանված չափով պարբերաբար կատարվող վճարներից (անդամավճարներից), եթե դրանք սահմանված են կուսակցության կանոնադրությամբ. | **Չի ընդունվել:** ՀՀ կառավարությունը նպատակահարմար չի գտնում առաջարկվող փոփոխության իրականացումը այս փաթեթով և նախագծի քննարկման այս փուլում, հաշվի առնելով նաև, որ դրանք ամբողջությամբ չեն քննարկվել շահագրգիռ մարմինների, կուսակցությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Բացի այդ ներկայացված չեն հիմնավորումներ առաջարկի անհրաժեշտության վերաբերյալ: | **Չի ընդունվել:** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 2) սույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված նվիրատվություններից. 3) սույն օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված կարգով բյուջետային ֆինանսավորումից. 4) սույն օրենքով սահմանված գործունեությունից ստացված եկամուտներից, 5) կուսակցության կողմից գնված (ձեռք բերված) գույքից, 6) սույն օրենքի պահանջներին համապատասխան ներգրավված վարկերից և փոխառություններից: 3. Մեկ ֆիզիկական անձի կողմից անդամավճարի առավելագույն չափը տարեկան չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի հազարապատիկը: 4. Կուսակցության անդամը սեփականության իրավունք չունի կուսակցությանը պատկանող գույքի նկատմամբ: Կուսակցության գույքի նվիրատվությունն արգելվում է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: 5. Կուսակցությունն իր գույքով պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորությունների համար, իսկ կուսակցության անդամը իր գույքով պատասխանատվություն չի կրում կուսակցության պարտավորությունների համար: 6. Կուսակցությունը կարող է բանկային հաշիվներ ունենալ միայն Հայաստանի Հանրապետության | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | տարածքում գործող՝ Կենտրոնական բանկի լիցենզավորած բանկերում: <br>7. Կուսակցությունը բոլոր դրամական վճարումները կատարում է անկանխիկ հաշվարկներով: <br>8. Կուսակցությունը կարող է ներգրավել վարկային միջոցներ: Կուսակցության հետ վարկային պայմանագիր կնքելու դեպքում այդ պայմանագրի պայմանները, ներառյալ՝ վարկի տոկոսադրույքը, պետք է համապատասխանեն շուկայում գործող սովորական պայմաններին և չպետք է էականորեն տարբերվեն այլ անձանց հետ նույնանման պայմաններում կնքվող պայմանագրերի պայմաններից: <br>9. Վարկային պայմանագրի դեպքում արգելվում են վարկը կամ դրանց տոկոսներն ամբողջությամբ կամ մասնակի վճարելու պարտականությունից կուսակցությանն ազատելը (պարտքը ներելը) կամ պայմանագիրը կնքելուց հետո տոկոսադրույքը վերանայելը, որի արդյունքում տոկոսադրույքը շուկայականից էականորեն կնվազի, կամ այդ պայմանագրերի հետ փոխկապակցված գրավի պայմանագիրը վաղաժամկետ լուծելը կամ պայմանագրի պայմանների այնպիսի փոփոխությունները, որոնք կարող են դիտվել ակնհայտ անհավասար այլ անձանց հետ կնքվող համանման պայմանագրերի պայմանների համեմատ կամ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | փաստացի կարող են հավասարվել պարտքը ներելուն: Սույն դրույթների խախտումը կարող է դիտվել որպես իրավաբանական անձի կողմից նվիրատվություն և առաջացնել օրենքով սահմանված պատասխանատվություն:<br>10. Սույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերի դրույթների խախտման հետևանքով կուսակցության ձեռք բերած եկամուտը (խնայողությունը) համարվում է օրենքով արգելված նվիրատվություն և ենթակա է փոխանցման պետական բյուջե՝ սույն օրենքի 24-րդ հոդվածին համապատասխան: Սույն դրույթների խախտումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:<br>11. Կուսակցության հետ բանկային ավանդի պայմանագիր կնքելիս պայմանագրի պայմանները, ներառյալ՝ բանկային ավանդի տոկոսադրույքը պետք է համապատասխանեն շուկայում գործող սովորական պայմաններին և չպետք է էականորեն տարբերվեն այլ անձանց հետ նույնանման պայմաններում կնքվող պայմանագրերի պայմաններից: Եթե բանկային ավանդի տոկոսադրույքը էականորեն գերազանցում է համանման պայմանագրերի դեպքում առաջարկվող տոկոսադրույքը, ապա ավանդի տոկոսների՝ համանման պայմանագրերի համեմատ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | էականորեն գերազանցող մասը դիտվում է որպես օրենքով չթույլատրված աղբյուրից նվիրատվություն և ենթակա է փոխանցման պետական բյուջե՝ սույն օրենքի 24-րդ հոդվածին համապատասխան: Սույն մասի դրույթների խախտումը կարող է դիտվել որպես իրավաբանական անձի կողմից նվիրատվություն և առաջացնել օրենքով սահմանված պատասխանատվություն:<br>12. Կուսակցության հետ փոխառության պայմանագիր կնքելու դեպքում այդ պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրի ժամկետը չի կարող ավելին լինել քան երկու տարին: Կուսակցության հետ կնքված փոխառության պայմանագրով փոխատու կարող է լինել միայն ֆիզիկական անձը: Մեկ ֆիզիկական անձի կողմց ներգրավված առավելագույն չափը չի կարող ավելին լինել, քան նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկը:»: | | |
| 4. | ***ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցություն*** | **Նախագծի 4-րդ հոդված** | Նախագծի 4-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ<br>«Հոդված 4. Օրենքի 24-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.<br><br>«Հոդված 24. Կուսակցությանը կատարվող նվիրատվությունները<br>1. Կուսակցությունն իրավունք ունի դրամական միջոցների և այլ գույքի, | **Ընդունվել է մասնակի:**<br>Որոշ առաջարկներ ընդունվել են և ներառվել են նախագծում: Մյուս առաջարկների ընդունումը Կառավարությունը նպատակահարմար չի գտնում այս փաթեթով և | **Ընդունվել է մասնակի:** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | երրորդ անձի կողմից կուսակցության պարտքը մարելու, պարտատիրոջ կողմից կուսակցության պարտքը ներելու, ինչպես նաև կուսակցության օգտին կատարվող այլ գործունեության տեսքով նվիրատվություններ ստանալու ֆիզիկական անձանցից, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:<br>1.1. Նվիրատվություն են համարվում նաև կուսակցության օգտին անհատույց աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը, կուսակցությանը սեփականության իրավունքով գույքի փոխանցումը, օգտագործման հանձնումը կամ նույն կամ համանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գործող շուկայական արժեքից էականորեն ցածր գնով կուսակցության օգտին աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման կամ կուսակցությանը սեփականության իրավունքով գույքի փոխանցման կամ վարձակալության հանձնելու հետևանքով կուսակցության մոտ ձևավորված խնայողությունը (բնեղենով նվիրատվությունը): Գործող շուկայական արժեքից տարբերվող գինը համարվում է էականորեն ցածր, եթե այն գործող շուկայական արժեքից տարբերվում է նվազագույնը քան տոկոսը գերազանցող չափով:<br>1.2. Սույն հոդվածի 1.1-ին մասով | նախագծի քննարկման այս փուլում, հաշվի առնելով նաև, որ դրանք ամբողջությամբ չեն քննարկվել շահագրգիռ մարմինների, կուսակցությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Բացի այդ ներկայացված չեն հիմնավորումներ առաջարկի անհրաժեշտության վերաբերյալ: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | նախատեսված բնեղենով նվիրատվությունները ենթակա են հաշվարկման իրենց շուկայական արժեքով և պետք է արտացոլվեն կուսակցության տարեկան հաշվետվության մեջ, իսկ դրանց արժեքը (գումարը՝ դրամական արտահայտությամբ՝ պայմանագրով նախատեսված արժեքի և շուկայական արժեքի տարբերության մասով) ներառվում է նվիրատվությունների՝ սույն օրենքով սահմանված առավելագույն սահմանաչափում:<br>2. Կուսակցությանը տրվող նվիրատվության, ինչպես նաեւ անդամավճարի եւ մուտքի վճարի ընդհանուր չափը՝ դրամական արտահայտությամբ, մեկ տարվա ընթացքում չի կարող գերազանցել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի մեկ միլոնապատիկը, այդ թվում՝ մեկ ֆիզիկական անձի կողմից՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկը:<br>Սույն հոդվածով սահմանված՝ նվիրատվությունների առավելագույն սահմանաչափը չի ներառում Ազգային ժողովի ընտրությունների դեպքում նախընտրական քարոզչության ժամանակահատվածում մեկ ֆիզիկական անձի կողմից ընտրություններին մասնակցող (այդ թվում կուսակցությունների դաշինքի միջոցով) կուսակցությանը տրվող առավելագույնը նվազագույն | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | աշխատավարձի տասհազարապատիկի չափով գումար հանդիսացող նվիրատվությունները, համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների դեպքում նախընտրական քարոզչության ժամանակահատվածում մեկ ֆիզիկական անձի կողմից ընտրություններին մասնակցող (այդ թվում կուսակցությունների դաշինքի միջոցով) կուսակցությանը տրվող առավելագույնը նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափով գումար հանդիսացող նվիրատվությունները:<br>Ֆիզիկական անձը կարող է սույն մասի առաջին պարբերությունում նշված նվիրատվության առավելագույն սահմանաչափի շրջանակներում նվիրատվություն կատարել մեկ եւ ավելի կուսակցության:<br>Ֆիզիկական անձը կարող է սույն մասի երկրորդ պարբերությունում նշված չափերով նվիրատվությունները կատարել համապատասխան ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության:<br>3. Կուսակցությանը նվիրատվության կարգով տրվող անշարժ գույքի արժեքը չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի քսանհինգ հազարապատիկը: Կուսակցությանը նվիրատվության կարգով տրվող անշարժ գույքը չի | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կարող օտարվել նվիրատվության օրվանից առնվազն հինգ տարվա ընթացքում:<br>4. Նվիրատվություններ չեն թույլատրվում՝<br>1) օտարերկրյա պետություններից․<br>2) ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից, այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձանցից և միջազգային կազմակերպություններից․<br>3) պետական և համայնքային բյուջեներից և (կամ) արտաբյուջետային միջոցներից, բացառությամբ սույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն կատարվող ֆինանսավորման․<br>4) պետական և համայնքային կազմակերպություններից, պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններից․<br>5) անանուն անձանցից.<br>6) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանցից:<br>5. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը գերազանցող նվիրատվությունների ստացման դեպքում կուսակցությունը պարտավոր է ստանալուց հետո՝ իննսուն օրյա ժամկետում, կուսակցության համար սահմանված նվիրատվության, անդամավճարի կամ մուտքի վճարի սահմանված չափը գերազանցող մասը կամ նվիրատվությունն ամբողջությամբ վերադարձնել | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | նվիրատուին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոխանցել պետական բյուջե: Եթե սույն հոդվածով սահմանված նվիրատվությունը ոչ դրամական տեսքով է, ապա տվյալ գույքը կամ դրա շուկայական արժեքի չափով դրամական միջոցները նույն ժամկետում փոխանցվում են պետական բյուջե: Սույն մասով նախատեսված գործողությունների վերաբերյալ տեղեկատվությունը կուսակցությունը ներառում է կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացվող տարեկան հաշվետվությունում:<br>6. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված չթույլատրված նվիրատվությունների ստացման դեպքում կուսակցությունը պարտավոր է ստանալուց հետո՝ իննսուն օրյա ժամկետում փոխանցել պետական բյուջե: Եթե սույն հոդվածով սահմանված նվիրատվությունը ոչ դրամական տեսքով է, ապա տվյալ գույքը կամ դրա շուկայական արժեքի չափով դրամական միջոցները նույն ժամկետում փոխանցվում են պետական բյուջե: Սույն մասով նախատեսված գործողությունների վերաբերյալ տեղեկատվությունը կուսակցությունը ներառում է կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացվող տարեկան հաշվետվությունում:<br>7. Նվիրատվություն կատարող | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | անձինք պարտավոր են նշել իրենց անունը, ազգանունը, հանրային ծառայության համարանիշը կամ դրա բացակայության վերաբերյալ տեղեկանքը, անձը հաստատող փաստաթղթի համարը:<br>8. Կուսակցությանն օրենքով սահմանված դրամական հատկացումները կատարվում են միայն անկանխիկ:<br>9. Սույն օրենքի իմաստով՝ նվիրատվություն չեն համարվում կամավորների կողմից անձնական գույքի օգտագործմամբ (բացառությամբ տրանսպորտային միջոցների և անշարժ գույքի) կատարված աշխատանքը կամ ծառայությունների մատուցումը, ինչպես նաև տեղական կամ միջազգային համագործակցության շրջանակներում կուսակցությանն ու նրա անդամներին ուսումնառության, վերապատրաստման, համաժողովներին, սեմինարներին և նմանատիպ այլ միջոցառումներին մասնակցության նպատակով հատուցված համապատասխան ողջամիտ ծախսերը:<br>Սույն հոդվածի իմաստով՝ աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը չի համարվում կամավոր աշխատանք, եթե դրանց կատարման համար պահանջվում է որոշակի մասնագիտական որակավորում, դրանց դիմաց աշխատանք | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կատարողը կամ ծառայություններ մատուցողը այլ դեպքերում սովորաբար ստանում է հատուցում, և աշխատանքի կամ ծառայության մատուցման տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը: Այդ ծառայությունները համարվում են բնեղենով նվիրատվություն և ներառվում են նվիրատվությունների՝ սույն օրենքով սահմանված առավելագույն սահմանաչափում: | | |
| 5. | ***ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցություն*** | **Նախագծում լրացնել նոր հոդված** | Նախագիծը լրացնել նոր հոդվածով հետևյալ բովանդակությամբ<br>«Օրենքի Հոդված 26-ը վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ<br><br>Հոդված 26. Կուսակցությունների պետական ֆինանսավորումը<br>1. Կուսակցությունների պետական ֆինանսավորումը (պետական սուբսիդավորումը) իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ նպատակ ունենալով խթանելու որոշակի հանրային աջակցություն ունեցող կուսակցությունների կենսունակությունն ու ինքնուրույնությունը: Այդ ծախսերն արտացոլվում են պետական բյուջեում առանձին հոդվածով:<br>2. Պետական ֆինանսավորումը կազմված է երկու մասից՝ պետական ընդհանուր ֆինանսավորում և պետական խրախուսում: Յուրաքանչյուր տարվա համար | **Ընդունվել է մասնակի:**<br>Նախագծում կատարվել են որոշ հստակեցումներ նպատային ֆինանսավորման մասով և բարձրացվել է պետական ընդհանուր ֆինանսավորման տոկոսը: Առաջարկի մյուս մասերով Կառավարությունը նպատակահարմար չի գտնում փոփոխության իրականացումը այս փաթեթով և նախագծի քննարկման այս փուլում, հաշվի առնելով նաև, որ դրանք ամբողջությամբ չեն քննարկվել շահագրգիռ մարմինների, կուսակցությունների և քաղաքացիական | **Ընդունվել է մասնակի:** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | պետական ընդհանուր ֆինանսավորումը կուսակցություններին տրամադրվում է կիսամյակային սկզբունքով, բայց ոչ շուտ, քան Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կուսակցության տարեկան հաշվետվության ստուգումը: Պետական խրախուսումը յուրաքանչյուր տարվա համար տրամադրվում է միանվագ՝ սույն օրենքով սահմանված պայմանների բավարարման դեպքում:<br>3. Պետական ֆինանսավորում հատկացվում է այն կուսակցությանը, որի ընտրական ցուցակն Ազգային ժողովի վերջին ընտրությունների ժամանակ ստացել է քվեարկությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին կողմ տրված ձայների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի առնվազն երկու տոկոսը: Կուսակցությունների դաշինքի դեպքում պետական ֆինանսավորումը հատկացվում դաշինքի կուսակցություններին, եթե դաշինքը հաղթահարել է «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված ընտրական արգելապատնեշը: Պետական ֆինանսավորում չի հատկացվում այն կուսակցությանը կամ կուսակցությունների դաշինքում | հասարակության ներկայացուցիչների հետ: Բացի այդ ներկայացված չեն հիմնավորումներ առաջարկի անհրաժեշտության վերաբերյալ: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ընդգրկված կուսակցությանը, որի ակտիվների արժեքը, ըստ կուսակցության տարեկան հաշվետվության, գերազանցում է պետական բյուջեով տվյալ տարում բոլոր կուսակցությունների պետական ֆինանսավորման համար նախատեսված ընդհանուր գումարի հնգապատիկը:<br>4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված շեմը հաղթահարած յուրաքանչյուր կուսակցությանը հասանելիք ընդհանուր ֆինանսավորումը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.<br>1) 2-ից մինչև 5 տոկոս ձայներ ստանալու դեպքում՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափով՝ յուրաքանչյուր ձայնի դիմաց.<br>2) 5-ից մինչև 20 տոկոս ձայներ ստանալու դեպքում՝ մինչև 5 տոկոսի սահմաններում տրված յուրաքանչյուր ձայնի դիմաց՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափով, իսկ 5-ից մինչև 20 տոկոսի սահմաններում տրված յուրաքանչյուր ձայնի դիմաց՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի կեսի չափով.<br>3) 20 և ավելի տոկոս ձայներ ստանալու դեպքում՝ մինչև 5 տոկոսի սահմաններում տրված յուրաքանչյուր ձայնի դիմաց՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափով, 5-ից մինչև 20 տոկոսի սահմաններում՝ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | յուրաքանչյուր ձայնի դիմաց՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի կեսի չափով, իսկ 20 տոկոսը գերազանցող սահմաններում տրված յուրաքանչյուր ձայնի դիմաց՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի մեկ քառորդի չափով: 5. Պետական բյուջեում ընդհանուր ֆինանսավորման ծավալը հավասար է սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված շեմը հաղթահարած բոլոր կուսակցությունների (դաշինքների) սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված բանաձևի հաշվարկով ստացված թվերի հանրագումարին: 6. Պետական խրախուսման ընդհանուր ծավալը հավասար է սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ընդհանուր ֆինանսավորման ծավալի 30 տոկոսին: 7. Պետական խրախուսումը հատկացվում սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված շեմը հաղթահարած յուրաքանչյուր կուսակցությանը հետևյալ 2 բաղադրիչներով՝ 1) կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմում կանանց և տղամարդկաց հավասարակշիռ ներկայացվածության խրախուսում, երբ հաշվետու ժամանակահատվածում կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմում որևէ սեռի ներկայացուցիչների թիվը պակաս չէ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ղեկավար մարմնի անդամների ընդհանուր թվի 40 տոկոսից,<br>2) կուսակցության տարածքային ստորաբաժանումների գործունեության խրախուսում, երբ հաշվետու հաշվետու ժամանակահատվածում կուսակցությունն ունեցել է տարածքային ստորաբաժանումներ Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն կեսում:<br>8. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված շեմը հաղթահարած յուրաքանչյուր կուսակցությանը սույն հոդվածի 7-րդ մասի առաջին բաղադրիչով տրվող պետական խրախուսումը որոշվում է հետևյալ բանաձևով<br>(ՊԽ*0,5)/ԿԹ,<br>որտեղ ՊԽ-ն սույն հոդվածի 6-րդ մասում նախատեսված պետական խրախուսման ընդհանուր ծավալն է, ԿԹ-ն՝ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված շեմը հաղթահարած կուսակցությունների և դաշինքների ընդհանուր թիվն է:<br>9. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված շեմը հաղթահարած յուրաքանչյուր կուսակցությանը սույն հոդվածի 7-րդ մասի երկրորդ բաղադրիչով տրվող պետական խրախուսումը որոշվում է հետևյալ բանաձևով<br>((ՊԽ*0,5)/ (11*ԿԹ)* ԿՏՍ,<br>որտեղ ՊԽ-ն սույն հոդվածի 6-րդ մասում նախատեսված պետական | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | խրախուսման ընդհանուր ծավալն է, ԿԹ-ն՝ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված շեմը հաղթահարած կուսակցությունների և դաշինքների ընդհանուր թիվն է, ԿՏՍ-ն՝ հաշվետու ժամանակահատվածում գործունեություն իրականացրած կուսակցության (կուսակցությունների դաշինքների) տարածքային ստորաբաժանումների թիվն է:<br>10. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված շեմը հաղթահարած յուրաքանչյուր կուսակցությանը տրվող պետական խրախուսումը հատկացվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացության հիման վրա՝ յուրաքանչյուր տարի՝ վերջին եռամսյակի ընթացքում: Պետական խրախուսման համար որպես հաշվետու ժամանակահատված դիտարկվում է նախորդ տարվա 4-րդ եռամսակից մինչև տվյալ տարվա երրորդ եռամսյակի ավարտը:<br>11. Եթե կուսակցությունն իր գույքը հանձնում է վարձակալության կամ բանկային ավանդից ստանում է տոկոսներ կամ եկամուտներ է ստանում իր հիմնադրած զանգվածային լրատվության միջոցի կամ հրատարակչության գործունեությամբ, ապա հաջորդ տարում կուսակցությանը տրվող պետական ընդհանուր ֆինանսավորումը չի տրամադրվում, եթե վարձակալության, բանկային | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ավանդի կամ իր հիմնադրած զանգվածային լրատվության միջոցի կամ հրատարակչության գործունեությամբ ստացված և կուսակցությանը փոխանցված եկամտի չափը գերազանցում է տվյալ կուսակցությանը հասանելիք պետական ընդհանուր ֆինանսավորմը, ապա հաջորդ տարվա համար կուսակցության պետական ֆինանսավորման ծավալը:<br>14. Պետական ֆինանսավորման միջոցները կուսակցությունների ընտրական դաշինքին մասնակցող կուսակցությունների միջև բաշխվում են հավասարապես, եթե այլ բան նախատեսված չէ կուսակցությունների ընտրական դաշինքի որոշմամբ:<br>15. Սույն հոդվածով նախատեսված՝ կուսակցությունների պետական ֆինանսավորումն իրականացվում է տվյալ գումարման Ազգային ժողովի լիազորությունների ժամանակահատվածում և դադարեցվում Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտման օրը: Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտման ամսվա համար կուսակցության պետական ֆինանսավորման հաշվարկն իրականացվում, և ֆինանսավորումը փոխանցվում է ըստ օրերի քանակի՝ մինչև տվյալ գումարման Ազգային ժողովի լիազորությունների ավարտման օրը: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 16. Կուսակցության վերակազմակերպման, լուծարման պետական գրանցման օրվանից, ինչպես նաև կուսակցության գործունեության արգելման մասին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից պետական բյուջեի միջոցների հատկացումը դադարեցվում է:»: | | |
| 6. | ***ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցություն*** | **Փաթեթում լրացնել նոր նախագիծ**<br><br>**««Կուսակցություններ ի մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի 27-րդ հոդված** | Վերը նշված հատեքստում առաջարկվում է օրենսդրական փաթեթը լրացնել նոր օրենքով<br><br>««Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2020 թվականի դեկտեմբերի 29-ի ՀՕ-1-Ն սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 8-րդ մասում «2022 և 2023 թվականների համար» բառերը փոխարինել «2022, 2023, 2024 թվականների համար» բառերով:<br><br>**Հիմնավորում:** «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի փոփոխությունների նախագծի վերաբերյալ ներկայացվող առաջարկությունները բխում են ինչպես կուսակցությունների ազատ գործելու սահմանադրական երաշխավորություններից, այնպես էլ գործող օրենքի կիրառման ընթացքում ի հայտ եկած բազմաթիվ խնդիրներից: Նկատի են առնվել նաև | **Չի ընդունվել:** ՀՀ կառավարությունը նպատակահարմար չի գտնում առաջարկվող փոփոխության իրականացումը, բացի այդ ներկայացված առաջարկը չի բխում առաջին ընթերցմամբ ընդունված Նախագծերի փաթեթի բովանդակությունից: Հարկ է նշել, որ այլ առաջարկի հիման վրա վերանայվել է կուսակցությունների ընդհանուր տարեկան ֆինանսավորման տոկոսային չափը: | **Չի ընդունվել:** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | աշխատանքային քննարկման արդյունքները: Թեև այս քննարկումների ընթացքում ներկայացվել էր մոտեցում, որ յուրաքանչյուր կուսակցություն միայն մեկ բանկում ունենա հաշիվ, սակայն լրացուցիչ դիտարկումը ցույց է տալիս, որ դա կարող է սահմանափակել կուսակցության կողմից այլ բանկերից վարկային միջոցներ ներգրավելու կամ այլ բանկերում ավանդներ ներդնելու ունենալու կամ այլ բանկային ծառայություններից շուկայական պայմաններով ստանալու հնարավորությունները: Հարկ է նաև օրենքով նախատեսված սահմանափակումների առկայության դեպքում, քննարկել նաև կուսակցությունների կողմից իրենց աջակցող հիմնադրամների ստեղծման հնարավորությունները՝ շահերի հայտարարագրման կանոնների ամրագրմամբ: | | |
| **«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ** | | | | | |
| 1. | ***ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցություն*** | **Նախագծում լրացնել նոր կարգավորում** | Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 235-ը ուժը կորցրած ճանաչել:<br><br>**Հիմնավորում**: Առաջարկվող փոփոխությունը անհրաժեշտ է, քանի որ անհարկի չի կարող անձը քրեական հետապնդման ենթարկվել: Բացի այդ, կուսակցությունների մասին օրենքով արդեն իսկ նախատեսված է նման դեպքերում | **Չի ընդունվել:** ՀՀ կառավարությունը նպատակահարմար չի գտնում առաջարկվող փոփոխության իրականացումը, քանի որ օրենքով սահմանված սահմանափակումը և արգելքը պետք է ունենա | **Չի ընդունվել:** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | իրավական և փաստացի հետևանք, երբ սահմանված կանոնի համաձայն նման նվիրատվությունները հետ են վերադարձվում կամ փոխանցվում են պետական բյուջե: | համապատասխան սանկցիա՝ կանխելու նման սահմանափակումների և արգելքների խախտումը: Հայաստանի հետ համադրելի և զարգացող ժողովրդավարություններ համարվող մի շարք երկրների (Էստոնիա, Լատվիա, Լիտվա, Մոլդովա, Սերբիա, Ուկրաինա, Բուլղարիա) միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս վկայում է, որ այդ երկրներում կուսակցության նվիրատվության շեմի խախտումը քրեականացված է: Բացի այդ, առաջարկն ամբողջությամբ չի քննարկվել շահագրգիռ մարմինների, կուսակցությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: | |
| 2. | ***ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցություն*** | **Նախագծում լրացնել նոր կարգավորում** | Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 236-ի վերնագրից և 2-րդ մասից հանել «, ինչպես նաև հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելը» բառերը: | **Չի ընդունվել**: ՀՀ կառավարությունը նպատակահարմար չի գտնում առաջարկվող փոփոխության իրականացումը, բացի այդ | **Չի ընդունվել**: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **Հիմնավորում:** Առաջարկվող փոփոխությունը բխում է ինչպես սահմանադրությամբ երաշխավորված հավաքների ազատության սկզբունքից, այնպես էլ հիմնված է միջազգային լավագույն փորձի և երաշխավորությունների վրա: | ներկայացված առաջարկը չի բխում առաջին ընթերցմամբ ընդունված Նախագծերի փաթեթի բովանդակությունից: | |

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| **«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ** | | | | | |
| 1. | ***ՀՀ կառավարություն Ազգային ժողովի պատգամավոր Արուսյակ Մանավազյան*** | **Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետ** | Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «2) լրացնել նոր՝ 2-րդ մասով. «2. Ոչ ոք չի կարող հարկադրանքի որևէ եղանակով ընտրողից բացահայտել, թե ինչպես է ընտրողը մտադիր քվեարկելու կամ ինչպես է քվեարկել:»:<br><br>Առաջարկը հիմնավորում է հետևյալով . «հարկադրել» եզրույթը անհրաժեշտ է փոխարինել «հարկադրանքի որևէ եղանակով» եզրույթով, որը առավել լայն շրջանակի գործողություններ է ներառում իր մեջ: Բացի այդ | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | առաջարկվում է հանել «թեկնածուի, կուսակցության (կուսակցության դաշինքի) օգտին» ձևակերպումը, որովհետև բացահայտումն ըստ էության չի վերաբերում միայն որևէ կուսակցության (կուսակցության դաշինքի) կամ թեկնածուի օգտին քվեարկելուն, այլ քվեարկելուն ընդհանրապես: | | |
| 2. | ***ՀՀ կառավարություն Ազգային ժողովի պատգամավոր Արուսյակ Մանավազյան*** | **Նախագծի 4-րդ հոդված** | Նախագծի 4-րդ հոդվածի 5-րդ կետով օրենսգրքի 8-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 8-րդ մասի երկրորդ պարբերությունից հանել «հանրային տեսալսողական հեռարձակողի և հանրային լսողական հեռարձակողի եթերով և» բառերը:<br><br>Առաջարկը հիմնավորում է հետևյալով . Նախագծում ընտրողների համար հասանելի դարձվող տեղեկությունների շրջանակի հոդվածում թվարկված միջոցների շրջանակից հանվում են հանրային հեռարձակողների եթերները, քանի որ Ազգային ժողովի ընտրությունների դեպքում հիմնական միջոցառումների ժամանակացույցը պարունակում է 100-ից ավելի միջոցառում, իսկ Երևանի ավագանու և մյուս համամասնական ընտրակարգով տեղական ինքնակառավարման մարմինների մյուս ընտրությունների դեպքում՝ 80-ից ավելի, և Հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով այդ ծավալի տեղեկությունները (միջոցառում, կատարման ժամկետներ | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | և կատարողներ) հրապարակելը, ավելի ճիշտ ընթերցելը, այդքան էլ արդյունավետ և նպատակահարմար չէ: | | |
| 3. | ***ՀՀ կառավարություն Ազգային ժողովի պատգամավոր Արուսյակ Մանավազյան*** | **Նախագծի 4-րդ հոդված** | Նախագծի 4-րդ հոդվածի 8-րդ կետով Օրենսգրքի 8-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 11.1-ին մասում կատարել համապատասխան փոփոխություն, որով կնախատեսվի, որ տեսանկարահանված (տեսաձայնագրված) նյութերը արխիվացվում և պահպանվում են քվեարկությունից հետո հինգ տարի ժամկետով:<br>Նախագծի 4-րդ հոդվածի 8-րդ կետով Օրենսգրքի 8-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 11.1-ին մասում «Տեսանկարահանված (տեսաձայնագրված) նյութերն արխիվացնում և քվեարկությունից հետո հինգ տարի ժամկետով պահպանում է մասնագիտացված կազմակերպությունը» բառերը փոխարինել «Տեսանկարահանված (տեսաձայնագրված) նյութերն արխիվացվում և պահպանվում են քվեարկությունից հետո հինգ տարի ժամկետով»:<br><br>Առաջարկը հիմնավորում է հետևյալով .<br>Առաջարկվում է նոր ձևակերպում ի տարբերություն առկա կարգավորման, որի համաձայն՝ տեսանկարահանված (տեսաձայնագրված) նյութերն արխիվացնում և քվեարկությունից | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հետո հինգ տարի ժամկետով պահպանում է մասնագիտացված կազմակերպությունը: Առաջարկվող կարգավորմամբ քվեարկության ընթացքի և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի տեսանկարահանված (ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների դեպքում՝ տեսաձայնագրված) նյութերի արխիվացման և պահպանման իրականացումը վերապահված է ընտրված մասնագիտացված կազմակերպությանը, ինչը չի բխում ընտրական փաստաթղթերի, պարագաների և նյութերի արխիվացման և պահպանման համար Ընտրական օրենսգրքով սահմանված ընդհանուր մոտեցումից, ինչպես նաև նախատեսված չէ, թե մինչև ժամկետի ավարտը, եթե տվյալ կազմակերպության գործունեության դադարի ինչպես պետք է պահպանվեն այդ նյութերը, կամ ում և ինչ կարգով պետք է հանձնվեն: Ուստի առաջարկվում է սահմանել, որ տեսանկարահանված (տեսաձայնագրված) նյութերը պահպանվում են քվեարկությունից հետո հինգ տարի ժամկետով, որոնց արխիվացման կարգը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: | | |
| 4. | ***ՀՀ կառավարություն*** | **Նախագծի 6-րդ հոդված** | Նախագծի 6-րդ հոդվածի՝ 2-րդ կետով Օրենսգրքի 10-րդ հոդվածի նոր | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ***Ազգային ժողովի պատգամավոր Արուսյակ Մանավազյան*** | | խմբագրությամբ շարադրվող 3.1-ին մասում «40 օր և 20 օր առաջ» բառերը փոխարինել «40 օր առաջ, Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դեպքում՝ 20 օր առաջ» բառերով:<br><br>Առաջարկը հիմնավորում է հետևյալով․<br>Նախագծում կատարվում է շտկում՝ նշելով որ տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողների համար մատչելի ընտրական տեղամասերի ցանկը հրապարակում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 40 օր առաջ, Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դեպքում՝ 20 օր առաջ: Առկա տարբերակում բոլոր ընտրությունների դեպքում նշվում է, որ այդ տվյալները հրապարակվում են 40 և 20 օր առաջ, որում հաշվի չեն առնվել Նախագծով նախատեսվող նոր ժամկետային առանձնահատկությունները: | փոփոխություն: | |
| 5. | ***ՀՀ կառավարություն Ազգային ժողովի պատգամավոր Արուսյակ Մանավազյան*** | **Նախագծի 11-րդ հոդված** | Նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ կետով Օրենսգրքի 16-րդ հոդվածի 3-րդ մասում լրացվող բառերից հանել «նվազագույն կամ» բառերը:<br><br>Առաջարկը հիմնավորում է հետևյալով․<br>Նախագծով առաջարկվում է, որ ընտրական տեղամասը կազմավորման պահին չպետք է | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ունենա ավելի քան 2 200 ընտրող: Այս թիվը կարող է փոփոխվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ՝ համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի առաջարկությամբ, եթե ընտրական տեղամասի ընտրողների նվազագույն կամ առավելագույն թվի փոփոխությունն անհրաժեշտ է օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխանող տեղամասային կենտրոնի և քվեարկության սենյակի ընտրության նպատակով: Սակայն, ընտրական օրենսգրքով նշված իրավահարաբերությունների շրջանակում ընտրողների նվազագույն թիվ որևէ պարագայում չի սահմանվում, ուստի վրիպակը շտկվում է և հանվում է «նվազագույն կամ» բառերը: | | |
| 6. | ***ՀՀ կառավարություն Ազգային ժողովի պատգամավոր Արուսյակ Մանավազյան*** | **Նախագծի 17-րդ հոդված** | Նախագծի 17-րդ հոդվածի 6-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ. «6) 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. «4. Քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար անվճար վահանակներ առանձնացնելու մասին որոշումը 4 000 և ավելի ընտրող ունեցող համայնքի դեպքում համայնքի ղեկավարը ներկայացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով որոշումն ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում:»:»: | Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Առաջարկը հիմնավորում է հետևյալով . Նյութեր տեղադրելու համար անվճար վահանակներ առանձնացնելու վերաբերյալ դրույթը փոփոխվում է, նոր տարբերակում նշվում է, որ 4 000 և ավելի ընտրող ունեցող համայնքի դեպքում է անվճար վահանակներ առանձնացնելու մասին որոշումը համայնքի ղեկավարը ներկայացնում Կենտրոնական ընտրական հանձնաժողով: Գործող տարբերակում համայնքի ղեկավարը նույն պարտականությունը ունի 10 000 և ավելի ընտրող ունեցող համայնքների դեպքում: Ընտրական օրենսգրքի վերջին փոփոխությունների և համայնքների խոշորացման գործընթացների հաշվառմամբ տրամաբանական կլինի ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի կանոնակարգումները տարածել բոլոր այն համայնքների վրա, որտեղ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցկացվում են համամասնական ընտրակարգով՝ դրսևորելով միատեսակ մոտեցում համամասնական ընտրակարգով ընտրվող ավագանիներ ունեցող բոլոր համայնքների վրա: | | |
| 7. | ***ՀՀ կառավարություն*** | **Նախագծի 24-րդ հոդված** | Նախագծի 24-րդ հոդվածով օրենսգրքի նոր խմբագրությամբ | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ***Ազգային ժողովի պատգամավոր Արուսյակ Մանավազյան*** | | շարադրվող՝ 28-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետում «հայտարարագրին կցվելով կատարվելիք ծախսերը հավաստող փաստաթղթերի մասին տվյալներ» բառերը փոխարինել «հայտարարագրին կցելով ծախսերի կատարման անհրաժեշտությունը հավաստող փաստաթղթեր» բառերով:<br><br>Առաջարկը հիմնավորում է հետևյալով․<br>Օրենսգրքով նախատեսվում է, որ նախընտրական հիմնադրամների վերաբերյալ հայտարարագրերում նշվում են յուրաքանչյուր աշխատանքի, ծառայության, ապրանքի ձեռքբերման համար կատարվելիք ծախսերը՝ հայտարարագրին կցելով ծախսերի կատարման անհրաժեշտությունը հավաստող փաստաթղթեր: Առաջարկվել է առկա «հայտարարագրին կցվելով կատարվելիք ծախսերը հավաստող փաստաթղթերի մասին տվյալներ» բառերի փոխարեն կիրառել «հայտարարագրին կցելով ծախսերի կատարման անհրաժեշտությունը հավաստող փաստաթղթեր» բառերը: Առկա ձևակերպումն տարընթերցումների տեղիք կարող է տալ, ուստի իրավական տեսանկյունից ավելի ճիշտ և հստակ տարբերակն է նշելը՝ «հայտարարագրին կցելով ծախսերի կատարման անհրաժեշտությունը հավաստող | փոփոխություն: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | փաստաթղթեր»: | | |
| 8. | ***ՀՀ կառավարություն Ազգային ժողովի պատգամավոր Արուսյակ Մանավազյան*** | **Նախագծի 25-րդ հոդված** | Նախագծի 25-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ կետով.<br>«3) 6-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.<br>«2) բանկերից, կուսակցություններից և ապրանքներ մատակարարող, ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ կատարող այլ կազմակերպություններից ստանալ համապատասխան տեղեկություններ, տեղեկանքներ, փաստաթղթերի պատճեններ՝ նախընտրական քարոզչության շրջանակներում կատարված ծախսերի վերաբերյալ.»:<br><br>Առաջարկը հիմնավորում է հետևյալով.<br>Նախագծում լրացվում է նոր կարգավորում, որով Ընտրական օրենսգրքում Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության լիազորությունները առավել հստակեցվում են: Մասնավորապես նշվում է, որ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը բանկերից, կուսակցություններից և ապրանքներ մատակարարող, ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ կատարող այլ կազմակերպություններից կարող է ստանալ համապատասխան տեղեկություններ, տեղեկանքներ, փաստաթղթերի պատճեններ՝ նախընտրական քարոզչության | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | շրջանակներում կատարված ծախսերի վերաբերյալ: Առկա կարգավորմամբ նշվում է, որ նույն տեղեկությունները և փաստաթղթերը Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը կարող է ստանալ կուսակցությանը վճարված անդամակցության վճարների, կուսակցությանը կատարված նվիրատվությունների, բյուջետային ֆինանսավորման, քաղաքացիական իրավական գործարքներից ստացված դրամական միջոցների և օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերի և ծախսերի վերաբերյալ: 2020-2021 թվականների օրենսդրական բարեփոխումներից հետո կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը վերապահված է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է վերահսկիչ-վերստուգիչ ծառայության վերապահված լիազորությունը խմբագրել և սահմանել, որ այն ստանալում է տեղեկություններ միայն նախընտրական քարոզչության ֆինանսավորման շրջանակներում կատարված ծախսերի վերաբերյալ: | | |
| 9. | ***ՀՀ կառավարություն Ազգային ժողովի պատգամավոր Արուսյակ*** | **Նախագծի 26-րդ և 27-րդ հոդվածներ** | Նախագծի 26-րդ հոդվածով Օրենսգրքի 30-րդ հոդվածում լրացնել նոր 6-րդ մաս, որով նախատեսվում է, որ այցելուներին կարող է ուղեկցել թարգմանիչ: Նախագծի 27-րդ հոդվածով | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ***Մանավազյան*** | | Օրենսգրքի 31-րդ հոդվածում լրացնել նոր 7.1-ին մաս, որով նախատեսվում է, որ միջազգային դիտորդներին և այցելուներին ուղեկցող թարգմանիչներին վկայականներ տրամադրում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ներկայացրած հայտերի հիման վրա: Միաժամանակ քննարկվող հոդվածներում կատարել այլ վերաբերելի և կարգավորումներին փոխկապակցված փոփոխություններ:<br><br>Առաջարկը հիմնավորում է հետևյալով .<br>Այցելուի կարգավիճակով ընտրական գործընթացները դիտարկող անձանց սովորաբար թարգմանիչ է ուղեկցում: Սակայն քվեարկության օրը քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց կամ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների կողմից թարգմանչի ներկայությունը վիճարկելու դեպքում թարգմանիչները ստիպված պետք է լինեն դուրս գալ տեղամասից: Արդյունքում, խաթարվում է այցելուների՝ Ընտրական օրենսգրքով երաշխավորված իրավունքների իրացումը, ուստի խնդիրը կարգավորելու համար առաջարկվում է Օրենսգրքով այցելուների համար նախատեսել ուղեկցող թարգմանիչ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ունենալու հնարավորություն: | | |
| 10 | ***ՀՀ կառավարություն Ազգային ժողովի պատգամավոր Արուսյակ Մանավազյան*** | **Նախագծի 30-րդ հոդված** | Նախագծի 30-րդ հոդվածը 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ կետով. «3) 3-րդ մասում «անձինք» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիները» բառերով.», իսկ 3-րդ կետը լրացնել հետևյալ բառերով. «իսկ երրորդ նախադասության «դիմում ներկայացրած անձինք» բառերը փոխարինել «դիմում ներկայացրած քաղաքացիները» բառերով.», ինչպես նաև համապատասխանաբար փոխել նույն հոդվածի կետերի համարակալումը:<br><br>Առաջարկը հիմնավորում է հետևյալով .<br>Ընտրական օրենսգրքի որոշ հոդվածներում առկա ձևակերպումների տարբեր ընկալումներից խուսափելու համար առաջարկվում է հստակեցնել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից կազմակերպվող և անցկացվող մասնագիտական դասընթացների մասնակիցների, ընտրական հանձնաժողովների կազմում ընդգրկվող անձանց շրջանակը: | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |
| 11. | ***ՀՀ կառավարություն Ազգային ժողովի պատգամավոր*** | **Նախագծի 32-րդ հոդված** | Նախագծի 32-րդ հոդվածի 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ կետ.<br>«2) 1-ին մասը «կազմված է» բառերից հետո լրացնել «ոչ ավել, քան» | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ***Արուսյակ Մանավազյան*** | | բառերով և կետադրական նշանով»։<br><br>Նախագծի 32-րդ հոդվածում լրացնել նոր 4-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.<br>«4) 8-րդ մասի «որակավորման վկայականներ ստացած անձանցից» բառերը փոխարինել «որակավորման վկայականներ ստացած քաղաքացիներից» բառերով»։<br><br>Առաջարկը հիմնավորում է հետևյալով․<br>Ընտրական օրենսգրքի որոշ հոդվածներում առկա ձևակերպումների տարբեր ընկալումներից խուսափելու համար առաջարկվում է հստակեցնել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից կազմակերպվող և անցկացվող մասնագիտական դասընթացների մասնակիցների, ընտրական հանձնաժողովների կազմում ընդգրկվող անձանց շրջանակը։ | | |
| 12. | ***ՀՀ կառավարություն Ազգային ժողովի պատգամավոր Արուսյակ Մանավազյան*** | **Նախագծի 37-րդ հոդված** | Նախագծի 37-րդ հոդվածը «51-րդ հոդվածի» բառերից հետո լրացնել հետևյալ բառերով ու կետադրական նշաններով. «3-րդ մասում «իր» բառը փոխարինել «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի» բառերով, իսկ»։<br><br>Առաջարկը հիմնավորում է հետևյալով․<br>Օրենսգրքի 51-րդ հոդվածում | Ընդունվել է։ Կատարվել է համապատասխան փոփոխություն։ | Ընդունվել է։ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ձևակերպումը հստակեցվում է, նախատեսվում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներից որևէ մեկն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաղորդում է ներկայացնում Ազգային ժողով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության մասին: Մինչդեռ գործող տեքստում նշում է կատարվում «իր գործունեության» մասին:<br>Առաջարկվում է «իր» բառը փոխարինել «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի» բառերով, քանի որ Ազգային ժողովին պետք է հաղորդում ներկայացվի ոչ թե ԿԸՀ նախագահի, այլ ԿԸՀ գործունեության մասին: | | |
| 13 | ***ՀՀ կառավարություն***<br><br>***Ազգային ժողովի պատգամավոր Արուսյակ Մանավազյան*** | **Նախագծի 44-րդ հոդված** | Նախագծի 44-րդ հոդվածի 2-րդ կետում լրացնել նոր կարգավորում, որի համաձայն օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերության առաջին նախադասությունում «քվեարկությանը ներկա գտնվելու» բառերը փոխարինել «քվեարկության սենյակում ներկա գտնվելու» բառերով: Համապատասխանաբար նույն հոդվածում հաջորդող կետերի համարակալման հաջորդականությունը շտկել: | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Առաջարկը հիմնավորվում է հետևյալով. Ընտրական օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասում առկա է տեխնիկական վրիպակ՝ բացակայում է «սենյակում» բառը, որն առաջարկվում է շտկել: | | |
| 14. | ***ՀՀ կառավարություն*** <br><br> ***Ազգային ժողովի պատգամավոր Արուսյակ Մանավազյան*** | **Նախագծի 47-րդ և 49-րդ հոդվածներ** | Նախագծի 47-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «Հոդված 47. Օրենսգրքի 68-րդ հոդվածում՝ <br>1) 3-րդ մասի առաջին պարբերությունը «քվեարկության ծրարից հանում է քվեաթերթիկը» բառերից առաջ լրացնել «քվեարկության ծրարը մարելու հիմքերի բացակայության դեպքում՝» բառերով և կետադրական նշանով, ինչպես նաև «քվեաթերթիկը» բառից հետո լրացնել «, այն ցուցադրում այնպես, որ տեսանելի լինի ներկաների համար» կետադրական նշանով և բառերով, <br>2) 3-րդ մասի երկրորդ պարբերության առաջին նախադասությունը «հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեաթերթիկի սահմանված կամ չսահմանված նմուշի լինելու մասին» բառերից հետո լրացնել «սահմանված քվեաթերթիկի դեպքում՝» կետադրական նշանով և բառերով, <br>3) 3-րդ մասի երկրորդ պարբերության երկրորդ նախադասությունը հանել: <br>4) 3-րդ մասի երկրորդ պարբերության | Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | երրորդ նախադասությունը «Պահանջի դեպքում» բառերից հետո լրացնել «քվեարկության ծրարը կամ» բառերով,<br>5) 3-րդ մասի երկրորդ պարբերության չորրորդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.<br>«Հանձնաժողովի նախագահի հայտարարությանը համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամը ներկայացնում է առարկություն: Առարկության դեպքում քվեարկության է դրվում հանձնաժողովի անդամի առաջարկությունը, և առարկության ընդունման մասին որոշմանը համապատասխան, իսկ առարկությունը չընդունվելու կամ առարկություն չլինելու դեպքում՝ հանձնաժողովի նախագահի հայտարարության համաձայն, քվեարկության ծրարը մարվում է կամ քվեաթերթիկը դրվում է համապատասխան կուսակցության օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթի մեջ:»,<br>6) 4-րդ մասի առաջինից չորրորդ պարբերությունները շարադրել նոր խմբագրությամբ.<br>«Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների ժամանակ հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեաթերթիկի սահմանված կամ չսահմանված նմուշի լինելու մասին, սահմանված քվեաթերթիկի դեպքում՝ վավեր կամ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | անվավեր լինելու մասին: Վավեր քվեաթերթիկի դեպքում հայտարարում է նաև, թե որ թեկնածուի օգտին է քվեարկված: Պահանջի դեպքում քվեարկության ծրարը կամ քվեաթերթիկը փոխանցվում է հանձնաժողովի մյուս անդամներին: Հանձնաժողովի նախագահի հայտարարությանը համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամը ներկայացնում է առարկություն: Առարկության դեպքում քվեարկության է դրվում հանձնաժողովի անդամի առաջարկությունը, և առարկության ընդունման մասին որոշմանը համապատասխան, իսկ առարկությունը չընդունվելու կամ առարկություն չլինելու դեպքում՝ հանձնաժողովի նախագահի հայտարարության համաձայն, քվեարկության ծրարը մարվում է կամ քվեաթերթիկը դրվում է համապատասխան թեկնածուի օգտին քվեարկած քվեաթերթիկների փաթեթի մեջ, մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում՝ թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկված կամ անվավեր քվեաթերթիկների փաթեթի մեջ, որից հետո քվեատուփից հանում է հաջորդ ծրարը: Այդ գործողությունը կրկնվում է քվեատուփում առկա բոլոր ծրարների համար:<br>Ընտրություններին մասնակցող թեկնածուների օգտին քվեարկված քվեաթերթիկները, մեկ թեկնածու | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | քվեարկվելու դեպքում՝ դեմ քվեարկված քվեաթերթիկները և անվավեր քվեաթերթիկները տեսակավորվում են առանձին-առանձին:»,<br>7) 6-րդ մասը լրացնել նոր՝ երրորդ պարբերությամբ.<br>«Քվեարկության ծրարը մարվում է այնպես, որ վերահաշվարկի ժամանակ հնարավոր լինի հաստատել մարման հիմքի առկայությունը:»:<br><br>Նախագծի 49-րդ հոդվածի 2-րդ մասը հանել:<br><br>Առաջարկները հիմնավորվում են հետևյալով.<br>Առաջակվող փոփոխություններում առկա են հակասություններ, մասնավորապես՝ նշված հոդված 3-րդ մասով սահմանվում է. «Քվեարկության ծրարից քվեաթերթիկը հանելուց հետո քվեարկության ծրարում քվեաթերթիկից բացի այլ իրի առկայության հայտնաբերման պարագայում հանձնաժողովի նախագահը հանդես է գալիս այդ մասին հայտարարությամբ և քվեաթերթիկը դնում է ծրարի մեջ:», իսկ 7-րդ մասով էլ սահմանվում է. «Ավելորդ գրառում պարունակող, չսահմանված նմուշի կամ քվեաթերթիկից բացի այլ իր պարունակող քվեարկության ծրարների դեպքում քվեաթերթիկը | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ծրարից չի հանվում, քվեարկության ծրարն իր պարունակությամբ անհապաղ մարվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով:»: Նման մոտեցումը կարող է ձևավորել ընտրողի քվեն չհաշվարկելու նոր արատավոր պարկտիկա: Մինչդեռ, լավ պրակտիկան վկայում է ընտրական օրենսդրության կայունության, ընտրական բարձր մշակույթի առկայության և ընտրական գործընթացների և ընտրական հանձնաժողովների նկատմամբ հանրային վստահության մասին: Նման մոտեցումները կարող են հանգեցնել ընտրական գործընթացում սխալների, և կարող են պարունակել չարաշահման մեծ ռիսկեր, որոնք այս պահին կանխատեսել հնարավոր չէ: Ուստի առաջարկվում է նոր խմբագրությունը: | | |
| 15 | ***ՀՀ կառավարություն***<br><br>***Ազգային ժողովի պատգամավոր Արուսյակ Մանավազյան*** | **Նախագծի 73-րդ հոդված** | Նախագծի 73-րդ հոդվածի 6-րդ կետում «ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի» բառերը փոխարինել «ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի վերաբերյալ» բառերով, քանի որ գործող կարգավորման մեջ առկա է վրիպակ՝ «վերաբերյալ» բառը կրկնվում է: | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |
| 16 | ***ՀՀ կառավարություն***<br><br>***Ազգային ժողովի պատգամավոր Արուսյակ*** | **Նախագծում լրացվող նոր հոդված** | Նախագիծը լրացնել նոր հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ՝<br>«Օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել նոր՝ հետևյալ խմբագրությամբ. | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ***Մանավազյան*** | | «Ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամն ընտրողից վերցնում է քվեարկության կտրոնը, ընտրողների ցուցակում գտնում է ընտրողի տողը, ընտրողը ստորագրում է իր տվյալների դիմաց՝ ընտրողի ստորագրության համար նախատեսված սյունակում, հանձնաժողովի անդամն իր անհատական կնիքն է դնում համապատասխան սյունակում, որից հետո անհատական կնիքով կնքում է քվեարկության կտրոնը և այն փոխանցում ընտրողին:»:<br><br>Հիմնավորում՝ Նախագծում լրացվում է նոր փոփոխություն, որով նախատեսվում է, որ ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամն ընտրողից վերցնում է քվեարկության կտրոնը, ընտրողների ցուցակում գտնում է ընտրողի տողը, ընտրողը ստորագրում է իր տվյալների դիմաց՝ ընտրողի ստորագրության համար նախատեսված սյունակում, հանձնաժողովի անդամն իր անհատական կնիքն է դնում համապատասխան սյունակում, որից հետո անհատական կնիքով կնքում է քվեարկության կտրոնը և այն փոխանցում ընտրողին:<br>Գործող կարգավորումը տարընթերցման տեղիք է տալիս, ուստի անհրաժեշտ է հստակեցնել: Մասնավորապես՝ գործող | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կարգավորմամբ նշվում է, որ ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամն ընտրողից վերցնում է քվեարկության կտրոնը, ընտրողների ցուցակում գտնում է ընտրողի տողը, ընտրողը ստորագրում է իր տվյալների դիմաց՝ ընտրողի ստորագրության համար նախատեսված սյունակում և իր անհատական կնիքն է դնում համապատասխան սյունակում: | | |
| 17. | ***ՀՀ կառավարություն*** <br><br> ***Ազգային ժողովի պատգամավոր Արուսյակ Մանավազյան*** | **Նախագծի 84-րդ հոդված** | Նախագծով կատարվում է նոր փոփոխություն, որով Նախագծերի փաթեթը  ուժի մեջ է մտնելու 2025 թվականի ապրիլի 1-ից, իսկ այն կարգավորումները, որոնք վերաբերում են կուսակցությունների ֆինանսների նկատմամբ վերահսկողությանը 2025 թվականի հունվարի 1-ից: <br><br> Սույն փոփոխությունը պայմանավորված է նրանով, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին անհրաժեշտ է ողջամիտ ժամանակահատված փաթեթով նախատեսված փոփոխությունների արդյունքում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու համար: | Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ: | Ընդունվել է: |

| «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 18 | ***ՀՀ կառավարություն*** <br><br> ***Ազգային ժողովի պատգամավոր Արուսյակ Մանավազյան*** | **Նախագծում լրացնել նոր հոդված** | Նախագիծը լրացնել նոր կարգավորմամբ, որով Օրենքի 26-րդ հոդվածում նախատեսվում են հետևյալ փոփոխությունները.<br>1) 5-րդ մասում «60» թիվը փոխարինել «80» թվով,<br>2) 6-րդ մասում «40» թիվը փոխարինել «20» թվով,<br>3) 7-րդ մասի վերջին նախադասությունը հանել,<br>4) 8-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.<br>«Կուսակցությանը տրամադրվում է պետական նպատակային ֆինանսավորման մյուս կեսը, եթե կուսակցությունը հաշվետու տարում ունեցել է տարածքային ստորաբաժանումներ Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն կեսում:»,<br>5) 9-րդ մասը ուժը կորցրած ճանաչել,<br>6) 10-րդ մասը ուժը կորցրած ճանաչել,<br>7) 11-րդ մասում «7-9» թվերը փոխարինել «7-8» թվերով:»:<br><br>Առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախ վերջին տարիներին օրենսդիրը արդեն իսկ մի քանի անգամ չի կիրառել նպատակային ֆինանսավորման | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | չափանիշները կուսակցությունների համար: Պատճառն, ըստ էության, այն է, որ նպատակային ֆինանսավորման չափանիշները չնայած խրախուսական բնույթի են, բայց կարող են հանգեցնել կուսակցություններին հասանելիք պետական ֆինանսավորման մինչև 40 տոկոսով կրճատման, այնինչ արդյունքում կուսակցությունները ընտրությունների ընթացքում հասնելով հաջողության և քվեներ ստանալով ու մանդատներ ձեռք բերելով՝ զրկվում են ֆինանսավորման զգալի մասից, ինչը ազդում է եկամտի այլ էական աղբյուրներ չունեցող կուսակցությունների կենսունակությունն ու ինքնուրույնությունը: Ըստ այդմ՝ առաջարկվում է պարտադիր ֆինանսավորումը հասանելիք 100 տոկոսի շրջանակներում 60 տոկոսից դարձնել 80 տոկոս, իսկ մյուս 20 տոկոսը թողնել տարածքային ներկայացվածության և սեռերի քվոտային՝ որպես խրախուսական չափանիշներ:<br>Քննարկվող առաջարկները հանդիսանում են Ազգային ժողովում ներկայացված քաղաքական ուժերի համաձայնեցված դիրքորոշումների արդյունք: | | |
| | | | | | |
| **«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ** | | | | | |
| 1. | **ՀՀ *կառավարություն*** | **Նախագծի 2-րդ, 3-րդ, 69-րդ և 72-** | Նախագծից հանել 2-րդ, 3-րդ, 69-րդ և 72-րդ հոդվածները, որոնք վերաբերում | Ընդունվել է: Կատարվել են համապատասխան | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | **րդ հոդվածներ** | են ռազմական կամ արտակարգ դրության ընթացքում ընտրություններ նշանակելու և անցկացնելու արգելքին և ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո ընտրություններ նշանակելուն և անցկացնելուն: Միաժամանակ հանել Նախագծերի փաթեթից բոլոր փոխկապակցված կարգավորումները:<br>Նախագծի մյուս հոդվածների համարակալումը շտկել՝ ապահովելով համարակալման հաջորդականությունը:<br><br>Առաջարկը հիմնավորում է հետևյալով.<br>Մասնագիտական քննարկումների, կուսակցությունների հետ քննարկումների և հանրային լսումների ժամանակ հնչած դիտարկումների արդյունքում՝ առաջարկվել է ռազմական կամ արտակարգ դրության ընթացքում ընտրություններ նշանակելու և անցկացնելու արգելքին և ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո ընտրություններ նշանակելուն և անցկացնելուն վերաբերող կարգավորումները հանել Նախագծերի փաթեթից՝ դրանց հետագայում առանձին փաթեթով առավել համապարփակ լուծումներ տալու նպատակով: | փոփոխություններ: | |
| 2. | ***ՀՀ կառավարություն*** | **Նախագծում լրացնել նոր հոդված** | Նախագծում լրացնել նոր հոդված, որով նախատեսվում է.<br>«Օրենսգրքի 9-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել երրորդ նախադասությամբ՝ հետևյալ խմբագրությամբ. | Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | «Ազգային ժողովի հերթական ընտրությունների և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունների դեպքում լիազոր մարմինն ընտրողների ռեգիստրը՝ ըստ տեղամասերի, քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 41 օր և 7 օր առաջ, իսկ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դեպքում՝ 21 օր և 7 օր առաջ էլեկտրոնային եղանակով ներկայացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ հանձնաժողովի համացանցային կայքում որոնման հնարավորությամբ տեղադրելու համար:»:<br><br>Առաջարկը հիմնավորվում է հետևյալով .<br>Առկա է սույն կարգավարումը ընտրական օրենսգրքում նախատեսելու անրաժեշտությունը և կարգավորումը Օրենսգրքից հանելը հանդիսացել է տեխնիկական վրիպակ: | | |
| 3. | ***ՀՀ կառավարություն*** | **Նախագծի 56-րդ և 73-րդ հոդվածներ** | Նախագծի 56-րդ և 73-րդ հոդվածներից հանել կուսակցությունների կանոնադրությունների օրենսդրության պահանջներին համապատասխանելու վերաբերյալ տեղեկանքներին առնչվող կարգավորումները:<br>Միաժամանակ՝ քննարկվող հոդվածներում կետերի համարակալումը շտկել՝ ապահովելով դրանց հաջորդականությունը:<br>Նախագծերի փաթեթից հանել | Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը:<br><br>Առաջարկը հիմնավորում է հետևյալով.<br>Պետք է առաջնորդվել կուսակցությունների գործունեության իրավականության կանխավարկածով և ընտրություններից առաջ չծանրաբեռնել նրանց լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու պահանջով, ինչը կարող է արհեստական խոչընդոտներ ստեղծել ընտրություններին մասնակցելու գործընթացում: Ընդ որում, Վենետիկի հանձնաժողովը և ԺՀՄԻԳ-ը համատեղ կարծիքով արտահայտել են այն դիրքորոշումը, որ նշված պահանջը չափազանց ֆորմալիստական է, քանի որ լավ կառավարման սկզբունքի համաձայն բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը կամ տվյալները պետք է պահանջվեն անմիջապես իրավասու մարմիններից, և այդ տեղեկատվության փոխանցումը պետք է լինի ավտոմատ, այլ ոչ անհրաժեշտություն առաջացնելով քաղաքական կուսակցություններից պահանջել լրացուցիչ հիմնավորող փաստաթղթեր: Ավելին, կարծիքում անդրադարձ է կատարվել նաև հնարավոր հետևանքների բնույթին, և | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | արձանագրել, որ, օրինակ, աննշան թերությունների դեպքում թեկնածուների գրանցումից հանելը չի համապատասխանի համընդհանուր ընտրական իրավունքի և իրական ընտրությունների սկզբունքին: Ըստ այդմ, Վենետիկի հանձնաժողովը և ԺՀՄԻԳ-ն առաջարկել են, որ ԿԸՀ-ն ինքը պահանջի փաստաթղթերը այլ իրավասու կառույցներից և կարող է հանել թեկնածուների և կուսակցությունների ցուցակները, եթե ընտրություններին մասնակցելու բովանդակային չափանիշները չկատարվեն:<br><br>Այսպիսով, առաջարկվում է օրենսդրական կարգավորումներից հանել կուսակցությունների կանոնադրություններին օրենքով նախատեսված պահանջներին համապատասխանելու հարցը ընտրություններից առաջ ստուգելու վերաբերյալ դրույթները: Արդյունքում այդ պարտականությունը պետք է հանել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վրայից, ինչպես նաև չնախատեսել, որ դրա վերաբերյալ տեղեկանքը տրամադրում է Արդարադատության նախարարության գործակալությունը: | | |
| 4. | ***ՀՀ կառավարություն*** | **Նախագծի 5-րդ հոդված** | Առաջարկվում է Նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ կետում «նախադասության» բառը փոխարինել «նախադասությունից» բառով:<br>Առաջարկը պայմանավորված է | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | նկատված վրիպակը շտկելու անհրաժեշտությամբ: | | |
| 5. | **_ՀՀ կառավարություն_** | **Նախագծի 6-րդ հոդված** | Նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ կետով Օրենսգրքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին նախադասությունում «կարող են ընդգրկվել այն ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում» բառերը փոխարինել «կարող են ընդգրկվել այն ընտրական տեղամասի ըստ գտնվելու վայրի ընտրողների ցուցակում» բառերով:<br><br>Առաջարկը հիմնավորվում է կարգավորման մեջ ճիշտ շարադասության պահպանման նպատակով: | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |
| 6. | **_ՀՀ կառավարություն_** | **Նախագծի 15-րդ հոդված** | Առաջարկվում է Նախագծի 15-րդ հոդվածի 15-րդ կետով նոր խմբագրությամբ շարադրվող ՀՀ ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 11-րդ մասի երկրորդ նախադասությունում «մշակում և Ազգային ժողովի» բառերը փոխարինել «մշակում, Ազգային ժողովի» բառերով և կետադրական նշանով:<br>Առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ «և» շաղկապի առկայության դեպքում խախտվում էր նախադասության շարադասությունը: Տվյալ դեպքում առավել նպատակահարմար է «ստորակետ» կետադրական նշանի օգտագործումը: | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |
| 7. | **_ՀՀ կառավարություն_** | **Նախագծի 17-րդ հոդված** | Նախագծի 17-րդ հոդվածի 8-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝<br><br>«8) 8. Ընտրական հանձնաժողովի | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | որոշումը ստանալուց հետո համայնքի ղեկավարը և արտաքին գովազդային վահանակները (լուսադիոդային գովազդային վահանակներ) տնօրինող կազմակերպությունների ղեկավարներն ապահովում են, որ գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչված թեկնածուների, ընտրությունների մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութերը եռօրյա ժամկետում հանվեն:<br>Գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչված թեկնածուների, ընտրությունների մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութերը եռօրյա ժամկետում չհանվելու դեպքում դրանք հանում է համայնքի ղեկավարը՝ ոստիկանության աջակցությամբ:<br>Համայնքի ղեկավարը գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչված թեկնածուներից, ընտրությունների մասնակցող կուսակցություններից (կուսակցությունների դաշինքների) կարող է պահանջել իր կատարած ծախսերի փոխհատուցում:»:<br><br>Առաջարկը հիմնավորում է հետևյալով.<br>Նախատեսվում է վերացնել այն անհստակությունը, երբ Նախագծում առկա տարբերակով պարզ չէ, թե ով պետք է հանի խախտմամբ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | տեղադրված քարոզչական պաստառը, քարոզչական տպագիր և այլ նյութերը: | | |
| 8. | *ՀՀ կառավարություն* | **Նախագծի 17-րդ հոդված** | Նախագծի 17-րդ հոդվածի 9-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝<br><br>«9) 9-րդ մասի առաջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.<br>«Սույն հոդվածի դրույթների խախտմամբ տեղադրված քարոզչական պաստառը, քարոզչական տպագիր և այլ նյութերը համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշման հիման վրա հանում է համայնքի ղեկավարը՝ ոստիկանության աջակցությամբ: Սույն գործառույթը համայնքի ղեկավարի համար պատվիրակված լիազորություն է:»:<br><br>Առաջարկը հիմնավորում է հետևյալով.<br>Նախատեսվում է վերացնել այն անհստակությունը, երբ Նախագծում առկա տարբերակով պարզ չէ, թե ով պետք է հանի խախտմամբ տեղադրված քարոզչական պաստառը, քարոզչական տպագիր և այլ նյութերը: | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |
| 9. | *ՀՀ կառավարություն* | **Նախագծի 34-րդ հոդված** | Առաջարկվում է Նախագծի 34-րդ հոդվածի 1-ին կետում «հոդվածի» բառը փոխարինել «մասի» բառով:<br>Առաջարկը պայմանավորված է նկատված վրիպակը շտկելու անհրաժեշտությամբ: | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |
| 10 | *ՀՀ կառավարություն* | **Նախագծի 38-րդ հոդված** | Նախագծի 38-րդ հոդվածով լրացվող Օրենսգրքի 9.1-ին գլխում ներառված 55.2-րդ հոդվածի. | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 1) 1-ին մասում «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը» բառերը փոխարինել «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը» բառերով:<br><br>Առաջարկը պայմանավորված է կարգավորումը հստակեցնելու անհրաժեշտությունով:<br><br>2) 2-րդ մասի 1-ին կետը հանել:<br><br>Առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ խնդրո առարկա կետով նշված լիազորությունները դուրս են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործառույթների շրջանակից:<br><br>3) 2-րդ մասի 4-րդ կետում երկրորդ «քաղաքացիական ծառայության» բառակապակցությունից առաջ լրացնել «Կենտրոնական ընտրական հանձնաժողովում», բառերը, իսկ «, մրցութային հանձնաժողովի ձևավորման կարգը, աշխատակարգը» բառերը հանել:<br><br>Առաջարկը պայմանավորված է նշված կարգավորումը Ազգային ժողովի կողմից 2024թ.-ի դեկտեմբերի 3-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունված «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | լրացումներ կատարելու մասին» օրենքին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ: | | |
| 11. | **ՀՀ *կառավարություն*** | **Նախագծի 55-րդ հոդված** | Առաջարկվում է Նախագծի 55-րդ հոդվածի 1-ին կետում «նախադասությունը» բառը փոխարինել «պարբերությունը» բառով: Առաջարկը պայմանավորված է նկատված վրիպակը շտկելու անհրաժեշտությամբ: | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |
| 12 | **ՀՀ *կառավարություն*** | **Նախագծի 76-րդ հոդված** | Առաջարկվում է Նախագծի 76-րդ հոդվածի 3-րդ կետում «բառերը հանել» բառերից առաջ լրացնել «կետադրական նշանը և» բառերը: Առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ առաջարկվող փոփոխությամբ կարգավորումից հանվում է նաև կետադրական նշան: | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |
| 13 | **ՀՀ *կառավարություն*** | **Նախագծի 4-րդ, 9-րդ և 13-րդ հոդվածներ** | Նախագծի 4-րդ հոդվածի 5-րդ կետով Օրենսգրքի 8-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 8-րդ մասում․<br>1) «գրանցման ժամկետների, քվեարկության օրվա,» բառերից և կետադրական նշաններից հետո լրացնել «տեղի, ժամանակի,» բառերը և կետադրական նշանները,<br>2) «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հանրային տեսալսողական հեռարձակողի և հանրային լսողական հեռարձակողի եթերով ընտրողների համար հրապարակում է նաև տեղեկատվություն իրենց ընտրական տեղամասի համարի» բառերից հետո | Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | լրացնել « և տեղամասային կենտրոնի հասցեի» բառերով:<br><br>Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.<br>«1) 2-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.<br>«Ընտրողների նախնական ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, քվեարկության օրվանից 40 օր առաջ, Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դեպքում՝ 20 օր առաջ, իսկ ընտրողների վերջնական ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, քվեարկության օրվանից 7 օր առաջ տեղադրվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության համացանցային կայքերում՝ ներբեռնելու հնարավորությամբ:»:<br><br>Նախագծի 13-րդ հովածի 2-րդ կետը հանել:<br>Հաշվի առնելով, որ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի սեպտեմբերի 10-ի ՀՕ-335-Ն օրենքով ընտրական օրենսգրքի քննարկվող դրույթներում արդեն իսկ կատարվել են համապատասխան փոփոխություններ, որոնք ուժի մեջ են | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մտել 2024 թվականի սեպտեմբերի 10-ից, ուստի Նախագծում կատարվում են անհրաժեշտ փոփոխություններ: | | |
| 14 | ***ՀՀ կառավարություն*** | **Նախագծի 79-րդ հոդված** | Նախագծի 79-րդ հոդվածում կատարել փոփոխություններ, որի արդյունքում Օրենսգրքի 141-րդ հոդվածում նախատեսվում են հետևյալ կարգավորումները.<br><br>Նախագծի 79-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը շարարդրել նոր խմբագրությամբ.<br>«1) 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.<br>«6. Ընտրական ցուցակից ընտրվում է այն թեկնածուն, որի հերթական համարն ընտրական ցուցակում փոքր կամ հավասար է տվյալ ընտրական ցուցակին հասանելիք մանդատների թվին:<br>Եթե դրա արդյունքով կուսակցության մանդատների 70 տոկոսից ավելին բաժին է հասնում նույն սեռի ներկայացուցիչներին, ապա առավել շատ ներկայացված սեռի՝ 70 տոկոսը գերազանցող մանդատները տրամադրվում են ընտրական ցուցակի՝ պակաս ներկայացված սեռի նվազագույն համարով թեկնածուներին, եթե այդպիսիք առկա են՝ ապահովելով պակաս ներկայացված սեռի 30 տոկոսից ոչ պակաս ներկայացվածություն: Եթե ընտրական ցուցակում պակաս ներկայացված սեռի ներկայացուցիչներ չկան, ապա այդ մանդատները մնում են թափուր: Եթե | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների թիվը փոքր է հասանելիք մանդատների թվից, ապա համապատասխան մանդատները մնում են թափուր:<br>Երևանի ավագանու անդամ ընտրված թեկնածուների մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմում է արձանագրություն, իսկ համամասնական ընտրակարգով անցկացվող մյուս համայնքների ավագանու անդամ ընտրված թեկնածուների մասին արձանագրություն է կազմում համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը:<br>Երևանի ավագանու անդամ ընտրված թեկնածուների մասին արձանագրությունը՝ հնգօրյա ժամկետում, ուղարկվում է վարչապետին, իսկ համամասնական ընտրակարգով անցկացվող մյուս համայնքների ավագանու անդամ ընտրված թեկնածուների մասին արձանագրությունը՝ համապատասխան մարզպետին:<br>Արձանագրությունը կազմվում է ավագանի ընտրվելու մասին համապատասխան ընտրական հանձնաժողովի որոշման վիճարկման համար սահմանված ժամկետի ավարտին հաջորդող 5-րդ օրը, իսկ այդ որոշման վիճարկման դեպքում՝ համապատասխան որոշումն ընդունելու հաջորդող 5-րդ օրը:», | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 2) 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. «8. Մանդատից հրաժարված կամ ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը համապատասխան ընտրական հանձնաժողովի արձանագրությամբ այդ մասին հանձնաժողովին իրազեկելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, տրվում է այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուին, իսկ եթե դրա արդյունքում տվյալ խմբակցության որևէ սեռի ներկայացուցիչների թիվը նվազում է և արդյունքում ցածր է լինելու 30 տոկոսից, ապա տրվում է այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի նվազ ներկայացված սեռի հաջորդ թեկնածուին, եթե կա: Եթե ընտրական ցուցակում նվազ ներկայացված սեռի թեկնածուներ չկան, ապա այդ մանդատը մնում է թափուր:<br>Եթե ընտրական ցուցակում այլ թեկնածու չկա, ապա մանդատը մնում է թափուր:»<br><br>Առաջարկը հիմնավորում է հետևյալով. Ընտրական օրենսգրքի 141-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվում է, որ եթե մանդատների բաշխման արդյունքում կուսակցության մանդատների 70 տոկոսից ավելին բաժին է հասնում նույն սեռի ներկայացուցիչներին, ապա | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | առավել շատ ներկայացված սեռի՝ 70 տոկոսը գերազանցող մանդատները տրամադրվում են ընտրական ցուցակի՝ պակաս ներկայացված սեռի նվազագույն համարով թեկնածուներին, եթե այդպիսիք առկա են՝ ապահովելով պակաս ներկայացված սեռի 30 տոկոսից ոչ պակաս ներկայացվածություն: Այսինքն՝ համայնքի ավագանում պակաս ներկայացված սեռի առնվազն 30 տոկոսով ներկայացվածության պահանջը պարտադիր է այնքանով, որքանով տվյալ պահին ընտրական ցուցակում առկա են համապատասխան թեկնածուներ: Նման մոտեցումը հանգեցնում է զանգվածային ինքնաբացարկների կամ մանդատից հրաժարման, որի արդյունքում օրենքի պահանջը դառնում է զուտ ձևական, իսկ կանանց մասնակցությունը հասարակական և քաղաքական կյանքին՝ ոչ բավարար: Ուսումնասիրությունները վկայում են, որ 2021թ. 45 համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին ներկայացված 163 ընտրական ցուցակներից միայն 4-ն են գլխավորել կանայք: Վերջին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում ընտրվել են 1029 ավագանու անդամներ, որոնցից միայն 314-ն են հանդիսանում կանայք (30,5 %): Չնայած Ընտրական օրենսգրքով ընտրական ցուցակներին ներկայացվող 30 տոկոս քվոտային, ոչ բոլոր | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ավագանիներում է հնարավոր եղել ապահովել կանանց ներկայացվածությունը առնվազն 30 տոկոսով:Ընտրական գործընթացում գտնվող 45 համայնքներից 17 համայնքների ավագանիներում կանայք կազմել են 30 տոկոսից պակաս, որը հիմնականում պայմանավորված է եղել մանդատների նախնական բաշխումից հետո կանանց՝ մանդատից հրաժարմամբ: Խնդիրը նրանում է, որ եթե ընտրական ցուցակում այլ կին թեկնածուներ չկան, ապա մանդատը տրվում է հաջորդ տղամարդ թեկնածուին, եթե նույնիսկ դրանով խախտվում է կանանց 25% քվոտան: Ընդհանուր առմամբ, 163 ընտրական ցուցակներից 22-ի դեպքում (13,5%) գրանցվել են բոլոր կամ գրեթե բոլոր կանանց ինքնաբացարկի դեպքեր: 11 ընտրական ցուցակներից ինքնաբացարկ են հայտնել բոլոր կին թեկնածուները: | | |
| ***«Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ*** | | | | | |
| | | | | | |
| 15 | ***ՀՀ կառավարություն*** | **Նախագծի 3-րդ և 5-րդ հոդվածներ** | Նախագծում լրացնել նոր կարգավորում, որով | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածում լրացվում է հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ մաս, որի համաձայն Կուսակցություններն առնվազն տարեկան մեկ անգամ, մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 20-ը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին տրամադրում են տեղեկատվություն իրենց բանկային հաշվի մասին՝ նշելով բանկի անվանումը, հաշիվների համարները և արժույթը կամ արժույթները, որոնցով բացվել են բանկային հաշիվները: Կուսակցությունն այս տեղեկատվությունը անկախ սույն մասում նշված ժամկետից, ներկայացնում է նաև իր հաշիվները սպասարկող բանկի կամ հաշիվների վերաբերյալ արդեն իսկ ներկայացված տվյալները փոփոխվելու դեպքում՝ փոփոխության կատարման օրվանից 10 օրվա ընթացքում:<br><br>Նշված տեղեկությունները ներառել որպես կուսակցությունների հաշվետվություններում ներառվող տեղեկություն, ինչի արդյունքում կիրառելի կլինի նաև դրա չներկայացման համար վարչական պատասխանատվությունը:<br>Նախագծի 5-րդ հոդվածում լրացնել նոր 3-րդ կետ.<br>«3) 8-րդ մասում լրացնել նոր՝ 5-րդ կետ. | փոփոխություն: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | «5) կողմից ներկայացվող սույն օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված տեղեկությունները:»<br><br>Սույն առաջարկը հիմնավորվում է հետևյալով.<br>Կատարվող փոփոխության արդյունքում կբարձրանա կուսակցությունների ֆինանսների նկատմամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իրականացվող վերահսկողության արդյունավետությունը:<br><br>Նախագծում նախատեսել անցումային դրույթ, որով նախատեսվում է, որ այս տեղեկությունները առաջին անգամ ներկայացնելու պարտականությունը ծագում է 2025 թվականի հաշվետվությունները ներկայացնելիս:<br><br>Քննարկվող առաջարկները հանդիսանում են Ազգային ժողովում ներկայացված քաղաքական ուժերի համաձայնեցված դիրքորոշումների արդյունք: | | |
| 16 | ***ՀՀ կառավարություն*** | **Նախագծի 4-րդ հոդված** | Նախագծի 4-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.<br>«Հոդված 4. Օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.<br>«2. Կուսակցությանը տրվող նվիրատվության, ինչպես նաև անդամավճարի և մուտքի վճարի ընդհանուր չափը՝ դրամական | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | արտահայտությամբ, մեկ տարվա ընթացքում չի կարող գերազանցել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի միլիոնապատիկը, այդ թվում՝ մեկ ֆիզիկական անձի կողմից՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկը:<br>Սույն հոդվածով սահմանված՝ նվիրատվությունների առավելագույն սահմանաչափը չի ներառում նախընտրական քարոզչության ժամանակահատվածում նախընտրական հիմնադրամներին կատարված մուծումները:<br>Ֆիզիկական անձը կարող է սույն մասի առաջին պարբերությունում նշված նվիրատվության առավելագույն սահմանաչափի շրջանակներում նվիրատվություն կատարել մեկ և ավելի կուսակցության:»:<br><br>Առաջարկը հիմնավորվում է հետևյալով.<br>Կուսակցություններին կատարվող նվիրատվությունների շեմերը բարձրացվում են՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ քաղաքական դաշտի զարգացման նպատակով անհրաժեշտ է ընդլայնել օրինական հնարավորությունները կուսակցությունների համար իրենց գործունեությունը պատշաճ կազմակերպելու նպատակով ֆինանսներ ներգրավելու:<br>Ինչպես նաև, քանի որ փոխվում են | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կուսակցություններին կատարվող նվիրատվությունների շեմերը, ապա ընտրությունների ժամանակահատվածում դրանցից առավել չափով նվիրատվությունների կատարման անհրաժեշտությունը բացակայում է:<br>Քննարկվող առաջարկները հանդիսանում են Ազգային ժողովում ներկայացված քաղաքական ուժերի համաձայնեցված դիրքորոշումների արդյունք: | | |
| 17. | ***ՀՀ կառավարություն*** | **Նախագծում լրացնել նոր հոդված** | Նախագծում լրացնել նոր հոդված, որով՝<br>1) օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «բյուջետային» բառը փոխարինվում է «պետական» բառով.<br>2) օրենքի 23-րդ հոդվածի լրացնել նոր 6.1-ին կետ.<br>«6.1. Կուսակցությունը նվիրատվություններ, անդամավճարներ, մուտքի վճարներ և պետական ֆինանսավորում ստանալու նպատակով կարող է բանկային հաշիվներ ունենալ միայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործող՝ Կենտրոնական բանկի լիցենզավորած մեկ բանկում:»:<br><br>Սույն առաջարկը հիմնավորվում է նրանով, որ մեկ բանկում հաշիվներ ունենալը էականորեն կհեշտացնի կուսակցություններին կատարվող նվիրատվությունների, անդամավճարների և մուտքի վճարների սահմանչափերի | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | վերահսկման գործընթացը: Քննարկվող առաջարկները հանդիսանում են Ազգային ժողովում ներկայացված քաղաքական ուժերի համաձայնեցված դիրքորոշումների արդյունք: | | |
| 18 | ***ՀՀ կառավարություն*** | **Նախագծի 4-րդ հոդված** | Նախագծի 4-րդ հոդվածում լրացնել նոր 4-րդ կետ. 4) լրացնել նոր 15-րդ մաս. «15. Սույն օրենքի 23-րդ հոդվածի 6.1-ին մասում նախատեսված բանկը ամսական պարբերականությամբ կուսակցությանն է տրամադրում նվիրատվությունների, անդամավճարների և մուտքի վճարների վերաբերյալ տեղեկություններ, որոնք ներառում են կատարված նվիրատվությունների, անդամավճարների և մուտքի վճարների սահմանաչափերի վերաբերյալ տվյալներ, ինչպես նաև նվիրատվություն, անդամավճար կամ մուտքի վճար կատարող անձի անունը, ազգանունը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը, անձը հաստատող փաստաթղթի համարը:»:<br><br>Սույն առաջարկը հիմնավորվում է այն նպատակով, որ կուսակցությունները պետք է ունենան համապատասխան տեղեկություններ, որոնց միջոցով կարող են վերահսկել իրենց սահմանված չափից ավել | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | փոխանցված նվիրատվությունները: | | |
| 19 | *ՀՀ կառավարություն* | **Նախագծում լրացնել նոր կարգավորում** | Օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասում «ազգանունը» բառից հետո լրացնել «, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը» կետադրական նշանը և բառերը: | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |
| 20 | *ՀՀ կառավարություն* | **Նախագծում լրացնել նոր կարգավորում** | Օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.<br>«5. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը գերազանցող նվիրատվությունների ստացման դեպքում կուսակցությունը պարտավոր է ստանալուց հետո՝ իննսունօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան կուսակցության տարեկան հաշվետվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելը, կուսակցության համար սահմանված նվիրատվության, անդամավճարի կամ մուտքի վճարի սահմանված չափը գերազանցող մասը կամ նվիրատվությունն ամբողջությամբ վերադարձնել նվիրատուին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոխանցել պետական բյուջե:»:<br><br>Առաջարկը հիմնավորվում է այն | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հանգամանքով, որ նոր նախատեսվող ժամկետը համարվում է առավել ողջամիտ և նպատակահարմար պարտականության կատարման համար: Առաջարկը հանդիսանում է Ազգային ժողովում ներկայացված քաղաքական ուժերի համաձայնեցված դիրքորոշումների արդյունք: | | |
| **««Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանդրական օրենքի նախագծի** | | | | | |
| | ***ՀՀ կառավարություն*** | **նախագծի 4-րդ հոդված** | Հիմք ընդունելով այն, որ նախագծում «հաշվեհամար» եզրույթի փոխարեն օգտագործվում է միայն «հաշիվ» եզրույթը և նախագծի տեքստում մնացել է տեխնիկական վրիպակ, առաջարկում ենք Օրենքի 20-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 5-րդ մասի «հաշվեհամարներ» բառը փոխարինել «հաշիվներ» բառով: | **Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |
| **««Բանկային գաղտնիքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի** | | | | | |
| | ***ՀՀ կառավարություն*** | **նախագծի 2-րդ հոդված** | Հիմք ընդունելով այն, որ նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող կարգավորումները իրենց բովանդակությամբ կիրառելի են նաև «Տեղական հանրաքվեի մասին» օրենքի շրջանակներում կազմակերպվող և անցկացվող հանրաքվեների նկատմամբ, առաջարկում ենք լրացվող 13.6-րդ հոդվածի 2-րդ մասի «օրենքով» բառից հետո լրացնել «և «Տեղական հանրաքվեի մասին» օրենքով» բառերը: | **Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |
| **««Պետական տուրքի մասին» օրենքում լրացում եվ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի** | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **ՀՀ** ***կառավարություն*** | **Փաթեթից հանել նախագիծը** | Հիմք ընդունելով այն, որ Նախագծերի փաթեթից հանվել է «Նույնականացման քարտերի մասին» օրենքի նախագծում առաջարկվո փոփոխությունների նախագիծը և «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում նույնականացման քարտերին վերաբերող բոլոր կարգավորումները հանվել են, առաջարկում ենք օրենքի նախագիծը հանել փաթեթից: | **Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |
| **«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ** | | | | | |
| | **ՀՀ** ***կառավարություն*** | **Նախագծի 6-րդ հոդված** | Նախագծի 6-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.<br>«**Հոդված 6**. Օրենսգիրքը լրացնել նոր՝ 40.19-րդ հոդվածով.<br>«**Հոդված 40.19. Օրենքով սահմանված կարգի խախտմամբ կամ օրենքով չթույլատրված վայրում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելը կամ չհանելը**<br><br>1. Նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով նախատեսված ժամանակահատվածում օրենքով սահմանված կարգի խախտմամբ կամ օրենքով չթույլատրված վայրում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելը՝<br>առաջացնում է տուգանքի նշանակում՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ նվազագույն | **Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով, իսկ կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ՝ երեքհարյուրապատկից հինգհարյուրապատիկի չափով:<br>2. Նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով նախատեսված ժամանակահատվածում, օրենքով սահմանված կարգի խախտմամբ կամ օրենքով չթույլատրված վայրում տեղադրված քարոզչական պաստառը, քարոզչական տպագիրը և այլ նյութեր չհանելը՝<br>առաջացնում է տուգանքի նշանակում՝ ֆիզիկական անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձի նկատմամբ՝ երեքհարյուրապատկից հինգհարյուրապատիկի չափով:»:<br><br>Առաջարկը հիմնավորրվում է հետևյալով.<br>Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նախընտրական քարոզչական գործընթացի մասնակից են հանդիսանում կուսակցությունները և նրանց կողմից պետք է առավել պատասխանատվությամբ պահպանվեն նախատեսված կանոնները՝ առաջարկվում է | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ կիրառել առավել բարձր չափի վարչական տուգանք:<br>Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է պատասխանատվություն սահմանել նաև այն դեպքերի համար, երբ պատշաճ տեղեկացված անձինք չեն հանում օրենքի խախտմամբ տեղադրված քարոզչական պաստառը կամ այլ նյութը: | | |
| **«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ** | | | | | |
| | ***ՀՀ կառավարություն*** | **Վերնագիր** | Օրենքի նախագծի վերնագրից հանել «ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառերը | **Ընդունվել է:**<br>Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |
| | | **Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներ** | Օրենքի նախագծից հանել հանել Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածները՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ազգային ժողովի կողմից 2024թ.-ի դեկտեմբերի 3-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունված «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի համապատասխան դրույթներում կատարվում են փոփոխություններ, որոնք ներառում են սույն Նախագծով առաջարկվող կարգավորումները: | **Ընդունվել է:**<br>Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |
| | | **Նախագծի 4-րդ հոդված** | Նախագծի 4-րդ հոդվածում «2024 թվականի դեկտեմբերի 1-ից» բառերը | **Ընդունվել է:**<br>Կատարվել է | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | փոխարինել «2025 թվականի ապրիլի 1-ից» բառերով, ինչը պահմանավորված է նախագծի եզրափակիչ մասի պատշաճ կիրառումն ապահովելու նպատակով: | համապատասխան փոփոխություն: | |